




ՏՕՐԻՈՒԹԻՒՆ

1991
ԺԱ-ԺԲ





ԵՇՈՒԱԾԻՆ



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅՑ
Ա. ԵՇՈՒԱԾԻՆԻ

ԽՈՂԵՄՔՆԵՐ - ԻԵԼԻՐԵՄՔՆԵՐ

1991



ՀՐԱՄԱՆ ԱԻ

S. S. Վ. Ջ. Գ. Ե. Խ. Ա. Դ. Ա. Զ. Ն. Ո. Ց.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՁՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

191-91

17707-ԱԿ

1991 թվականին պատմական բարենպաստ շրջափոխությամբ հայ ժողովուրդը ունեցավ իր անկախի հանրապետությունը, դարձավ միջազգային հանրության լիիրավ անդամ։ Թեև ծանր են քաղաքական և տնտեսական պայմանները, սակայն հայ մարդու հոգին և հայացքը լի է վաղվա հույսով և պայծառ գալիքի հավատքով։ Այդ հավատքով էր, որ նա ազգովին գնաց դեպի ընտրական տեղամասերը ընտրելու իր հույսն ու հավատքը արդարացնող հանրապետության նախագահին։ Եվ ընտրվեց հայոց անկախ հանրապետության առաջին նախագահը ձայների բացարձակ մեծամասնությամբ և ժողովրդական խանդավառության պայմաններում։ Ազգը ընտրեց իր երիտասարդ, լրջախոն ու շրջահայց որդուն՝ Լևոն Տեր-Պետրոսյանին։

1991 թվականի նոյեմբերի 11-ին եռագույն դրոշներով գարդարված էր հայոց խորհրդարանը։ Հայաստանի Հանրապետության ազգընտիր նախագահը երդվում էր Աստծո և ազգի առաջ՝ լինել Հայրենիքի ու ժողովրդի անվտանգության և բարգավաճման երաշխավորը։ Հանդիսավոր արարողությանը իր օրհնության և բարեմաղթանքի խոսքը բերեց նաև Ամենայն Հայոց Վեհափոխ Հայրապետը։

S. S. ՎԱԶԳԻՆ Ա. ԿԱՐՈՂԻԿՈՍԻ ԽՕՍՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐԸՆՏԻՐ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Մեծայարդ Տիար Նախագահ,

Գոհուրժին Աստուծոյ ամենալավին որ Մեզ պարզնում է այս ամենման պահը, Մայր Արոռու Ս. Էջմիածնից բերելու Մեր յարգալիր ողջոյնը Ձերդ Գերազանցութեան, առաջին ազգընտիր նախագահիդ, Հայաստանի ինքնիշխան անկախ Հանրապետութեան։

Բազում դարերի մեր ազատատեաչ նախնեաց երազանքն է որ ահա պայծառ իրականութիւն է դառնում։

Մեր հայրենի քաջարի ժողովրդի, մեր հանրապետութեան խորհրդարանի ու կառավարութեան որդեգրած անկախութեան գործընթացը, իր լրումին է հասնում այսօր, Ձեր հանդիսաւոր երդման արարողութեամբ։

Բոլոր հայերը, ի Հայաստան և ի ափիու աշխարհի հոգևին այստեղ են գտնում մեր կողքին և տօնախմբում են այս պատմական պահը։ Վկայ է նաև սուրբ-գրական երկնամերձ մեր Արարատը։

Յարգարժան Տիար Նախագահ, ճշմարիտ է որ մենք բոլորս ցնութեամբ տօնախմբում ենք Ձերդ Գերազանցութեան գահակալումը, սակայն միաժամանակ գիտենք որ երդման այս արարողութիւնը հանդիսանում է նաև զոհաբերումի մի արարողութիւն։ Զի գիտակցում ենք թէ այս ժամից սկսեալ, ինչպիսի ծանրածանը պատասխանատություն էք ստանձնում, բոլորին ժա-

նօթ և բոլորս մտահոգող, մերօքեայ տագմապալի պալմաններում: Այո՛, մենք Չեզ զոհաբերում ենք Հայունիքի պատարագի սեղանի առաջ:

Մենք տարակոյս չունենք, որ Դուք աւելի ստուգոյթեամբ քան մենք, Չեր հոգու աչքերով տեսնում և ապրում էք Գողգոթայի Չեր ճանապարհը, պատրաստ դիմագրաւելու ամէն վտանգ, ամէն տառապանք, սրբազն մի պարտականութիւն կատարելու ազնի տեսիլքով:

Մենք քրիստոնեայ ենք և հաւատում ենք որ զոհաբերումով միայն կարելի է հասնել յաղթութեան:

Յանուն Հայատանեաց Սուրբ Եկեղեցու աղօթում ենք որ Չեր առաքելութեան ճանապարհը պակուի յաղթութեամբ:

Չեզ՝ Մեր յարգանքը, Մեր զօրակցումը, Մեր օրինութիւնը:

«Գիշերն մերժեցաւ և տիմ մերձեցաւ. ի բաց արացուր այս սովորու զգործսն խաւարի, և զգեցցուր զգենն լուսու»: (Հոռմ. ԺԳ. 12) Ամէն:


ՎԱԶԳԻՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ա. Էջմիածին,

11 Նոյեմբեր 1991 թ.





ԽՄԲԵԳՐԱԿԱՆ

Ի ՊԱՅՉԱՌՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ

Արդեն տասնկոր դար է, որ հայ ժողովրդի Մայր Եկեղեցին՝ Հայատանիաց Սուպելական Եկեղեցին, մեր Աստվածորդու օգնականությամբ ուղեկցում է մեր ազգի պատմությանը՝ կիսելով ժողովրդի ճակատագիրը՝ բարեքախտ և դառն օրերին, և միշտ ու հետևականորեն տեր կանգնելով այդ ճակատագրին, մանավանդ պատմության մոռյ ժամանակներում, երբ չենք ունեցել պատականություն, և կաթողիկոսական խորհրդանշից երկգլանի արծիվը արժանապատվությամբ ու անսակարկ նվիրումով կատարում էր հոգևոր և աշխարհիկ իշխանությանց պարտականությունը։ Հայատանիաց Սուպելական Սուրբ Եկեղեցին ամենազոր Փրկչի՝ «զինու հոգոյն արհացաւ» և հավատավոր իր հոտին հասցրեց վաղվա վառ արշալույսի հախատնակին՝ ի Հայատան աշխարհ։ Սակայն Մայր Եկեղեցին նաև ինքը ապրեց դատնության ու հաղածանքի օրեր, նաև վերջին 70 տարիներին, երբ Եկեղեցին գրեթե գրկեց գոյատեղու իրավունքից և ընդամենը հանդուրժվեց։ Բայց նոյնինիկ այդ պայմաններում Եկեղեցին անձնվեր հայրապետների առաջնորդությամբ իր մեջ գոյատեղու ուժ գտավ և այդ լույսայն, անհավասար պայքարում հաղթեց Աստուծոն խոսքը։ Մանավանդ վերջին 35 տարիներին Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի իմաստուն և շրջանաց գահակալությամբ մեր Մայր Եկեղեցին հետզհետև գորացավ, վերաշինվեց՝ հասնելու համար պայօնան բուռն զարթոնքին։

Տասնկոր դարեր իր գոյլությունը պահպանող Հայատանիաց Սուպելական Եկեղեցու համար մեր օրերին անհրաժեշտ էր ունենալ իր կառուցը կարգավորող մի նոր կանոնադրություն, որպեսզի կարողանար հալժու ու անարգել մատուցել իր ծառայությունը՝ հենված հին կանոնագրի, ավանդության ու նորանոչակ «խողի ազատության» օրենքի վրա։ Հայ Սուպելական Եկեղեցու կառուցը և գործունեությունը հաստատված են ամրախարիս երեք սյուների վրա՝ Նանոնակարգը, Ավանդությունը և Դավանանքը։ Դավանանքը երեք տիեզերական ժողովների վարդապետությունն էր՝ խարըսի ված Աստուծոն խոսքի, մանավանդ Նոր Կոտարածի վրա։ Ավանդությունը Եկեղեցու նվիրագործված կյանքն էր՝ սրբերի համատակությունն մինչև ազգային ավանդությունը։ Կանոնակարգը մարմնավորում էր Եկեղեցու կենացգայության սկզբունքները։ Այդ սկզբունքները տարբեր դարերում ձևակերպվեցին կանոնների ձևով և «Հայոց Կանոնագիրը» սահմանեց Եկեղեցու ժողովրդի հարաբերությունները մի կողմից, և հոգևոր ու աշխարհիկ իշ-

խանությանց փոխարաբերությունները՝ մյուս կողմից: Այդ կանոնակարգը սակայն չէր կարող մնալ քարացած, քանի որ Եկեղեցին ինքը ստիպված էր երբեմն տեղի տալ և երբեմն մեծ բովածք գործել՝ հայած թե պատմական ժամանակաշրջանը ինչ էր թելադրում, այդ պատճառով էլ կանոնակարգը շարձակ համապարփակ օրենք ողջ հայության համար:


Եղենից հետո, երբ հայ ժողովուրդը արտաքավեց իր հայրենիքից և կազմվեցին Սերձավոր Արևելքի և Եվրոպայի հայսկոծ գաղութները, առաջացավ Սիբիրոքը, և Եկեղեցին հայտնվեց նոր իրականության առաջ: Մեծանում էր տարրալուծման վտանգը, մանավանդ որ գիտակցական ու հետևողական աշխատանքով սահմանափակվում էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հնարավորությունները՝ գործելու իրրև գլուխ և կենտրոն Հայաստանյաց Սուարելական Ս. Եկեղեցու: Խորհրդային համակարգում այն նույնիսկ զրկված էր իրավական անձ լինելու իրավունքից և կարծես թե ապրում էր տարրերային գոյառության պայմաններում: Վիճակը բարեշրջության համաներ ցույց տվեց երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Այս հենքի վըրա է, որ պատմութունը հատկապես բարձր պիտի գնահատի Վազգեն Ա. Կաթողիկոսի գահակալությունը: Տնտեսական և քաղաքական ծանր պայմաններում ստանձնելով Ս. Գրիգոր Լուսավորչի գահի 130-րդ գահակալի պատվավոր պատասխանատվությունը, Վազգեն Ա. Վեհափառ եղավ այն իմաստուն կաթողիկոսը, որ հետզհետե, անշշմարելի հետևողականությամբ շունչ տվեց Եկեղեցու կյանքին՝ ճնշված թոքերով առավելագույնս շնչելու կարողությամբ՝ հասնելու համար այսօրվան լիաթոք կյանքին: Գահակալության հենց սկզբից Սմբեռայն Հայոց Հայրապետի համար մտասնեռում եղավ ըստեղծել Հայ Եկեղեցու կանոնական դրության մի համակարգ, որ ա. արտահայտեր պատմական իրավիճակը, բ. առավելագույնս նպաստեր Եկեղեցու միասնական կյանքին և գ. ընդունելի լիներ նվիրապետական բոլոր Աթոռների կողմից: Դժբախտաբար սակայն իրադարձություններն ու տարամետ ձգումները Եկեղեցու պարտադրեցին Եկեղեցուն անհարի պայմաններ և անհնար եղավ իրականացնել այդ նվիրական առավելությունը: Սակայն Վեհափառ մտահոգ էր Եկեղեցու գոնե ներքին կյանքի կազմակերպումով, մասնաւոր խորհրդային Միտրյան տարածքի վրա գտնվող երկրներում:

Բացվեց հույսի արշավույսը և ազգային հոգևոր ու քաղաքական զարթոնքի ալիքի վրա հետզհետե ուրվագծվում էր անկախ Հայաստանի պատկերը: Ժողովուրդը անհազ ծարավ ուներ վերադառնալու դեպի իր արմատները: Խոկ վերադարձի ճամփաս անցնում էր նախ և առաջ Եկեղեցու միջոց: Եկեղեցին հայտնվեց եռանդուն և համակարգված գործունեության հրամայականի առջև: Եվ ահա Վեհափառ Հայրապետի կողմից նշանակված հանձնաժողովը սրտեռանդ աշխատանքով մարմին տվեց «Հայաստանի Հանրապետության և Ներքին Սիբիրոքի տարածքի վրա գործող Հայաստանյաց Սուարելական Սուրբ Եկեղեցու» Կանոնադրության: Այն հիմնվեց Եկեղեցու ավանդության և Հայաստանի հանրապետության ընդունած «իշլի ազատության մասին» օրենքի վրա, որով և Եկեղեցին ճանաչվում էր իրեն իրավական ան: Եվ բազմակի քննարկումներից հետո ստեղծվեց ընդունելի այն տարրերակը, որը վավերացվեց Սմբեռայն Հայոց Հայրապետի բարձր տնօրինությամբ: Այն կիրառության մեջ է դրվում երեք տարվա փորձաշրջանով, որովհետև նոր պայմանները անպայմանորեն կթելադրեն փոփոխություններ:

Կատարված է ամենակարևոր բայլը, կա հիմքը, որի վրա հավատացած ենք, շուտով պետք է կառուցվի Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու ընդհանրական կանոնադրությունը։ Այսօր, եթե Հայաստանը անկախ հանրապետություն է, վերացած են Հայրենիքի և Սփյուռքի միջև ամենալայն և ազատ հարաբերությունների նախկին վարչակարգով պայմանավորված արգելքները, եթե առաջնային հրամայական է դարձել «մեկ ազգ, մեկ Եկեղեցի» տեսլականը, ավելի քան անհրաժեշտ է դառնում կյանքի կոչել Հայ Եկեղեցու ամբողջ կառուցի նվիրապետությունն ու գործունեությունը կանոնակարգող մի ընդհանրական կանոնադրություն՝ մեր օրերի պայմաններին ու պահանջներին համապատասխան։

Հուսանք, հավատանք ու մաղթենք, որ այս նոր կանոնադրությունը նույնապես կտնօրինի Ամենայն Հայոց Վազգեն Ա. Հայրապետը։





ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ՆԵՐՔԻՆ ՍՓՅՈՒՐՔԻ ՏԱՐԱԾՔԻ ՎՐԱ ԳՈՐԾՈՂ
ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ

Ն Ա Խ Ա Ծ Ա Վ Ի Ղ

Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին ամբողջությունն է Հայ ազգի քրիստոնյա հավատացալների, որոնք հավատարիմ են ճրա Սրբազն Ավանդությանը, ընդունում են ճրա դավանական ուսմունքը, խորհրդական ծեսերն ու կենցաղական կանոնները և ենթարկվում են ճրա Եվիրապետական իշխանությանը:

Հայաստանյաց Եկեղեցու դավանությունն ու վարդապետությունը հիմնված են Ս. Գրքի, Սրբազն Ավանդության, Տիեզերական Ա, Բ, Գ ժողովների, Հայաստանյաց Եկեղեցու ժողովների և Հայերի հաստատած կանոնների և ուսուցումների վրա: Նրա Սրբազն Ավանդության մասն է կազմում իր Կանոնագիրը, որի տրամադրություններից ճրանք, որ Եկեղեցական իշխանության կողմից ի գորու են դատվում, իրավական ուժ ունեն Եկեղեցու պաշտօնյաների և հավատացալների համար:

Հայաստանյաց Առաքելական Ս. Եկեղեցին Արևելյան Ուղարկան և ինքնիշխան պատմական Եկեղեցիներից մեկն է, հիմնված Քրիստոսի առքայլներից Ս. Թադեոսի և Ս. Բարդուղիմեոսի քարոզությամբ և նահատակությամբ: Նա պատշաճեն հաստատել և կազմակերպել է Ս. Գրիգոր Լուսավորչի առաքելությամբ և վաստակով Հայաստանում և ճրա առաքելաշավիդ Մայր Սրբող հիմնադրվել է քաղաքամայր Վաղարշապատում ի Ս. Էջմիածին 301 թ.-ին:

Հայաստանյաց Առաքելական Ս. Եկեղեցու մեջ «Մի, Սուրբ, Ընդհանրական և Առաքելական» Եկեղեցին արտահայտվում է ճշմարտապես: Նա անբաժան մասն է Քրիստոնեական Եկեղեցու ամբողջական մարմնի, որի գլուխն է Քրիստոս:

Հայաստանյաց Եկեղեցու վարչական կառուցքը ունի հետևյալ կարգը.
 Ընդհանրական Կաթողիկոսություն Ամենայն Հայոց
 Կաթողիկոսություն Մեծի Տան Կիլիկիո
 Պատրիարքություն Հայոց Երուաղեմի
 Պատրիարքություն Հայոց Կ. Պոլսի
 Առաջնորդությունը թեմերի
 Վաճական միաբանությունը
 Հովհանովությունը համայնքների:

Հայաստանյաց Եկեղեցին կառավարվում է Ս. Գրոց և Արքազան Ավանդության, Քրիստոսի Ընդհանրական Եկեղեցու ժողովների, Հայ Եկեղեցու ազգային-Եկեղեցական ժողովների և հայրապետների հաստատած կանոններով: Նա որդեգրել է Եկեղեցական կյանքի ղեկավարման ժողովրդավարական սկզբունքները և ժողովական դրությունը:

Մոտ ապագային կազմվելու է Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու կանոնադրությունը (Սահմանադրություն), որը համեստանալու է հիմնական օրենքը նրա նվիրապետական ամրողչական կառուցքի: Դրանից հետո սույն կանոնադրությունը ընդգրկվելու է հիմնական օրենքի մեջ որպես նրա բաղկացուցիչ մասը:

Հոդված 1

Հայաստանի Հանրապետության և ներքին սփյուռքի տարածքի վրա ապրող Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու հավատացյալները, հոգեվոր սպասավորները, իրենց վաճական, թեմական ու համայնքային կազմակերպություններով կազմում են Հայաստանյաց Առաքելական Ս. Եկեղեցու կառուցք մեկ մասը և ենթակա են Ամենայն Հայոց Կաթողիկոսի կանոնական իշխանությանը՝ ի Ս. Էջմիածնի:

Հոդված 2

Սույն կանոնադրությունը ի գործ է միայն Հայաստանի Հանրապետության և ներքին սփյուռքի մեջ գործող Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու կառուցքի մասերն են:

Հոդված 3

Հայաստանի Հանրապետության և ներքին սփյուռքի մեջ գործող Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու կառուցքի մասերն են.

ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը Մայր Սթոր Ս. Էջմիածնի մայրավանքը, որի անմիջական իշխանությանը ենթակա են այսօրվա դրությամբ Վաղարշապատի երեք վանքերը՝ Ս. Հոփիսիմե, Ս. Գայանե և Ս. Շողակար, ինչպես նաև Ս. Գեղարդի, Խոր Վիրապի, Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոցի վանքերը և Վաղարշապատի Ս. Աստվածածին Եկեղեցին:

բ. Արարատյան Հայրապետական թեմ

գ. Շիրակի թեմ

դ. Սյունյաց թեմ

ե. Գուգարաց թեմ

զ. Արցախի թեմ

է. Վրահայոց թեմ

ը. Աղրքեցանի Հայոց թեմ

թ. Նոր Նախիջևանի և Ուսաստանի Հայոց թեմ:

Հոդված 4

Հայաստանում և Անրքին սիյուռի տարածքի վրա գործող Հայաստան-յալց Առաքելական Եկեղեցու վարչական կառույցն է.

- ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս
- բ. Եպիսկոպոսաց ժողով
- գ. Գերագույն Հոգևոր Խորհրդորդ
- դ. Թեև
- ե. Վաճք
- զ. Եկեղեցական համալիք (ծովս):

Ա.—ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ**Հոդված 5**

Հայաստանյաց Առաքելական Ա. Եկեղեցու ամբողջության Գլուխը, Եպիսկոպոսապետը և բարձրագույն իշխանավորն է Ծայրագույն Պատրիարքը և Կաթողիկոսը Ամենայն Հայոց:

Հոդված 6

Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը հաստատված է ի Ա. Էջմիածին, որը Մայր Արքուն է Հայոց Ընդհանուրական Հայրապետության և Կենտրոնը Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու նվիրապետութան:

Հոդված 7

Ամենայն Հայոց Կաթողիկոսի իրավասությունները հաստատվել ու ավիրագործվել են Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու կանոններով ու դարավոր ավանդությամբ:

Հոդված 8

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ընտրվում է ցկան Հայ Առաքելական Եկեղեցու ազգային-Եկեղեցական ժողովի կողմից Ա. Էջմիածնի Մայր տաճարում, համաձայն համապատասխան կանոնադրության:

Հոդված 9

Ամենայն Հայոց Կաթողիկոսի վախճանումի պարագային, Մայր Արքունի երիցագույն Արքեպիսկոպոսը կամ Եպիսկոպոսը խառն ժողովի է հրավիրում Գերագույն Հոգևոր Խորհրդին և Եպիսկոպոսական ժողովին, որոնք ընտրում են Կաթողիկոսական Տեղապահ:

Կաթողիկոսական Տեղապահը վարում է Կաթողիկոսարանի ընթացիկ գործերը, կազմակերպում է նոր Կաթողիկոսի ընտրությունը և նախագահում է Ազգային-Եկեղեցական ժողովին, որը ընտրում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին, համաձայն համապատասխան կանոնադրության:

Հոդված 10

Ամենայն Հայոց Կաթողիկոսը վաճառակար է Ա. Էջմիածնի մայրավանքի:

Հոդված 11

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Աերկայացնում է Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու վերին իշխանությունը՝ Հայաստանի Հանրապետության պետական իշխանությանց առջև: Նա նաև Աերկայացնում է Հայաստանյաց Եկեղեցին այլ պետությունների և միջազգային կազմակերպությունների առաջ, անձամբ կամ իր Աերկայացուցիչների միջոցով:

Հոդված 12

Ամենայն Հայոց Կաթողիկոսը առաջնորդն է Արարատյան Հայրապետական թեմի և այն դեկապարում է իր նշանակած առաջնորդական փոխանորդի միջոցով:

Հոդված 13

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հրավիրողն է և նախագահը եպիսկոպոսաց ժողովի, Գերագույն Հոգեոր Խորհրդի և այլ ժողովների:

Հոդված 14

Ամենայն Հայոց Կաթողիկոսի իրավունքն է ըստ անհրաժեշտության նոր թեմեր ստեղծել, գոյություն ունեցող թեմերը մասերի բաժանել, տկարացած թեմերը լուծել և կամ տարբեր թեմեր իրար միացնել:

Հոդված 15

Ամենայն Հայոց Կաթողիկոսը պաշտոնական հարաբերությունների է մըշակում Քրիստոնեական Եկեղեցների և Կենտրոնների հետ, անձամբ կամ իր Աերկայացուցիչների միջոցով:

Հոդված 16

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ի հարկին մասնավոր առաքելությամբ Հայրապետական պատվիրակներ կամ նվիրակներ է ուղարկում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի իրավասության ներքո գտնվող թեմերն ու համայնքները:

Հոդված 17

Վեհափառ Կաթողիկոսը, խորհրդակցաբար Եպիսկոպոսական ժողովի և ԳՀԽ-ի հետ, խառն հիստոր բարձրաստիճան հոգևորականներից կարող է նշանակել մեկ կամ ավելի կաթողիկոսական փոխանորդներ, ճշտելով նրանց պարտականությունները և պաշտոնավարության ժամկետները:

Բ.—ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ ԺՈՂՈՎ**Հոդված 18**

Եկեղեցականորեն եպիսկոպոսները հաջորդներն են Հիսուս Քրիստոսի առաքյալների՝ ձեռնադրությամբ և օծմամբ նրանց բաշխված Ս. Հոգու ըրբորիներով: Նրանք որպես հավատացյալ ժողովրդի հովիվներն ու առաջնորդները հսկում են քրիստոնեական վարդապետության ուղիղ ուսուցմանը և սրբազն պաշտամունքների կանոնավոր կատարմանը: Նրեւ գոյխավոր պաշտոնյաներ նրանք դեկապարում են իրենց թեմի եկեղեցական վարչական գործերը:

Յուրաքանչյուր հպիսկոպոս իր ձեռնադրության առջիվ համդիսավոր ուստ է կատարում և խոստանում հավատարիմ մնալ Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու դավանությանը, կանոններին և վերին իշխանությանը:

Հոդված 19

Հայաստանի Հանրապետության և Անդրբին ափյուռքի տարածքի վրա պաշտոնավարող հպիսկոպոսները կազմում են Եպիսկոպոսաց տեղական ժողովը Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահության ներքո:

Հոդված 20

Եպիսկոպոսական տեղական ժողովը Ամենայն Հայոց Կաթողիկոսին առընթեր կամունական մարմին է, որը գրադրում է Անդրբին թեմերից եկած հարցերով:

Հոդված 21

Եպիսկոպոսաց ժողովը նիստի է Բրավիրվում Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմից: Ժողովը ընտրում է իր Ատենապետին և Ատենապրին իրենց փոխանորդներով:

Հոդված 22

Եպիսկոպոսաց ժողովը կարող է, ի պահանջել հարկին, կազմել հաճախամբեր, որոնց անդամները կարող են լինել նաև վարդապետ, քահանա կամ աշխարհական, հասուկ հարցերի ուսումնասիրությանց համար: Հաճախամբի անդամները, բացի Եպիսկոպոսաց ժողովի անդամներից, բվեի իրավունք չունեն:

Հոդված 23

Եպիսկոպոսաց ժողովը նիստի է Բրավիրվում նվազագույնը երեք ամիս սր մեկ անգամ:

Հոդված 24

Եպիսկոպոսաց ժողովը քննարկում է Անդրբին թեմերից Անդրկայացված կրոնական, եկեղեցական, կարգապահական, վարչա-կազմակերպչական, կրթական, քարոզչական, մշակութային, տնտեսական հարցեր: Որոշումները առնվում են բվեների մեծամասնությամբ և Անդրկայացվում են Ամենայն Հայոց Կաթողիկոսին ի հաստատումն և ի գործադրումն:

Գ.—ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՃՈՒՐԴ

Հոդված 25

Գերագոյն Հոգենոր Խորհուրդը Ամենայն Հայոց Կաթողիկոսի խորհրդաստ մարմին է: Նրա քննարկմանն են ենթարկվում վարչա-կազմակերպչական, մշակութային, ինչպես նաև արտասահմանի եկեղեցական և ազգային, տնտեսական, շինարարական և քարեփական հարցեր:

Հոդված 26

Գերագոյն Հոգենոր Խորհրդի նախագահն է Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Գերագույն Հոգևոր Խորհրդից իր ամեամ եպիսկոպոսներից մեկն ընտրում է որպես առևնապետ և իր ամեամ եկեղեցականներից կամ աշխարհականներից մեկն ընտրում է առևնադպիր՝ մեկ տարվա շրջանի համար:

Հոդված 27

Գերագույն Հոգևոր Խորհրդի նետ Խորհրդակցարար Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշանակում է հանձնախմբեր՝ որոց հարցերի քննարկման և նրանց մասին տեղեկագրի պատրաստման համար:

Հոդված 28

Գերագույն Հոգևոր Խորհրդի քննարկմանը ենթարկված հարցերի մասին վերջնական որոշումը կայացնում և գործադրում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Հոդված 29

Գերագույն Հոգևոր Խորհրդի կազմը բաղկանում է 10 ամեամներից.

2 եպիսկոպոս արտօնամանի թեմերից,

5 եպիսկոպոս ներքին թեմերից, որոնցից

երեքը նշանակվում են Վեհափառ Հայրապետի կողմից

և երկուը ընտրվում են Սպիտակոպանական ժողովի կողմից,

3 աշխարհական ներքին թեմերից:

Հոդված 30

ԳՀԽ-ի ամեամները նրավիրվում են Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից 4 տարվա շրջանի համար:

Հոդված 31

Ամենայն Հայոց Կաթողիկոսը խորհրդակցարար ԳՀԽ-ի նետ նշանակում է Վերստուգիչ Հանձնաժողով, բաղկացած 1 եկեղեցական և 2 աշխարհական հաշվապահ մասնագետներից:

Վերստուգիչ հանձնաժողովի պարտականությունն է վերաբնիկել Մայր Ստոռոյի տնտեսա-ֆինանսական գործունեությանը և տարեկան տեղեկագրի ներկայացնել ԳՀԽ-ին:

Հոդված 32

Խորհրդակցարար ԳՀԽ-ի նետ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նրավիրում է ճարտարապետական հանձնաժողով բաղկացած 5 ճարտարապետներից և արվեստագետներից:

Ճարտարապետական հանձնաժողովի պարտականությունն է քննարկել Մայր Ստոռոյի և ներքին թեմերում գտնվող վանքերի ու եկեղեցիների վերահնուրժյան, ինչպես նաև նոր կառուցվող եկեղեցիների և հարակից շենքերի նախագծերը:

Հայաստանի պատմական հուշարձանների վերանորոգության պարագային ճարտարապետական հանձնաժողովը խորհրդակցում է Հայաստանի հնությունների պահպանության վարչության նետ:

Ճարտարապետական հանձնաժողովը իր եղբակացությունները ներկայացնում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Դ.—Ս. Է ԶՄԻԱԾՆԻ ՎԱՐՉԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑԸ

Հոդված 33

Ս. Էջմիածնի մայրավանքը Ամենայն Հայոց Կաթողիկոսության կենտրոն է:

Հոդված 34

Իբրև վաճք, այն ունի իր վանքարձակ միարամությունը, որ դեկավար-դապետները և սարկավագները: Միարաներից յուրաքանչյուրը պարտավոր է կատարել իր կրոնական պարտականությունները՝ պաշտամունք, ծես, պատարագ և այլն, համաձայն լուսարարապետի կարգադրության:

Հոդված 35

Միարամության մաս են կազմում վանքարձակ եպիսկոպոսները, վարդապետները և սարկավագները: Միարաներից յուրաքանչյուրը պարտավոր է կատարել իր կրոնական պարտականությունները՝ պաշտամունք, ծես, պատարագ և այլն, համաձայն լուսարարապետի կարգադրության:

Հոդված 36

Յուրաքանչյուր միարան վանքից ստամում է բնակարան, սնունդ, բժշկական խճամբ, զգեստ և ամսական ռոճիկ:

Հոդված 37

Մայր Աթոռի և նրա ենթակա վանքերի մեջ ծառայող միարանը և կամ այլ նոգենորականը, որ գտնվում է անկարգ ընթացքի մեջ, կարգի է նրավիրվում Վեհափառ Հայրապետի կողմից բանավոր նկատողությամբ: Եթե նա շարունակի իր անկանոն ընթացքը, կատանա գրավոր նկատողություն: Եթե նա մատանի իր անկարգության մեջ, նա ենթարկվում է պաշտոնագրիման:

Իսկ ծայրամեջ պարագայում, Վեհափառ Հայրապետը տնօրինում է կարգագրկումը:

Հոդված 38

Թեևներում և նրանց ենթակա վանքերում ծառայող նոգենորականը, որ գտնվում է անկարգ ընթացքի մեջ, կարգի է կոչվում թեմակալ առաջնորդի կողմից բանավոր նկատողությամբ: Եթե նա շարունակի իր անկանոն ընթացքը, կատանա գրավոր նկատողություն: Եթե ամբարձություն: Եթե ամբարձությունը նամատի իր անկարգ ընթացքի մեջ, առաջնորդը, խորհրդակցաբար Թեմական Խորհրդի ներ տնօրինում է նարմար պատիճ՝ պաշտամագրիում կամ փիլոնագրիում: Առաջնորդը ներկայացնում է Թեմական Խորհրդի որոշումը Վեհափառ Հայրապետին:

Բացառվում է կարգագրիման որոշումը, որը տրվում է միայն նայրապետական վճռով:

Հոդված 39

Կաթողիկոսարանը ունի նևույալ կազմակերպչական կառույցը, որի մասին են նևույալները.

ա. Միարամություն,

բ. Մայր տաճարի լուսարարապետություն,

գ. Դիվանատուն,

- դ. Հոգևոր Ծեմարան,
- ե. Քրիստոնեական քարոզչական կենտրոն,
- զ. «Եջմիածին» ամսագրի խմբագրություն,
- է. Թանգարանների տեսչություն,
- լ. Հրատարակչական տեսչություն,
- թ. Տպարանի Վարչություն,
- ժ. Տնտեսա-ֆինանսական վարչություն,
- Ժա. Ծինարարական գրասենյակ,
- Ժբ. Փոխադրության միջոցների բաժին,
- Ժզ. Կողմանական տեսչություն,
- Ժդ. Մատակարարություն:

Հոդված 40

Վաճական կառուցի մաս կազմող յուրաքանչյուր մարմին ունի իր պատասխանատու տեսուչը:

Կաթողիկոսարանի մայրավանքի կառուցի մաս կազմող յուրաքանչյուր մարմին պատասխանատուն Աշաճակվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից՝ խորհրդակցարք ԳՀԽ-ի նետ:

Հոդված 41

Լուսարարապետի պաշտոնն է նևկել ու ղեկավարել Մայր տաճարի սրբազն արարություններին, որպեսզի նրանք կատարվեն անթերի կերպով, ըստ կանոնաց և կարգաց Ս. Եկեղեցվույս:

Լուսարարապետի պաշտոնն է նաև կազմակերպել ու նետել Մայր տաճարի մաքրությանը, գույքերի ապահով պահպանմանը և ներքին կարգապահությանը:

Լուսարարապետը ունի իր օգնականը համձին վարդապետ լուսարարի:

Լուսարարապետին ողղակի ենթարկվում են Մայր տաճարի և Մկրտարանի բոլոր ծիսակատար քահանաներն ու աշխատողները, ինչպես նաև դերձակատունը և արձագագործական արթեստանոցը:

Հոդված 42

Վաճորեց տեսչությունը կազմված է բոլոր վանքերի վաճառայրերից Ամենայն Հայոց Կաթողիկոսի իշխանության ներքո:

Վաճորեց տեսուչը Աշաճակվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից խորհրդակցարք Եպիսկոպոսական ժողովի նետ և գործում է նրանց ցուցմունքների համաձայն:

Բոլոր վաճառայրերը Աշաճակվում են Ամենայն Հայոց Հայրապետի կողմից:

Հոդված 43

Հոգևոր Ծեմարանի ուսումնական, դասարակական, կարգապահական և վարչական գործունեության ղեկավարն ու պատասխանատուն Ծեմարանի տեսուչն է՝ իրեն օգնական ունենալով փոխ-տեսուչը:

Ծեմարանի գրադարանը ենթակա է Հոգևոր Ծեմարանի տեսչությանը:

Հոդված 44

Մայր Աթոռի պաշտոնաթերթ Էջմիածին ամսագիրը ունի իր խմբա-

գիրը, խմբագրական մարմինը և խմբագրատան պաշտոնյաները: Խմբագիրը պատասխանատու է ամսաթերթի խմբագրման, տպագրության, առաքման և հոդվածագիրների հոնորարժեների բաշխման: Հոնորարժեների բաշխումը կատարում է խմբագիրը, օրինականության պահպանման սահմաներում, խորհրդակցելով ֆինանսական բաժնի հետ:

Հոդված 45

Վանքի մեջ գտնվող թանգարաններն ունեն իրենց տեսությ և պաշտոնյաները, որոնք հակում են թանգարանների և նրանց հարակից մասերի կանոնավոր գործունեությանը:

Հոդված 46

Մատուկարարի անմիջական պատասխանատվությունն է սեղանատան վարչությունը: Իր պարտականությունների մեջ են մտնում սենյեղենի գընումը, ճաշերի պատրաստության և մատուցման կազմակերպումը, խոհանոցի և ճաշարանի մաքրությունը:

Հոդված 47

Մայր Աթոռի տպարանը ունի իր տնօրենը, որ պատասխանատու է տըպարանի գործունեությանը, սակայն իրավունք չունի տպագրելու որևէ գրականություն, որ վավերացված և ընդունված չէ Հրատարակչական տեսչության կողմից: Տպագրված որևէ գիրը, հանդես կամ այս տեսակի հրատարակությունն հանձնվում է հրատարակչական տեսչությանը:

Հոդված 48

Հրատարակչական տեսչությունը ունի երեք պարտականություններ.

ա. Քննության ենթարկել որևէ հրատարակություն, որ պիտի լույս ընծայվի Մայր Աթոռի տպարանից: Քննության արդյունքները պետք է ներկայացվեն Ամենայն Հայոց Հայութաբետի ուշադրությանը:

բ. Հրատարակչական տեսչությունը պիտի հնկի տպագրության ընթացքն, կատարի սրբագրությունները և արտոնի տպագրությունը:

գ. Հրատարակչական տեսչությունը պատասխանատու է գրքերի և այլ հայութերի տպագրությանը: Հրատարակված գրքերը և հայութերը հանձնվում են տնտեսական բաժնին վաճառքի և պահեստավորման համար:

Հոդված 49

Քրիստոնեական քարոզության տեսչությունը իր հատուկ գրասենյակը ունի Մայր Աթոռից ներս կամ դուրս: Քրիստոնեական քարոզության տեսչության պարտականությունն է թեմակալ առաջնորդների հետ խորհրդակցաբար կազմակերպել Քրիստոնեական կրոնի ուսուցումը համաձայն Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու դավանանքին և վարդապետությանը: Նրա գործունեության մեջ մտնում են:

ա. Կիրակնօրիք վարժարանների հաստատում

բ. Դարպոցներում և կրտական այլ հաստատություններում կրոնական դասավանդությունների կազմակերպում

գ. Կրոնի ուսուցիչների պատրաստություն

դ. Կրոնական ուսուցման դասագրքերի պատրաստություն

ե. Կրոնական հաղորդումների կազմակերպում հանրապետական հեռուստատեսությամբ և ռադիոյով

գ. Ռատուղական հոդվածների հրապարակում մամուլում:

է. Կազմակերպում շրջիկ քարոզության:

Հոդված 50

Կաթողիկոսարանի Դիվանը ունի իր գանձագան գրասենյակները, որոնք են.

ա. Հարաբերությունների գրասենյակ, որ վարում է Կաթողիկոսարանի քարտուղարության պատասխանատվությունը և զբաղվում է աետական, պաշտոնական, քաղաքային և այլ հարաբերություններով,

բ. Միջեւելեցական հարաբերությունների գրասենյակ, որ հարաբերություններ է պահում քույր եկեղեցների հետ,

գ. Ներքին և արտաքին թեմերի հետ հարաբերությունների բաժին, որ պահում է հարաբերություններ Հայ Եկեղեցու բոլոր թեմերի հետ,

դ. Տեղեկատվության բաժին, որի պարտականությունն է Հայ Եկեղեցու և Մայր Աթոռի մասին հաճախակի լուրեր հաղորդել ներքին և արտաքին մամուլին:

ե. Մայր Աթոռի ծառայողների գրանցման բաժին, որը զբաղվում է աշխարհական պաշտոնյաների ընդունման, գրանցման, կրնաւուման և զգացարակման հարցերով, համապատասխան բաժնի վարիչի առաջադրանքով և Վեհափառ Հայրապետի հաստատումով:

Դիվանի բոլոր գրասենյակների գործունեության պատասխանատուն է դիվանապետը: Նրա պարտականությունն է վարել քարտուղարության պաշտոնը Վեհափառ Հայրապետի անմիջական հսկողության և ցուցունքների համաձայն, կատարել թղթակցությունները, հսկել քարտուղարության գրասենյակների բարվոք ընթացքին:

Բոլոր բաժինների քարտուղարությունը միացված է մեկ ընդհանուր գրասենյակի մեջ, որը պահովում են թղթածրաբները, կատարվում են մերենագրությունները, փոստի առաքումները և իրականացվում են դիվանատան բոլոր գործությունները:

Դիվանապետը անմիջական կերպով պատասխանատու է Վեհափառ Հայրապետին:

Հոդված 51

Տնտեսա-ֆինանսական վարչությունը ունի իր պատասխանատու դեկավարը երկու բաժիններով՝ տնտեսական և ֆինանսա-հաշվապահական գործունեության համար, որոնք ունեն իրենց առանձին բաժինները:

Տնտեսա-ֆինանսական վարչության գործունեության սահմանի մեջ են մտնում հետևյալ աշխատանքները.

ա. Վերին հսկողություն և կարգավորում Մայր Աթոռի ու ներքին թեմերի և վանորեից տնտեսա-ֆինանսական գործունեության

բ. հարաբերություն պետական մարմինների և հիմնարկների հետ՝ Մայր Աթոռի տնտեսական կարիքների մատակարարման և ֆինանսական գործունեության առնչությամբ

գ. մշակում և կնքում գանձագան պայմանագրերի՝ տնտեսա-ֆինանսական և շինարարական գործունեության կապակցությամբ ու հսկողություն դրանց անքերի կատարման՝ օրինականության սահմաններում: Ծինարարա-

կան պայմանագրերը կնքվում են գլխավոր ճարտարապետի հետ և հաստատվում են Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից:

Դ. ուղղակի հսկողություն, կազմակերպում և ղեկավարում հաշվապահության, պահեստների, ինչպես նաև Մայր տաճարի մոմավաճառության:

Ե. Տօքրինում Մայր Աթոռի փոխադրական միջոցների պահեստների:

Գումարները դուրս գրելու և պայմանագրերը հաստատելու իրավունքը վերապահված է Վեհափառ Հայրապետին՝ ֆինանսական բաժնի վարիչի առաջադրանքով:

Տնտեսա-ֆինանսական վարչության գործունեությունը առնչվում է բոլոր բաժինների հետ՝ նրանց ֆինանսական կարիքները բավարարելու համար և հսկելու բոլոր բաժինների տնտեսա-ֆինանսական գործունեության օրինականության վրա:

Մայր Աթոռի տնտեսա-ֆինանսական բաժինը տարին մեկ անգամ հատուկ վերատուգիչ հանձնախոսում է ուղարկում թեմերի ֆինանսական հաշիվները քննելու և կազմելու տեղեկագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսին և ԳՀՆ-ին ներկայացնելու համար:

Հոդված 52

Տնտեսա-ֆինանսական բաժինը տարվա վերջում պատրաստում է Մայր Աթոռի ընդհանուր կատարդականի տեղեկագիրը և ներկայացնում այն ԳՀՆ-ին: Միևնուն ժամանակ Տնտեսա-ֆինանսական վարչությունը ներկայացնում է հաջորդ տարվա նախահաշիվը առ ի քննություն և հաստատում ԳՀՆ-ի կողմից:

Հոդված 53

Ծինարարական գրասենյակի վարիչն է գլխավոր ճարտարապետը, որը պատասխանատու վերահսկիչն է Մայր Աթոռի բոլոր շինարարական աշխատանքների և ղեկավար՝ շինարարական ծրագրերի մշկման ու գործադրության, համաձայն Վեհափառ Հայրապետի և ԳՀՆ-ի ցուցմունքների ու Մայր Աթոռի ճարտարապետների հանձնաժողովի առաջադրությանց: Ծինարարական բաժինն ուղղակի էնթարկվում են ատաղճագործները, երկաթագործները, փականագործներն ու էլեկտրիկները, շինարարությունների վրա աշխատող բոլոր վարպետներն ու բանվորները, ինչպես նաև բեռնատար մեքենաների փոխադրությունները:

Հոդված 54

Փոխադրությանց բաժինը ունի իր պատասխանատու վարիչը, որը ղեկավարում է փոխադրական միջոցների գործունեությունը:

Հոդված 55

Կալվածոց տեսչության պարտականությունն է կանոնավոր կերպով պահել Մայր Աթոռի անշարժ կալվածների արձանագրությունները և կալվածագրերը:

Եկեղեցական որևէ կալվածի սեփականատերն է Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը, հանձին Կաթողիկոսի:

Եկեղեցական որևէ կալված, որ գտնվում է թեմերի մեջ, գործածվում և տնօրինվում է տեղի առաջնորդարանի կարգադրությամբ:

Հոդված 56

Մարտականիքի մեջ ծառայող աշխարհական պաշտոնյան, որ թերանում է իր պարտականությունների մեջ, խախտում է աշխատանքային կարգապահությունը և կամ որևէ հանցանք է գործում, իր անմիջական դեկավարի կողմից ստանում է բանավոր հետապողություն, կամ գրավոր նկատողություն դիվանատան կողմից՝ բաժնի վարիչի առաջարդանքով; Ի պահանջել հարկին պաշտոնյան հեռացվում է աշխատանքից ԳՀԽ-ի որոշումով:

Նոյն կարգը պահպանվում է թեմերում պաշտոնավարող աշխարհականների վերաբերյալ, վերջնական որոշումը վերապահելով թեմակալ առաջնորդին, խորհրդակցարար Թեմական ժողովի հետ:

Ե.—ԱՐԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԹԵՄ**Հոդված 57**

Աշխարհագրական որոշ շրջանի մեջ գործող եկեղեցական համայնքները կազմում են վարչական մի միավոր, որը կոչվում է թեմ:

Թեմի գլուխն է թեմակալ առաջնորդը:

Ցուրաքանչյուր թեմ ունի թեմական ներկայացուցական ժողով և Թեմական Խորհուրդ:

Թեմի վարչությունը վարում է թեմակալ առաջնորդը:

Ցուրաքանչյուր համայնքի գլուխը հոգևոր հովիվն է:

Ցուրաքանչյուր համայնք ունի իր համայնքային անդամական ժողովը և Ծխական Խորհուրդը:

Հոդված 58

Թեմակալ առաջնորդը Աշանակվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից և համայստում է Արա ներկայացուցիչը: Անհրաժեշտության պարագային Վեհափառ Հայուապետը կարող է պաշտոնից ես կոչել թեմակալ առաջնորդին:

Հոդված 59

Թեմակալ առաջնորդը թեմական բոլոր ժողովների նախագահն է և որոշումների գործադիրը:

Հոդված 60

Թեմակալ առաջնորդը համարատու է Ամենայն Հայոց Կաթողիկոսին և Եպիսկոպոսաց ժողովին: Թեմակալ առաջնորդը պարտավոր է ամեն տարի տեղեկագիր ներկայացնել Եպիսկոպոսաց ժողովին իր թեմի տարեկան գործունեության մասին:

Հոդված 61

Թեմակալ առաջնորդը նաև պատասխանատու է իր թեմի մեջ գտնվող վաճեքից գործունեության, որոնք գտնվում են իր հշխանության ներք, բացի Մայր Աթոռին ենթակա վանքերից:

Հոդված 62

Թեմակալ առաջնորդը համաձայն եկեղեցական ավանդական կարգի, Աշանակվում է առանց պաշտոնավարության տևողության սահմանի:

Հոդված 63

Թեմական առաջնորդի և Թեմական Խորմրդի նպաւու մերք կազմը վայ եմ եկեղեցական, երիտասարդական և տիկնամեց միություններ, կրոնական եղագացքություններ, դպրաց դասերի միություններ, մշակութային, կրթական, բարեկիրական մանձնաժողովներ՝ բրիտանական, կրոնաբարյութը ու ազգային դաստիարակչական նպատակներով:

Հոդված 64

Թեմական առաջնորդի իրավասու է միայն իր թեմի նամար ձևուադրելու բախաւումներ և նշանակելու նոգենոր նովիվմեր, որոնք պետք է ունենան օրինակելի մերագիր և իրանց կոչուած նամականության պատրաստություն, լինենք գիտուի Սուրբ Գրոց, Եկեղեցու ուղիղ դավանության, եկեղեցական կարգաց ու կամունաց և ծխական արարողությանց:

Հոդված 65

Թեմական առաջնորդի իրավատությունները ու պարտականությունները են.

ա. Պատշաճ նախամձախմդությամբ նսկել Հայաստանաց Եկեղեցու գործադիտության և կամունների անսարքության պամփամության վրա: Ապահովել ամփափան և կամունավոր կառուրություն եկեղեցական արարողությունների՝ արտօնայաց երացըությամբ: Քանի թեմի որևէ նոգեարականի դեմ եղած գամգառները և այդ նաև պատշաճ տօրիթմեր:

բ. Ամեն շաբթ թափել, որ յորբարանչուր ծովս ունենա իր նոգենոր նովիվը:

գ. Պարբերաբար այցելություններ տալ թեմի Եկեղեցիներին և նամայնքներին:

դ. Զենմադրել նոգեորականներ Թեմական Խորմրդի մետ խորմրդակցարար և ծովինքի նամար ասակավագներ ձեռնադրել նոգենոր նովիվի նամձարության վրա: Ամենայն Հայոց Հայրապետին խնդրամբ ներկայացնել արժանավոր Եկեղեցականների աստիճանի բարձրացման և պարգևատրության նամար: Խնդրամբ ներկայացնել Ամենայն Հայոց Հայրապետին, Թեմական Խորմրդի նամձնաբարությամբ, թեմից մերս արտակարգ ծառայություն մատուցող անձերի պարգևատրության ի նպաստ:

ե. Հոգեորականներ նշանակել կամ նոգենոր նովիվմերի փոփոխություններ կառարձ խորմրդակցությամբ Թեմական Խորմրդի:

զ. Տարին մեկ անգամ թեմի որոյր նոգեորականներին նամագումարի նրանքերկ կրոնական, ծխական և կարգապահական նարցերի քննարկին և նամաց:

է. Հոգ տանեկ թեմի ներքին առարկական գործություններ, կազմակերպելով մոր ծովինք, որ որ նմարաւոր իմայի: Խուստեկ անմրամեջու միջոցներ Հայաստանաց Եկեղեցու ամդամների կրոնական դաստիարակության նամար:

ը. Հսկել, որ թեմի մեջ կազմակերպվեն նոգենոր եղացակցություններ, եկեղեցական տիկնամեց միություններ, երիտասարդական խմբակցություններ, կիրակօրյա վարժարաններ, դպրաց դասեր և նաև եկեղեցական կազմակերպություններ, միշտ իր գիտակցությամբ և արտօնությամբ, Հոգ Եկեղեց նովանու մերք, նամայն սովոր կամունադրության տրամադրությունների:

թ. Արտօնել կրոնակամ գրականության մրաստրությունը թեմական գործածությամ նաևար:

Ժ. Համեմ և առողջել թեմի ֆինանսական բոլոր գործարքներին:

Ճա. Թեմական առաջնորդը և Թեմական Խորմուրդը տարեկանըին պատրաստում են նախամաշխիք տարեկան բուցման և ներկայացման են այն Մայր Աթոռ Վեհապետ Հայութապետին: Կուսաքը տարեվերջին ներկայացման են կատարողակամը, որ թմբարկված պիտի լինի թեմի վերասուզիչ նաևձնամոլուգի կողմից:

Հոդված 66

Թեմական առաջնորդի կողմին գործում է թեմի Ներկայացուցչական ժողովը:

Հոդված 67

Թեմի Ներկայացուցչական ժողովը կազմվում է բորբածչուր ճոխի կողմից ըմտրված երկու ներկայացուցչմերից, մեկը նոգեորենամ, մյուս՝ աշխարհական:

Հոդված 68

Թեմական Ներկայացուցչական ժողովը կամունակորարար գումարին է տարիին մեկ ամսաթիվ: Ամերաժշտությամ դեպքում առաջնորդը կարող է արտասերթ միատի նրանիցից Ներկայացուցչական ժողովին:

Հոդված 69

Ներկայացուցչական ժողովը նշանակում է Վեհապետիշ Բամձնաժողով բաղկացած մեկ նոգեորենամ և երկու աշխարհական ամսամերից:

Հոդված 70

Թեմական Ներկայացուցչական ժողովը ընտրում է Թեմական Խորմուրդ՝ առաջնորդի ներկայացուած կրկմանում ցամկի վրայից:

Հոդված 71

Թեմական Խորմուրդը բաղկացած է 7 ամդամերից՝ 4 աշխարհական և 3 նոգեորենամ:

Թեմական Խորմուրդը ընտրում է 4 տարւա նաևար:

Հոդված 72

Թեմական Խորմուրդը ամեն տարի ներկայացման է, իր գործումներին աեղեկագիրը Ներկայացուցչական ժողովին:

Հոդված 73

Թեմական Խորմուրդը թեմական առաջնորդի խորմրդանու և գործակից մարմինն է, որը գրադիմ է թեմի եկեղեցիների, կրոնա-դաստիքալիչական, վարչա-կազմակերպչական, տնտեսական ու կարգապահական նարկուի:

Հոդված 74

Թեմական Խորհրդի իրավասությունները ու պարտականություններն են:

ա. Հակի թեմի հաստառությունների, կազմակերպությունների և նրանց պաշտոնյանների գործունեության վրա:

բ. Քննել Ծխական եկեղեցական ժողովների ներկայացրած հարցերը, վավերացնել կամ մերժել դրանք, ինչպես նաև վավերացնել կամ լուծել Ծխական եկեղեցական ժողովների ընտրությունները:

գ. Հակի զանազան ծխական դպրոցների կրթական գործունեության վրա:

դ. Քննել եկեղեցու կազմակերպությունների կամ դպրոցական մարմինների միջև ծագած վեճերը, քննել նրանց կողմից կամ նրանց դեմ եղած բողոքները և լուծել դրանք:

ե. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տարիներ տուրքը վճարել, ըստ թեմական ներկայացուցական ժողովի որոշման:

զ. Պատասխանատու լինել Առաջնորդարանի նյոթական մատակարարմանը, թեմական ներկայացուցական ժողովի կողմից որդեգրված բլուզեի սահմաններում:

է. Քննել եկեղեցական նոր համայնքների հաստատման առաջարկությունները և ընդունել համապատասխան որոշում:

ը. Վավերացնել կամ մերժել Ծխական խորհուրդների որոշումները, եթե դրանք հակառակ են սույն կանոնադրության կամ եկեղեցու շահերին:

թ. Քննության ենթարկել Ծխական խորհուրդների կողմից առաջարկված որևէ հարց, որ կապված է ծովով կալվածների հետ, վավերացնել կամ մերժել դրանք: Թեմական Խորհուրդը իր եզրակացությունները ներկայացնում է Գերագույն Հոգևոր Խորհրդի նկատառմանը: Վերջնական որոշումը առնում է ԳՀԽ-ը:

ժ. Թեմական Խորհուրդը կարող է վավերացնել կամ մերժել Ծխական խորհուրդների կողմից պամեստի կամ շինարարական մի նիմնադրամի ստեղծումն ու նրա գումարների գործածությունը:

ճա. Թեմական Խորհուրդը նիստը գումարում է առնվազն ամիսը մեկ ամագամ:

Հոդված 75

Ծխական եկեղեցական համայնք է կոչվում հավատացյալների այն խումբը, որ կազմակերպված է իրեն եկեղեցի: Ցուրաքանչյուր ծխական եկեղեցական համայնք իր գլուխը ունի նոգենոր նովիվը և կառավարվում է Ծխական Խորհրդի կողմից:

Հոդված 76

Համայնքի նոգենոր նովիվը նշանակվում է թեմակալ առաջնորդի կողմից:

Հոդված 77

Հոգևոր նովիվը Ծխական Խորհրդի նախագամն է: և ղեկավարում է բոլոր ժողովները: Եկեղեցական անդամական ժողովի, Ծխական Խորհրդի և մյուս օժանդակ կազմակերպությունների բոլոր ժողովները գումարվում են նոգենոր նովիվի նրավերով և նախագահությամբ:

Հոդված 78

Սկեղեցական համայնքի նոգեոր նովիվը կարող է նրաժարվել կամ տնդափոխվել թեմակալ առաջնորդի համաձայնությամբ։ Սկեղեցական անդամական ժողովը երկու երրորդի մեծամասնության ձևմով կարող է առաջարկ ներկայացնել թեմակալ առաջնորդին նոգեոր նովիվը փոխելու մասին։

Հոդված 79

Ցուրաքանչյուր եկեղեցական համայնք կառավարվում է իր անդամներից ընտրված Ծխական Խորհրդի կողմից։

Հոդված 80

Ծխական Խորհրդից ընտրվում է համայնքային անդամական ժողովի կողմից։ Այն բաղկացած է յոթ նոգեորական և աշխարհական ժողովականներից, ընտրված նոգեոր նովիվի ներկայացրած կրկնանուն ցամկից։

Հոդված 81

Ծխական Խորհրդի անդամները ընտրվում են երեք տարվա շրջանի համար և վերընտրելի են։ Ծխական Խորհրդի ընտրության արդյունքը համարկվում է Թեմական Խորհրդի և առաջնորդի վավերացմանը։

Հոդված 82

Ծխական Խորհրդի իրավասություններն ու պարտականություններն են։ Ապահովել եկեղեցական արարողությունների կանոնավոր կատարումը։

բ. Գործադրել համայնքային անդամական ժողովի որոշումները։

գ. Ներկայացնել համայնքային անդամական ժողովին իր և իրեն ենթակա կազմակերպությունների գործունեության տարեկան տեղեկագիրը։

դ. Համայնքային անդամական ժողովին ներկայացնել իր տարեկան բաշվեալությունը, հաշվեքննիչ համաձայնը կողմից ըննարկվելուց և վավերացվելուց հետո։

ե. Պատրաստել եկեղեցական համայնքի տարեկան բյուջեն և այն ներկայացնել համայնքային անդամական ժողովի նպահառությանը։

գ. Վերաբնկել ենթակա կազմակերպությունների և համաձայնողությունների գործունեության վրա ու նվելել նաև նրանց պյուտական և վարչական գործերի վրա։

է. Գործադրել առաջնորդի և Թեմական Խորհրդի նրանանգները, համաձայն ներկա կանոնադրությամբ իրենց տրված իրավասությունների և պարտականությունների։

Հոդված 83

Ծխական Խորհրդի պարտավոր է ժողով գումարել երկու շաբաթը մեկ անգամ։

Հոդված 84

Նոգեոր նովիվն ու Ծխական Խորհրդը համայնքի ծոցում ստեղծում են օճանդակ կազմակերպություններ, ինչպես եկեղեցակա երիտասարդների միություններ, նոգեոր եղբայրակցություններ, տիկնաց միություններ, կի-

բակնօրյա վարժարաններ և այլ կորական, մշակութային և բարեսփրական հաճախաժողովներ, թեմակալ առաջնորդի համաձայնությամբ:

Բոլոր նման մարմինների նախագամը նոգեսոր նովիվն է ի պաշտոնե:

Հոդված 85

Համայնքի նոգեսոր նովիվն և Ծխական Խորհրդի միջև ծագած տարակարծությունները ներկայացվում են թեմակալ առաջնորդին պատշաճ կարգադրության համար: Թեմակալ առաջնորդի վճիռը վերջնական է:

Հոդված 86

Ծխական Խորհրդը լուծված է մկանովում, եթե այնուազ պատճառներով նրամարդում են կամ գործեղուց դադարում են անդամների մեծամասնությունը: Այդ դեպքում, համայնքի անդամական ժողովը ընտրում է նոր վարչություն:

Հոդված 87

Եթե մի Ծխական Խորհրդը գործի հակառակ սույն կամոնագրության տրամադրությունների, թեմակալ առաջնորդը և Թեմական Խորհրդը իրավասու են լուծելու այն և նոր ընտրություն կազմակերպելու:

Հոդված 88

Հարաստամաց Եկեղեցու ամեամ է յուրաքանչյուր հայ ամեատ, որ մը-կրովել է Եկեղեցու սպազանում: Քմեասու ամեամ կարող է լինել ամեն մկրոված հայ, որ լուցը է 18 տարին, ընդունում է հայ Եկեղեցու կրոնական դավանամբը, կանոնները, ընդունում և մասնակցում է կրոնական արարություններին ու խորհրդակատարություններին:

Հոդված 89

Հայ Եկեղեցու ամեամների խումբը, որ ցանկանում է կազմակերպել իր և Եկեղեցական համայնք, գրավոր դիմում է ներկայացմունք տեղվոյն թեմակալ առաջնորդին: Թեմակալ առաջնորդը դիմումը ներկայացմունք է ՀՀ Նախարարների Խորհրդին սուբժետ կրոնական գործերի կոմիտեին գրանցման համար:

Հոդված 90

Նոր կազմակերպված Եկեղեցական համայնքը ստանում է ծխական համագումար, եթե ունի իր պաշտամունքի վայրը և առաջնորդի կողմից նշանակված նոգեսոր նովիվն:

Հոդված 91

Ծխական համայնքի ամեն ադամ թվարկության իրավումբով մասնակցում է անդամական ժողովին, ընտրելու համար Ծխական Խորհրդը:

Հոդված 92

Համայնքային անդամական ժողովը գրադպում է ի մասնավորի մեսույալ նարեկով,

ա. Ընտրություն համայնքային Ծխական Խորհրդի անդամների;

բ. Ընտրություն երեք ամձերից բաղկացած հաշվեմնիշ հանձնաժողո-

վի, մեկ տարվա պաշտոնավարությամ նաևար, որը վերանվում է Ծխական Խորհրդի տնօւնական-հարցման գործարքները:

գ. Քննարկում հոգևոր նովվի և Ծխական Խորմրդի տարեկան նաշվետվությամբ:

դ. Համայնքի Ծխական Խորմրդի տեղեկագրությունը ներկայացվում է առաջնորդին և Թեմական Խորմրդին ի նաստառություն:

Հոդված 93

Համայնքի այն անդամը, որը գումարում է Հայ Եկեղեցու կամոնների նակառակ ընթացքում, կարող է գրիվել իր անդամակցությունից թեմակալ առաջնորդի վերջնական որոշումով:

Հոդված 94

Ներկա կամոնադրությունը գործադրությամ է դրվում նրա նախարարությամ թվականից սկսած: Եթեք տարիների լրացման, Եպիսկոպոսական ժողովի և Գերագոյն Հոգևոր Խորմրդի խառն ժողովը կարող է փոփոխություններ ամեն ներկա կամոնադրությամ որոշ նորմանների մեջ, ի պահանջել նարկին:

ԺՈՂՈՎԱԿԱՆ ՄՐԵՆՔՆԵՐ

Ամեն ժողով, որ գումարվում է Կաթողիկոսարամի, թեմի կամ նախամերի մեջ, պարտավոր է կիրառել ժողովական նորույաց կամոնները,

ա. Ժողովները նրավիրվում են Կաթողիկոսի, Առաջնորդի կամ Հոգևոր Հովվի կողմից, որը նախագամում է միատիրին:

բ. Ժողովը ընտրում է իր ատեմապետը, ատեմադպիրը և գամձապահը, նրանց փոխանորդներու:

գ. Նախագամը կազմում է ժողովի օրակարգը: Ժողովի անդամները իրավունք ունեն առաջարկելու օրակարգի նարգեր: Միհամասնության բվելով ընդունվում կամ մերժվում են ժողովականի կողմից առաջարկված օրակարգի նարցերը:

դ. Ատեմապետի պաշտոնն է կառավարել ժողովը, խոր տալ ժողովականներին և քվեարկությամ դմել խնդրու առարկա օրակարգի նարցերը,


ե. Ատեմադպիրի պաշտոնն է կամոնավոր ատեմագրություն պահել և ամեն ժողովի ներկայացնել նախորդ ժողովի ատեմագրությունները և որոշումները՝ փակերացնելի կամ փոփոխության նամար:

զ. Որևէ որոշում կանոնական է դառնում մեծամասնության բնեով, բացի այն պարագաներից, երբ կամոնադրությունը նախատեսում է երկու երրորդի բնելի մեծամասնությունը:

է. Նախագամը չի մասնակցու բվեարկությամ: Քվեմերի նախարարության պարագաներին նախագամողի ձայնը գերակշիռ է:

ը. Ամեն որոշում պետք է ստորագրվի Ատեմապետի և Ատեմադպիրի կողմից և ներկայացվի Նախագամին:

թ. Ատեմադպիրը պարտավոր է պահել ներկայությամ նատուկ տոմար, որ ստորագրում է յուրաքանչյուր ժողովական, ժողովին մասնակցելուց առաջ:



ՄԱՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՐՄ ԱՍԻԾԱՆՆԵՐԻ ՏՎՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Դեկտեմբերի 18-ին, չորեքշաբթի օրը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ մասնավոր վարդապետական իշխանության չորս աստիճանների տվյություն: Ռիխտավերաբար Մայր Աթոռում գտնվող Կանադայի հայոց թեմի առաջնորդ գերշ. Տ. Հովհաննես և այլ Տերտերյանը, համաձայն Զեղնադրության Մաշտոցի, վարդապետական չորս աստիճաններ շնորհեց Ս. Էջմիածնի միաբաններ Տ. Սիրն արեղա Աղամբանին և Տ. Վրթանես արեղա Արքանամին: Երկու երիտասարդ միաբանները Խման Ս. Սեղանի առջև ուխտի կանգնեցին՝ նորոգվելու համար նոր շնորհելով:

Զեղնադրության Մաշտոցի վկայությամբ, մասնավոր վարդապետական աստիճանի տվյության արարողակարգը սահմանել է եռամեծար վարդապետ Ս. Գրիգոր Տաթևացին: Հայաստանյաց Առաքելական Ս. Եկեղեցու նվիրական կարգի համաձայն մասնավոր վարդապետական չորս աստիճան ստացած հոգևորականն է, որ իրավունք ունի բարոգելու և ուսուցանելու Քրիստուի Ավետարանի ճշմարտությունները:

Վարդապետական տվյության սրտառուց արարողության ընթացքին կարդացվեցին չորս Ավետարաններ, աղոթքներ, երգեցին սրբազն շարականներ ու մեղեղիներ:

Հավարտ արարողության Տ. Հովհաննես և Տերտերյանը բարեմաղթանքի և շնորհավորանքի խոսք հոկեց նորմածա վարդապետներին:

Նորմածները ներկայացան Վեհափառ Հայրապետին՝ ստանալու նրա հայրական օրինությունը: Նորին Սրբությունը շնորհավորելով վարդապետներին մաղթեց, որ նրանք այսուհետև և աներկրա հավատով ու նվիրումով շարունակեն իրենց ծառայությունները Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և հավատավոր հայ ժողովրդին: Այս նվիրական առիթով Հայոց Հայրապետը նրանց վարդապետական լանջախաչեր պարզեց:


Տ. Սիրն և Տ. Վրթանես վարդապետները ստվերել և ավարտել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր մեմարանը: Այնուհետև Վեհափառ Հայրապետի տեսօրինությամբ իրենց ծառայությունն են սկսել, առաջինը՝ Բուլղարիայի

Վասնա քաղաքում և երկրորդը՝ Արցախի թեմում։ Այժմ ևս նորընծա վարդապետներն իրենց հոգեւոր ծառայությունն են մաստցում մեր ժողովրդին՝ Բիշյալ վայրերում։

* * *

«Եջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս շնորհավորում է նորընծա վարդապետներին՝ մաղթելով, որ նրանք իրենց նվիրումով և նոգեւոր ուխտի բարձր գիտակցությամբ արժանավոր հետևորդները դառնան Հայ Եկեղեցու լուսամիտ վարդապետների։





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Նոյեմբերի 3-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Մակար քհն. Տերտերյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Նոյեմբերի 6-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայութեատի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Նոյեմբերի 10-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս քհն. Հարությունյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպոս. Պոգապալյանը:

Ա. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Նոյեմբերի 13-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայութեատի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Նոյեմբերի 17-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Մամիկոն արդ. Քիլենյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

Նոյեմբերի 20-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայութեատի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Նոյեմբերի 24-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ և խորանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Տիրապ քհն. Գըլմենյանը: «Հայր

մեր»-ից առաջ քարոզ խոսեց ովտավորաբար Մայր Աթոռում գտնվող Հըմիկ դիկ Մալաբար Եկեղեցու միտրոպոլիտ Գրիգորիոսը:

Դեկտեմբերի 30-ին, շաբաթ.—Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների տոնին Յվիրված, և պատարագ մատուցեց Տ. Եղիշե ավ. քին. Բաղրամյանը:

Դեկտեմբերի 1-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Վազգեն արդ. Միրզախանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Դեկտեմբերի 4-ին, շորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միարանական հերթական հավաքույթ:

Դեկտեմբերի 6-ին, որբաթ.—Այսօր Վեհարանի համեմիտությունների դահիճնում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ հոգևորականության հավաքույթ, որի ժամանակ ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ գերշ. Տ. Խաչակ եպս. Պարսամյանը և ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ գերշ. Տ. Վաչէ արքեպս. Հովհանիսյանը պատմեցին ամերիկահայ գաղութի ազգային-հոգևոր կյանքի մասին: Ասպա Վեհափառ Հայրապետը խոսեց հոգևորականության նոր անելիքների մասին:

Դեկտեմբերի 8-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց ովտավորաբար Մայր Աթոռում գրտնվող ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ գերշ. Տ. Խաչակ եպս. Պարսամյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

Ս. պատարագի վերջում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, կատարվեց հոգեհանգիստ՝ համավոր երկրաշարժի երրորդ տարելիցի առիթով:

Դեկտեմբերի 15-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

Դեկտեմբերի 18-ին, շորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միարանական հերթական հավաքույթ:

Դեկտեմբերի 22-ին, Կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ և սեղանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Նարեկ ավ. քհն. Մատարյանը:


Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Դեկտեմբերի 24-ին, Երեքաբթի.—Այսօր Մայր տաճարում, Ս. Ստեփանոսի խորանի վրա, և պատարագ մատուցվեց նվիրված Ստեփանոս հայավելային: Պատարագին էր Տ. Խաչատոր ավ. քհն. Ֆրանկյանը: «Հայր մեր»-ից առաջ համուր պատշաճի քարոզ խոսեց Մայր Աթոռի դիմանապետ գերշ. Տ. Ներսես արքեպոս. Պողապալյանը:

Ս. պատարագից հետո, ավանդության համաձայն, Մայր տաճարի միաբան սարկավագները այցելեցին Վեհարան՝ սուանալու Վեհափառ Հայրապետի օրինությունը:

Դեկտեմբերի 29-ին, Կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ և խորանի վրա, և պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս քհն. Հարությունյանը:





ՀՈՒՐԵՐ ԳՈՒԳԱՐՔԻ ԹԵՍԻՑ

Հայ ժողովորդը վերջին տարիներս ազգային եկեղեցական վերելք է ապրում: Ստեղծվում են նոր թեմեր, բացվում են նոր եկեղեցիներ: Ծիշու է, այս բոլորի հետ կապված կան նաև շատ ու շատ դժվարություններ, սակայն այդ դժվարությունները անցողիկ են և հալթահարելի:


Վերջերս, ի թիվս այլ նորահիմն թեմերի, տեղի ժողովրդի պահանջով և Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ հիմնադրվեց նաև Գուգարքի թեմը, որն ընդգրկում է Հայաստանի Հանրապետության յոթ շրջաններ՝ առաջնորդական կենտրոն ունենալով Դիլիջան քաղաքը: Գուգարքի թեմի սահմաններում են գտնվում մեր Շամասպոր պատմական վանքերից Հաղպատը, Սանահինը, Օծոնը, Խորանաշատը, Մակարավանքը, Գոշավանքը և Հաղարծինը: Գործող եկեղեցիներ կան Կարմիրում, Տավուշում, Իջևանում և Նոյեմբերյանում: Սակայն գործող վեց վանքերում և եկեղեցիներում սպասարկում են միայն երեք քահանա հայրեր, մի հանգամանք, որը խիստ դժվարացնում է թեմում հոգևոր գործունեությունը: Գործող բոլոր եկեղեցիներում կազմված են երգչախմբեր: Նախատեսված է Դիլիջանում կառուցել նոր եկեղեցի: Եկեղեցիներում արարողությունների սպասարկման համար թեմը խիստ կարիք ունի սարկավագների և դպիրների, չնայած Հաղպատի վանքում կազմակերպված հատուկ դասընթացներն ավարտելուց հետո 12 դպիրներ ծառայության նշանակվեցին թեմի մի քանի եկեղեցիներում:

Բազմաթիվ դիմումներ են ստացվում գյուղական շրջաններից՝ ուղղված թեմի թեմակալ առաջնորդին՝ իրենց մոտ եկեղեցի կառուցելու խնդրանքով:

Գուգարքի թեմի կազմավորման հետ գուգահեռ ստեղծվել է Տիկնանց Սինոթյունը, որը ծավալում է բարեսիրական գործունեություն: օգնություն փախստականներին, աճինամ մնացած ծերերին, որը երեխաներին և այլ բնույթի մարդասիրական գործեր:

Թեմի հոգանավորության ներքո ստեղծվել է մանկական մի շնորհալի երգչախումբ:

Գուգարքի թեմն արդեն կատարում է իր ազգային-եկեղեցական դրական հաստատում քալերը:



ՀԱՐՅԱԶՐՈՅՑ ԹՈՐՈՆԹՈՅԻ «ԿՐՈՆԱՍԷՐ ՏԻԿԱՆՑ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԻ» ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՏԻԿԻՆ ԶՈՒԱՐԹ ՊՈՅԱՃԵԱՆԻ ՀԵՏ

ՀԱՐՅՑ.—Մանօթացուցէք, խնդրեմ ձեր կազմակերպութիւնը:

ՊԱ.Տ.—Գանատայի Թօրոնթոն քաղաքի «Ս. Էջմիածնի Կրօնասէր Մայրեր»ու Համախմբումը կը գործէ Գանատայի Առաջնորդարանի հովանիշին տակ, գլխաւորութեամբ Առաջնորդ Տ. Յովհանն Սրբ. եպիսկոպոս Տերտերեանի, Ս. Երրորդութիւն Հայաստանեաց Եկեղեցոյ կամարներուն տակ:

ՀԱՐՅՑ.—Ե՞ր ծնունդ առաջ Ձեր կազմակերպութիւնը և ի՞նչպէս:

ՊԱ.Տ.—Մեր կազմակերպութիւնը ծնունդ առաջ, մեր երիտասարդ և նոյնիրեալ Առաջնորդին հետեւողական չաճքերով, տակաւին վարդապետ և հոգեուր հովի Թօրոնթոն քաղաքին. Երբ վերակառուցուելու վրայ էր Ս. Երրորդութիւն Հայաստանեաց Եկեղեցին նոր և հոյակապ չենքով մը, անոր բարեկարդման ու պայծառացման համար, իմ գլխաւորութեամբ ի մի հաւաքեց խումը մը տարեց և միջահասակ տիկիններ, և մենք մինչև Եկեղեցոյ շինութեան աւարտումը, լրի պատրաստած էինք հետեւալները. —զգեստաւորում պատրագիշի-սարկաւագներու-դպիրներու, ուրաքներ. Ս. Ավիին ծածկոցներ, խաչի և Անետարանի բռնիններ և այլ ամեն տեսակի նորահիս և ճաշակաւոր ձեռագործներ, զորս կը գործածենք Եկեղեցոյ մէջ: Եկեղեցոյ օծումին ժամանակ Վեհափառ Հայրապետը նշեց ու գնահատեց մեր համեստ աշխատանքը: Արդեն հինգ տարի է որ կը շարունակենք մեր գործունեութիւնը նաև այլ Եկեղեցիներու համար:

ՀԱՐՅՑ.—Տիկ. Պոյաճեան դուք ո՞րքան ժամանակէ ի վեր կը ծառայէք այս գաղափարին:

ՊԱ.Տ.—Ես մանկութեանէս՝ Ազգասէր և Եկեղեցաւոր ծնողքի մը շունչով ու հոգիով սնուած զաւակ, միշտ ծառայելու ոգիով ընտրած եմ այս ողին և հաւատրով շարունակած մինչև 1959 թուականը. Երբ Լիքանանի մայրաքաղաք Պէյրութի մէջ՝ խումը մը Եկեղեցաւոր ու բարեպաշտ տիկիններ, Ս. Էջմիածնի տեսիլքով և անոր Աստուածառար Գահակալին Տ. Տ. Վազգեն Ա. Ամենայն Հայոց Հայրապետի օրինութեամբ՝ հիմք դրինք «Կրօնասէր Տիկնաց Համախմբում»ին, նպատակ ունենալով—Բարեկարդում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի: Համախմբումը կը պահէ իր գործունեութիւնը 30 տարիներէ ի վեր: Մեր 20-ամեակին առթի վեց հիմնադիր Տիկիններու ստացանք Վեհափառ Հայրապետի գնահատանքը, սրբատառ կոնդակներով և «Ս. Ներսէս Շնորհալի» շքանշաններով:

ՀԱՐՑ.—Ե՞ր փոխադրուեցաք Գանատա.

ՊԱՏ.—Լիբանանի աղյուսի պատերազմական շրջանին՝ ու անոր օրէ որ քայլայումներուն ի տես, ցաւ ի սկզբ 1982ին ընտանեօք փոխադրուեցանք Թօրոնթո, հոն են տեղույն պայմաններուն համաձայն կը շարունակիմ «Կրօնասէր»ի հաւատաւոր գործունեութիւն։

ՀԱՐՑ.—Ի՞նչպէս և ե՞ր Զեր հայեացը կեդրումացուցիք հայրենիքի նորաց եկեղեցիներու բարեզարդման աշխատանքին։

ՊԱՏ.—Եր մեր սրբազն հայրենիքը ունեցաւ «Խղճի և հաւատքի» պատութիւն ու բացունցան ամէն շրջանէն ներս զործող եկեղեցիներ, որոնք խիստ կարիքը ունեն բարեզարդման, մեր Առաջնորդ սրբազնան՝ Յովնան եպս. փափաք յայտնեց Վեհափառ Հօր ցանկութեամբ, աշխատանքի ձեւը ընդլայնել և մեր կարողութեան ահմանին մէջ՝ շարունակել առաել թափով։ Արդէն երեք տարիէ ի վեր իմ գլխաւորութեամբ ունինք 20էն աելի հաւատացեալ ու անձուք մայրեր, մեծ մայրեր, որոնք շարաթը երկու օր առաօտէն մինչև երեկոյ սիրով կ'աշխատին։ Մեր Հոգեւոր հովի Տ. Արարատ Վրդ. Գալթագճեան, բարեշնորի Տիգրան սարկանաց Ծովֆայեան և քարտուղարուի Ազնի տիկ. Նորա Պալթայեան իրենց ինքնաշարժներով անձնուիրաքար մեզ կը հաւաքեն մեր տուներէն առաւտուները և երեկոները տուն կը հասցեն։

ՀԱՐՑ.—Իսկ ի՞նչեր են Զեր պատրաստած առաքուները, կը հաճի՞ք մի քիչ մանրամասն բացատրել։

ՊԱՏ.— Նախ պէտք է ըստ որ այս աշխատանքները իրագործելու համար հարկ եղած գումարն է կարեւորը, ինչ որ մեր սրբազն հայրը բաւականին մեծ գումարով Փօնտ մը յատկացուցած է այս նպատակին համար։ Կունենանք նաև ազնի նուիրատուներ։ Երեք տարիէ ի վեր, Յովնան սրբազն մաս առ մաս բաժնած է զանոնք։ Մենք կը պատրաստենք։—պատրագիչի զգեստ լրի կազմով ու ճերմակ շապիկներով։ Սարկանագճերու մասնաւոր շապիկներ իրենց ուրարտներով։ Դպիրներու շապիկներ, աղջկանց գլխու լաշակներ, Ս. Սկիթի ծածկոցներ, Խաչի և Աւետարանի թաշկինակներ, գրակալներու շապիկ և ծածկոցներ, մասի համար ծրաբներ, հաղորդութեան համար մասնաւոր բռնիչ միջկակ թաշկինակներ, և խորանի վարագոյններ։

ՀԱՐՑ.—Ի՞նչ է ձեր ապագայ ծրագիրը։

ՊԱՏ.—Ես և իմ աշխատակից նուիրեալ քոյրերս, սրտի մեծ գոհունակութեամբ բաւարարուած ենք այս օգտաշատ աշխատանքով և անոր արդինքով։

Գործը և պատրականութիւնը մերն է։ Մենք կը խոստանաք նոյն հաւատքով ու տեսիլքով և առաել բծախնդրութեամբ շարունակել մեր աշխատանքը, այնքան ատեն որ Տէրը տա՛յ առողջութիւն և կեանք մեզի։

ԵՀՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐՈՒ ՍՈՒՏ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նոր ժամանակներուն յայտնուած բազմաթիւ մանր ու մեծ աղանդերու կարգին է «Եհովայի Վկաներ»ու չարալից աղանդը, իր կարգ մը հետեւրդներով, որոնք Քրիստոսի ճշմարիտ հաւատոք ուրացածներ են:

Իրենց բերանացի թէ գրասոր բոլոր արտայայտութեանց մէջ Եհովայի Վկաները կը սիրեն իրենք զիրենք ներկայացնել իբրև միակ ճշմարիտ հաւատացեալները և Եհովային միակ հաւատարիմները, «ընտրեալները», Աստուծոյ ամունը (=Եհովա) կրոլ միակ ճշմարիտ «Աստուծոյ ժողովուրով»:

Ասոնք որպէս թէ Աստուծոյ դասոր կը պաշտպանեն՝ հոչակելով թէ միայն մէկ Աստուծ կայ՝ Եհովան, որ Երրորդութիւն չէ, այլ բացարձակապէս միակ, և թէ Որդին ու Հոգին Աստուծ չեն: Սակայն Քրիստոսի աստուծութեան կապակցութեամբ չկարենալով շնչել կամ հերքել Նոր Կտակարանին բացայաց վկայութիւնները, այս ուրացումին վրայ ուրիշ հայնոյութիւն մըն ալ կ'աւելցընեն, բայց թէ Որդին թէպէտ «աստուծ մըն է», բայց Աստուծ չէ: Այսպիսով՝ մէկ Աստուծոյ փոխարէն երկու Աստուծներ կը դաւանին, մէկը մեծ և միաը փոքր, հեթանոսական բազմաստուծութեան մէջ իյնալով:

Քրիստոնէական կարեկի չէ կոչել իրենց հաւատոք, որովհետեւ չի հիմնուիր Քրիստոսի աստուծութեան վրայ, զոր բացարձակապէս կը մերժեն ճանչնալ: Կը խօսին հաւատոքի անունով իրենց ուզած բաները բարոգելու համար կամայականորէն: Մէկ կողմէ կը չարափոխեն Աստուծաշունչի շատ մը հաստատումները, իսկ միւս կողմէ՝ կը փորձեն լրացնել Աստուծաշունչին «պակաները»:

Ստապառում տեսութիւններ կը ներկայացնեն Աստուծաշունչին անունով, բազմաթիւ գոյն ստրվուած համարներ իրարու կարկտելով, և ատիկա այնպիսի ճարպիկութեամբ, որ պարզամիտ մարդոց հիացումը կըրնայ շարժել: Բայց Աստուծաշունչին անունով իրենց հաստատումները ա'յնքան հեռու են Աստուծաշունչի ճշմարտութենէն, որքան երկինքը՝ երկրէն: Ուսէ մէկը կրնայ ատիկա տեսնել և առանց դժուարութեան հերքել, Ս. Գիրքին պատասխաններով, որ կրնայ ունենալ՝ կարդալով ստորեւ հշուած

համարները: Եւ Աստուածունը ինք բաւարա՛ր է երեան հանելու անոնց բացայաց ստորթինն ու կեղծիքը:

Անա իրենց կողմէ խարդախուած հաւատքին քանի մը կարեւոր հաստատմները եւ Աստուածունչին հարազատ խօսքերը՝ իբրև պատասխան.—

1. ԱՍՏՈՒԱԾՈՒՅՈՒՆԸ

Աստուածունչին համար կ'ըսեն՝ թէ սխալ է «Հին Կտակարան» և «Նոր Կտակարան» կոչել անոր երկու բաժինները, այլ զանոնք պէտք է կոչել «Երրայական Ս. Գրութիւններ» և «Յունական Ս. Գրութիւններ», մինչդեռ նոյնինքն Աստուածունչին մէջ երկու անգամներ Պողոս առաքեալի կողմէ գործածուած կը գտնենք «Կտակարան» (=Ոլսո) բառը՝ Հին և Նոր Կտակարաններուն համար: Տե՛ս Բ. Կոր 3.6 և 14: Գաղ 4.24:

2. ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Ս. Երրորդութեան համար կ'ըսեն թէ չկա՞յ Երրորդութիւն, որ իբրև թէ հեթանոսական է, այլ.— կ'ըսեն,— կայ միակ Աստուած մը՝ Եհովան, որուն Որդին է (բայց Աստուած չէ) Յիսոս Քրիստոս: Երրորդութեան «անտրամաբանական» վարդապետութիւնը Սատանային կողմէ հնարուած է,— կ'ըսեն,— բնաւ չի յիշուիր Աստուածունչին մէջ:

Բայց ատիկա բնաւ՝ շիտակ չէ: Թէպէտ «Երրորդութիւն» բառը չկայ Աստուածունչին մէջ, բայց անոր մասին վկայութիւնները բազմաթիւ են, եւ անհերքելի: Յիսոս ինք իր աշակերտներուն պատուիրեց. «Կացէք բոլոր ազգերը աշակերտեցէք, մկրտեցէք՝ զանոնք՝ յանուն Հօր և Որդու և Հոգոյն Սրբոյ» (Մտք 28.19): Պողոս Առաքեալ Երրորդութեան երեք անձերուն մասին խօսելով՝ զանոնք «ՆՈՅՆ ԱՍՏՈՒԱԾԸ» կը կոչէ (Ա. Կոր 12. 3—6), իսկ Բ. Կոր 13.13-ին մէջ նոյն երեք անձերուն անոնով կ'օրինէ իր հաւատացեալները:

Աստուածունը յաճախ միասին կը յիշէ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին (տե՛ս Մտք. 3.16—17: Հոռմ 8.9: Եփես 4.4—6: Ս. Պետ 1.2: Յուղա 20.21: Ա. Յովի 2.22—23), եւ ցոյց կու տայ թէ անոնք երեքն ալ նոյն բնութիւնը եւ նոյն յատկանիշները ոնին, երեքն ալ յատիտենական են եւ անվախճան, սուրբ են եւ ճշմարիտ, արարիչ են, ամենակարող եւ ամենորեք, եւ երեքն ալ յատիտենական կեանքի աղբեիր են: Բայց երեք տարբեր Աստուածները չեն, այլ մէ՛կ, որովհետեւ մէ՛կ է անոնց կամքն ու գործունեութիւնը, մէկ է անոնց փառքը, մէկ է անոնց տրուած պատին ու երկրաչութիւնը:

3. ԱՍՏՈՒԾՈՅՑ ՈՐԴԻՒՆ՝ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Աստուծոյ միածին Որդիին՝ Յիսոս Քրիստոսի աստուածութիւնը կ'ուրաման Եհովանի վկաններ:

Ա. — Կ'ըսեն՝ թէ Յիսոս «Աստուծոյ Որդին» էր, բայց Աստուած չէր:

Նախքան մարդկայութիւնը անիկա պարզ «հոգելէն արարած» մըն էր,— Կ'ըսէն,—ստեղծուած արարած մը, և ո՞չ թէ Ամենակալ Աստուածի: Բայց Աստուածաշունը ցոյց կու տայ, թէ Որդին, Յովհաննէն Աւետարանիչին կողմէ: «Բան» կոչուած, ո՞չ միայն Աստուած է, այլ նաև արարի՛շն է, որովհետեւ ամէն ինչ իրմով գոյացաւ. «Սկիզբէն էր Բանը, և Բանը Աստուծոյ բռվ էր և ԲԱՆԸ ԱՍՏՈՒԱԾ էր: Ամիկա սկիզբէն Աստուծոյ քովն էր: Ա-ՄԵՆ ԲԱՆ ԱՆՈՎ ԵՂԱՆ, և առանց անոր բան մը չեղա՛ւ ինչ որ եղաւ: Կեանքը անո՛վ էր... և ԾԾԽԾՐՀԸ ԱՆՈՎ ԵՂԱՆ» (Յովի 1.1—4 և 10):

Յիսուս ինքը բազմաթիւ ատիթներով բազմաթիւ կերպերով զգացուց իր աստուածութիւնը: Կարդացէ՛ք սա համարները.— Յովի. 10.30—33: Նոյնիսկ խաչեղութենէն եւր այդ մասին կասկածոյ Թովմսա առաքեալը զինք յարութիւն առած տեսնելէն եւր ըստ. «ԻՄ ՏէՐՍ ԵՒ ԻՄ ԱՍՏՈՒԱԾՍ» (Յովի 20.28): Ա. Յովի 5.20-ը ամենայստակ ձևով կ'ըստ «Գիտենք թէ Աստուծոյ Որդին եկաւ ո մեզի կարողութիւն տուաւ որ ճշմարիտը ճանչնանք: Մենք այդ ճշմարիտին մէջն ենք, իր Որդին Յիսուս Քրիստոսին մէջ: ԱՆԻԿԱՆ Է ԾԾԽԾՐԻՏ ԱՍՏՈՒԱԾՆ ՈՒ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ»:

բ.—Կ'ըսէն՝ թէ Յիսուս, Աստուծոյ Որդին, Աստուծոյ հետ մէկ և հաւասար չէ, բայց անէկ վար «աստուած» մըն է, ասորադաս Հօրմէն:

Այս հեթանոսական բացարութիւնը բացարձակապէս կը հակասէ Աստուածունչի ճշմարտութեան: Դեռ Քրիստոսի ծննդնէն ուժը դարեր առաջ Եսայի մարգարէ կ'ըսէր, թէ իր ատենին ծնելիք մանուկը պիտի ըլլար ու կոչուէր՝ «Սքանչելի, Խորհրդակից, ՀԶՈՐ ԱՍՏՈՒԱԾ, Յափուենական Հանութեան Հայր, Խաղաղութեան Խշխան» (Ես 9.6):

Յովհաննու Աւետարանին մէջ կը տեսնենք, թէ Հրեաներ Յիսուսը «կ'ոգէին սպաննել, որովհետեւ ո՞չ միայն Շաբաթ օրը կը լոծէր, այլ նաև զԱստուած իր Հայրը Կ'անուանէր, և այսպէս ԻՆՔԶԻՆՔ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԱ-ԻԱ.ՍԱՐ Կ'ԸՆՔԸ» (Յովի. 5.18): Յիսուս ցոյց տուաւ թէ Հայրն Աստուած ամէն դատաստան Որդիին յանձնած է, «որպէսզի ամէնքը պատուեն Որդին, ինչպէս Հայրը կը պատուեն» (Յովի 5.28): Դեռ աւելին ալ ըստ Յիսուս, ցոյց տաղով թէ ինք և Հայրը ՄԷԿ են, և այդ խօսքին վրայ զինք պիտի քարկոծէին, որովհետեւ ըստն. «Բարի գործի համար թեզ չենք քարկոծեր, այլ հայինութեան համար, ՈՐՈՎՃԵՑԵՒ ԴՈՒՆ ՈՐ ՄԱՐԴ ԵՍ ԻՆՔԶԻՆՔ ԱՍՏՈՒԱԾ Կ'ԸՆԵՍ» (Յովի 10.33): Կարդա՛ նաև...— Փիլա 2.5—8: Կող 2.9: Յապ 17.14, 19.13 և 16:

գ.— Կ'ըսէն՝ թէ, բանի որ Յիսուս Աստուած չէ, անոր երկրպագելը կամ պաշտամունք մատուցանելը ճշմարիտ աստուածպաշտութենէն շեղում եւ մոլորութիւն է, և Աստուծոյ թէմ գործուած ծանր մեղք մը:

Սակայն Աստուածաշունը յատակօրէն կ'ըստ թէ Անյնինքն Հօր Աստուծոյ կամքն է, որ ամէնքը պատուեն Որդին ճիշդ այնպէս՝ ինչպէս Հայրը կը պատուեն, որովհետեւ Որդին չպատուողը Հայրն ալ չի պատուեր (Յովի 5.22—23): Պողոս առաքեալ կ'ըստ, թէ Հօր Աստուծոյ կամքով՝ Որդիին պիտի երկրպագէն թէ՛ երկնաւորները, թէ՛ երկրարները, և թէ՛ ասնդարամետականները (Փլա 2.9—11): Երբայցոց նամակին հեղինակը կ'ըստ, թէ Հայրն Աստուած Որդիին մարդեղութեան համար ըստ. «Աստուծոյ բոլոր երեշտակներն ալ անոր երկրպագորին թող ընեն» (Եքր 1.6): Իսկ Յայտնութեան գիրը ցոյց կու տայ թէ Հայրն Աստուած և Գատնուկը (=մարդացեալ և խաչին վրայ զենուած Որդին) հաւասար օրինութիւն, փառք ու պատի և երկրպագորին կ'ըստանան բոլոր արարածներէն ու

երեցներէն (Յայտ 5.13—14): Եւ տակափն, ո՞վ չի գիտեր, թէ Յիսուս առաքելները և միւս աշակերտները իրենք մեզի տուին Քրիստոսի երկըրպագելու օրինակը (տե՛ս Ղոկ. 24.52; Յովհ. 9.35—38):

Դ.—Կ'ըսեն՝ թէ յարոցեալ Յիսուսը նոյն ինքն Միքայէլ հրեշտակապեսն է: Սակայն Նոր Կտակարանը ունեւ տեղ Յիսուսը հրեշտակի հետ չի նոյնացներ. ընդհակառակը, կը շեշտէ հրեշտակներուն և Որդիին անսահման տարրերութիւնը:

[Աստուած] այս վերջին օրերուն մեզի հետ խօսեցաւ իր Որդիովը, որ ամէն բանի ժառանգ դրաւ, որով աշխարհն ալ ստեղծեց: ՈՐԴԻՆ ԻՐ [=Աստուած] ՓԱՌԱՅ ԼՈՅՏՆ է են իր է՛սկիթնեսն ԲՈՒՆ ՊԱՏԿԵՐԸ, որ իր զօրութեան խօսքովը ամէն բան կը բոնէ, իր անձով մեր մեղքերը սրբելով՝ բարձրերը, Աստուած մեծութեան աջ կողմը նատաւ: Եւ այնչափ աւելի եղաւ հրեշտակներէն, որչափ անոնցմէ աւելի աղեկ անոն ժառանգեց: Որովհետեւ հրեշտակներէն որո՞ւ ըսաւ երբեք. «Նուն իմ որդիս ես, ես այսօք թեզ ծնաք». և դարձեալ, «Ես անոր Հայր պիտի ըլլամ, և անիկա ինձի որդի պիտի ըլլայ». և դարձեալ, երբ Անդրամիկը աշխարհ կը մոցնէ կ'ըսէ. «Աստուած» բոլոր հրեշտակներս ալ անոր երկրպագութիւն բող ընեն: Հրեշտակներուն համար կ'ըսէ. «Իր հրեշտակները հոգիներ կ'ըսէ, իր պաշտօնեաները՝ կրակի բոց». սակայն Որդիին կ'ըսէ. «Քու աթոռող, ո՞վ ԱՍՏՈՒԱԾ, յափտեանս յափտենից է. բու թագաւորութեան զաւազանդողութեան զաւազան է. արդարութիւնը սիրեցիր և անօրէնութիւնը ատեցիր. անոր համար, ով ԱՍՏՈՒԱԾ, բու Աստուածդ ուրախութեան իղով օծեց թեզ, բու ընկերներէն աւելի»: Եւ [դարձեալ կ'ըսէ]. «Ետն, ով Տէր, սկիզբէն երկրին հիմերը դրիր, և երկինքը բու ձեռքերող գործն է. անոնք պիտի կորսուին, բայց դուն կը կենաս ու կը մնաս. ամէնքը լաթի պէս պիտի մաշին, վերարկոյի պէս պիտի զալարես զանոնք և պիտի փոխուին, բայց դուն նոյն ինքն ես, և բու տարիներդ պիտի չպակսին»: Եւ հրեշտակներէն որո՞ւ ըսաւ երբեք. «Իմ աջ կողմս նատէ, մինչև բու թշնամիներդ ուղերդող տակ դնեմ իբրեւ պատուանդան»: 2է՞ որ անոնք ամէնքը սպասաւորող հոգիներ են, որոնք սպասաւորութեան կը դրկուին անոնց համար՝ որ փրկութիւն պիտի ժառանգնեն» (Եբր 1.2—14):

Կը տեսնէ՞ք, թէ Որդին ո՞չ միայն հրեշտակ չէ, այլ ԱՍՏՈՒԱԾ է, աշխարհի և ամէն բանի ստեղծիչը, որ Հօրը «Էղոյեան բո՛ւն պատկերը»ն է, այսինքն նոյն Էղոյ Էղոյինը կամ բնութիւնը ունի, որովհետեւ Աստուածն «ծնած» է, անոր միակ, «միածին» ծնունդն է, որ հրեշտակներուն պէս «ծառայող նոգի» չէ, այլ «Տէ՛ր» է, յափտեան նոյնը, անփոխնելի և անանց, և բոլոր հրեշտակները անոր ծառայելու կոշտած են:

Ե.— Կ'ըսեն՝ թէ Յիսուս մարմինը յարութիւն չառաւ, այլ ամբողջութեամբ փառացաւ գերեզմանին մէջ, և Եհովան (=Աստուած) հոգեղին նոր մարմին մը ստեղծեց իրեն համար:

Սակայն Աստուածաշունչը յատակօրէն կ'ըսէ, թէ Յիսուս իր ՆՈՅՏՆ ՄԱՐՄԻՆՈՎ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՒ: Կարդան Ղոկասու Աւետարանէն. «Եբր [առաքեալները] այս բաները կը խօսէին, Յիսուս ինք կանգնեցաւ անոնց մէջտեղը և ըսաւ անոնց. «Խաղաղութիւն ձեզի»: Բայց անոնք զարհութելով կը վախճախին, ու կը կարծէին թէ ոդի մը կը տեսնէն: Եւ ըսաւ անոնց. «Ինչո՞ւ յառաջած էք, և ինչո՞ւ սիրտերնող մէջ խորհուրդներ կ'ելլեն: ՏԵՍՒՔ ԶԵՌՔԵՐՍ ՈՒ ՈՏՔԵՐՍ, ՈՐ ԵՍ ԻՆՔՍ ԵՄ. ՃՈՉԱՓԵՑՔ ԶԵՔ ԶԻՍ ՈՒ ՏԵՍՒՔ, ՈՐՈՎՃԵՏԵԿԻ ՈԳԻՆ ՄԱՐՄԻՆ ԵՒ ՈՍԿՈՐՆԵՐ

ՉՈՒՆԵՆԱՐ, ԻՆՉՊԵՍ ԶԻՍ ԿԲ ՏԵՍՆԵՔ ՈՐ ՈՒՆԻՄ»: Եւ ասիկա ըսեղով՝ ձեռքերն ու ոտքերը ցոյցոց անոնց» (Ղոկ 24.36—40): Դարձեալ, շաբաթ մը եսք եքք կրկին երեցաւ աշակերտներուն, թերահաւատ Թովմասին ըստ. «Մատդ հո՞ս բեր եւ նայէ իմ ձեռքերու, ու բե՛ր ձեռքդ իմ կողս խորէ» (Յովի 20.27): Հոգեղէն մարմին մը շօշափել կարելի պիտի չըլլա՛ր բնաւ, մինչդեռ Յիսուսի երկրատր մարմինն էր որ յարութիւն առած էր՝ նո՞ր յատկանիցներով: Այլապէս ի՞նչը յարութիւն առաւ եւ ինչո՞ւ Աստուածաշոնչը յարութեամ մասին կը խօսի: Եթէ Աստուած նո՞ր մարմին մը առեղծեց Յիսուսի համար, կը նշանակէ թէ Յիսոս մեռելներէն յարութիւն չառաւ, «եւ եթէ Քրիստոս յարութիւն առած չէ, ձեր համատքը պարապ բանէ, ու տակալին ձեր մեղքերուն մէջ էք» (Ա. Կոր 15.17):

Եթէ Յիսուսի մարմինը գերեզմանին մէջ մնաց ու փճացաւ, ինչո՞ւ չորս Աւետարաններն ալ կը պատմեն թէ մարմինը գերեզմանին մէջ չգտնուեցա՛, եւ ասիկա մեծագոյն վկայութիւնն էր անոր յարութեամ, ինչպէս Յովիանիւս Աւետարանիցը ինք թափոր գերեզմանը եւ մէկ կողմ դրուած պատանը ըստ «ՏԵՍԱԻ ԵՒ ՀԱՒՆԱՍ.Ց» (Յովի 20.8): Պարզ է, որ այդ փառարերավ մարմինը նոր յատկանիցներ ունէր այլես, ա'լ ենթակայ չեր մահուան, կըր-նար փակ դրսներէն անցնի, եւն: Կարդացէ՛ք նաև՝ Յովի. 2.18—22: Գործք 2.24—32: Հոսում 10.9:

4. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

Սուրբ Հոգին ալ աստուածութիւնը կ'ուրանան Եհովայի վկաները:

ա.— Կ'ըսեն՝ թէ Եհովայի (=Տիրոց) հոգին պարզապէս «գործօն ոյժ մըն է», եկեկորական ոյժին պէս, եւ հետեւարար անձ մը չէ:

Սակայն Աստուածաշոնչը մեզի ցոյց կու տայ թէ Սուրբ Հոգին բանական եւ գիտակից անձ մըն է որ կը խորի (Հոսում 8.27), կը խօսի (Մատթ 10.19—20), կ'առաջնորդէ (Յովի 16.13), կը միսիթարէ ու կը յանդիմանէ (Յովի 16.8), կը տրտմի (Եփ 4.30), կը քննէ մարդոց եւ Աստուծոյ խորհուրդները (Ա. Կոր 2.10—11) եւ բարեխոս կ'ըլլայ մեզի համար (Հոսում 8.26—27): Արդեօք ինքնութիւն չունեցող պարզ «գործօն ոյժ մը» կրնայ՝ այս բաները ընել. եկեկորական կրնայ՝ այս բաները ընել: Ասոնք անառարկելիորէն կը ցոցնեն, թէ Սուրբ Հոգին կատարեալ անձաւորութիւն մըն է, մէկը ամենասուրք Երրորդութեան երեք անձերէն:

բ.— Կ'ըսեն՝ թէ Սուրբ Հոգին անձ մը չըլլալով՝ բնականարար Աստուած ալ չէ: Սակայն Նոր Կոտակարանը մեզի ցոյց կու տայ թէ անիկա ո՞չ միայն անձ մըն է, այլ նաև՝ թէ Աստուած է, որովհետեւ «Հօրմէն կ'ելէ» (Յովի 15.26), ինչ որ կը նշանակէ՝ թէ Հօրը նետ նոյն բնութիւնը ունի: Նոյնպէս Ա. Կոր 12.3—Եին մէջ յատակօրէն ցոյց կը տրուի, թէ Սուրբ Հոգին Հօրը եւ Որդիին նետ միասին կատարեալ Աստուած է: Սահիկա ի յայտ կու գայ նաև Սանանիայի եւ Սափիրայի դրուագին մէջ, որ Պետրոս առաքեալ Սուրբ Հոգին «Աստուած» կը կոչէ, ըսեղով. «Սանանիա», ինչո՞ւ Աստուան քու սիրտդ լեցոց, որ դուն Սուրբ Հոգին սուս խօսիս եւ ագարակին զինեն խորեւ. ... Ո՞Շ թէ ՄԱՐԴՈՅՑ ՍՈՒՏ ԽՕՍԵՅԱՐ, ԱՅԼ ԱՍՏՈՒԹՈՅՑ» (Գործք 5.3—4):

5. ՄԱՐԴԸ ԵՒ ՀՈԳԻՆ

Ենովայի Վկաներ կը մերժեն մարդուն հոգի ունենալը եւ հոգին անսահմոթիւնը:

ա.— «Երսեն՝ թէ մարդս հոգի չունի՛: Մարդը «կենդանի հոգի» է, այսիքն շունչ ունեցող արարած է՝ բոլոր անատօներուն նման, բայց չունի անման հոգի: Հոգին նոյնինքն մարդն է,— կ'ըսեն,— մարդկային «հոգի» (=շունչ) չկա՛ մարմինէն դուրս կամ մարմինէն անկախ:

Բայց Սաստուածաշունչը որի՞շ բան կ'ըսէ: Ժողովովի գիրքը կ'ըսէ, թէ մահուան ատեն՝ «Մարդ իր չափտենական տունը կ'երթայ...: Այն ատեն հորը [=մարմինը] երկիր պիտի դառնայ՝ առաջուն եղածին պէս, եւ ՀՈԳԻՆ ՊԻՏԻ ԴԱՌՆԱՅ ԱՍՏՈՒԾՈՅ՝ ՈՐ ԶԱՆԻԿԱՆ ՏՈՒԱԿԱՆ» (Ժող 12.5 և 7):

Թէ մարդ մարմինէն եւ շունչն զատ հոգի մը ունի՝ Պողոս առաքեալ յուակօրէն կը յայտնէ մեզի: «Փնք՝ խաղաղութեան Սաստուածը թող ձեզ բոլորվին սուրբ ընէ, եւ ձեր բոլոր հոգին եւ շունչն ու մարմինը անարատ պահովի մինչեւ Տէր Յիսուս Քրիստոսի գալուստին ատենը» (Ա. Թես 5. 23): Յիսուս ըստ. «Մի՛ զախնաք անոնցն, որ մարմինը կը սպաննեն, եւ չեն կրնար հոգին սպաննեն. այլ աւելի՛ անկէ [=Սաստումէ] զախցէք դուք, որ կրնայ հոգին ու մարմինը գեհեննին մէջ կորսնցնել» (Մտք 10.28): Եթէ հոգի չկայ, ինչի՞ մասին է որ կը խօսի Յիսուս, մարմինն կորդին ի՞նչ բանն է որ կը յիշէ, որ չե՞ն կրնար սպաննեն: Կամ եթէ հոգին նոյնինքն մարդն է, որ մարմինէն դուրս որիշ բան չունի իր մէջ կամ իր եւս, մարմինն ինս ի՞նչն է որ Սաստուած գեհեննին մէջ կրնա «սպաննել»:

բ.— «Երսեն՝ թէ հոգին անման չէ՛: Բայց Սաստուածաշունչը կը վկայէ հոգիին անսահմոթեան: Մինչ իրեաներ կը քարկոծէին Ս. Ստեփանոսը, անհիկա «աղօթք կ'ընէր ու կ'ըսէր. «Տէր Յիսուս, ընդունէ՛ իմ հոգիս» (Կործք 7.58): Եթէ չկայ հոգի մը, որ մահուան ատեն՝ «Սաստուծոյ կը դառնայ», ի՞նչ եր որ պիտի «ընդունէր» Սաստուած Ստեփանոսի նահատակութեան ժամանակ: Մինչդեռ Սաստուածաշունչը կ'ուսուցնէ, թէ բոլոր մարդոց հոգիները երկնքի մէջ են. իսկ խօսքը մասնաւորեղով Քրիստոսվ փրկուած եւ իրեն միացած հոգիներուն, կ'ըսէ թէ անոնք երկնաւոր Երուսաղէմի մէջ են, Սաստուծոյ մօտը. «Դոք մօտեցեր եք Սիոն լեռան, եւ կենդանի Սաստուծոյ քաղաքին, երկնաւոր Երուսաղէմի, բիւրաւոր հրեշտակներուն, եւ երկինքը գրուած անդրանիկներու հանդիսաւոր ժողովին ու եկեղեցին, եւ Սաստուծոյ՝ որ ամենուն դատաւորն է. եւ ԱՐԴԱՐՆԵՐՈՒ ՀՈԳԻՆԵՐՈՒՆ՝ որոնք կատարուեք են» (Եբր 12.22—23):

Քրիստոս խաչի վրայ իր մահուլնեն եւոք գնաց իր խաչին յաղթանակը մնուալներուն ալ հոչակելու, ինչպէս կ'ըսէ Սաստուածաշունչը. «Քրիստոս սղ մեղքի համար մէկ անգամ շարշարուեցա, Արդարը անարդարներուն համար, որպէսզի մեզ Սաստուծոյ մօտեցնէ. որ թէպէս մեռաւ մարմինով, բայց կենդանի եղան հոգիով որով բանախ մէջ եղած հոգիներուն ալ գնաց ու քարոզեց» (Ա. Պետ 3.18—19): Իսկ թիս մը անդին կ'աւելցնէ. «Ասոր համար մեռելներուն ալ անեստանք քարոզեցա, որպէսզի դատուին մարդոց պէս՝ մարմինով, եւ կենդանի ըլլան Սաստուծոյ պէս՝ հոգիով» (Ա. Պետ 4.6): Եթէ հոգիները անման չըլլային, Պետրոս առաքեալ պիտի չըսէ՛ր թէ Քրիստոս դնաց ու մեռելներուն ալ «քարոզեց», այսիքն անետեց իր յաղթանակը մահուան վրայ:

Քրիստոսի օրով ալ կային Սադուկեցիները, որոնք չեն համար նոգիի գոյութեան, ինչպէս նաև մեռելներու յարութեան (տե՛ս Գրծ 23.8): Յիսուս լաւ պատասխան տուաւ անոնց, եթե օր մը զինք փորձելու համար եկան և մեռելներու յարութեան կապակցութեամբ հարցում մը ըրին: Սորիթէն օգտուելով, Քրիստոս տուաւ պատասխան մը՝ որ ինքնին կ'ենթադրէր նոգիին անմահութիւնը. «Ատոր համար չէ» որ մողորած էք, քանի ո՛չ Գիրքը զիտէք և ո՛չ Աստուծոյ զօրութիւնը: ... Մեռելներուն համար՝ թէ յարութիւն կ'առնեն՝ Մովսէսի գիրքին մէջ չէ՞ք կարդացեր մորենիին կապակցութեամբ, ի՞նչպէս Աստուծ անոր խօսեցաւ, ըսկով. «Ես եմ Աքրահամի Աստուածը, և Խահակի Աստուածը, և Յակոբի Աստուածը»: ԱՆԻԿԱ ՄԵՐԵԼՆԵՐՈՒՆ ԱՍՏՈՒԱԾԸ 2՛, ԱՅԼ ԿԵՆԴԱՆԻՆԵՐՈՒՆ. որեմն դուք խիստ մողորած էք»: (Մթ 12.24 և 26—27: Հմտ. Մթ 22.31—31: Պոկ 20.87—88): Չատ յատկանշական է, որ, ըստ Պոկասի Աւետարանին, այդ խօսքն անմիջապէս եռոք Քրիստոս կ'աւելցըն. ՈՐՈՎՃԵՏԵՒ ԱՄԵՆՔԸ ԱՆՈՐ [ՀԱՄԱՐ] ԿԵՆԴԱՆԻ ԵՆ» (Պ.կ 20.88):

Սրդէն տեսանք, թէ Փիլիպեցիներուն ուղղուած համակին մէջ, Պօղոս կ'ըսէք թէ Տէր Յիսուս Քրիստոսի պիտի երկրպագեն թէ՝ երկնաւոր-ները, թէ՝ երկրաւորները և թէ՝ «Սանդարամետականները» (Փլա 2.9—11): Երկնաւորները հրեշտակներն են, երկրաւորները երկրի վրայ ապրող մարդիկը: Խսկ որո՞նք են սանդարամետականները: «Սանդարամետ» կոչուածը մեռելներու աշխարհն է, որ կ'ապրին մեռելներու հոգիները մարմիննեն ան-չատուելէ եռք: Հետեարար, սանդարամետականները մեռելներու հոգիներն են: Արդ, առաքեալին լիշած «սանդարամետական» բառը ցոյց չի տար, թէ մարմիններէն բաժնուելէ ե՞տք ալ հոգիները գոյն են, և ատոր համար նաև, որ Աստուծ «կենդանիներուն Աստուածը» կամ «հոգիներուն Աստուած»ը կը կոչուի (Թուոց 16.22, 27.16: Եբր 12.9: Ա. Պետ 2.8»):

6. ԿԻՆԸ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՄԱՅՐԸ

Ենուկայի Վկաներ կնոշ համար կ'ըսէն թէ այր մարդուն յարաքերաբար «աստորադաս արարած մըն է», և ատոր համար ալ բացարձակ հայ-հոյութիւն է «ուեւ կին «Աստուածամայր» կոչել»: Բայց Աստուածաշունը ցոյց կու տայ թէ Աստուած այր մարդն ու կինը համասար ստեղծեց, երկուրն ալ իր պատկերով ու նմանութեամբ (Ծննդ. 1.27: Հմտ. Մթ 19.4), անոնց ստեղծման օրը երկուրին ալ տուաւ «Ադամ», այսինքն «մարդ» անոնը (Ծննդ. 5.2), և երկուրին ալ տուաւ աշխարհին տէր ըլլալու պատասխանաւութիւնը (Ծննդ. 1.28): Ժիշտ է որ անոնք այր մարդուն «օգնականը» կոչուած են (Ծննդ. 2.18), և Պողոս առաքեալ ուսուցանելու արտօնութիւն չի տար անոնց (Ա. Կոր 14.34—35: Ա. Տիմ 2.11—14), բայց անոնք այր մարդուն հետ մէկ միութիւն են (Եփ 5.25 և 28: Հմտ. Կող 3.19), և միշտ ալ պատիփ առաքեալ պէտք է ըլլան (Ա. Պետ 3.7):

Աստուծոյ Որդին ամօթ ու նուաստութիւն չհամարեց «կնոշմէ մը» ծճիլը (Գաղ. 4.4) և մարդոց համասարութիւնը յայտարարեց: Խսկ Քրիստոսի առաքեալը՝ Պողոս կ'ըսէ, թէ Քրիստոսի միացած անձերուն մէջ «ԱՅ ո՛չ Հքեայ կայ, ոչ ալ Յոյն, ո՛չ արու կայ և ոչ ալ էգ. որովհետեւ դուք ամենքդ ալ ՄԷԿ էք. Քրիստոս Յիսուսի» (Գաղ. 3.28): Խսկ ինչ որ Աստուած համար կը յայտարարէ՝ մարդիկ չեն կրնար ստորադաս դարձնել:

Գալով «Աստուածամայր» կոչումին, ճիշդ է որ Աստուածաշոնչին մեջ չկայ այդ անուանումը, բայց այն անձը որ ճշմարտապէս կը ճանչնայ Աստուածոյ նրդին, Յիսոս Քրիստոսը, իբրև կատարեալ եւ յաւետ օրինեալ Աստուած, անոր համար «ԱՍՏՈՒԱԾՈՄԱՅՐ» կոչումը ամենապատշաճ եւ ամենէն արժանի կոչումն է, տրուած այն օրինեալ կնոց՝ Մարիամին, որ ծնունդ տուա մեր Փրկիչ Աստուածոյն:

7. ՄԵՂՔ ԵՒ ՓՐԿՈՒԹԻՒՆ

Քրիստոսի փրկագործութիւնը շատ իմաստ չունի Եհովայի Վկաներուն համար, որովհետեւ ներկայ կեանքի մեջ փրկութիլ կարենոր չէ, —Կ'ըսեն: Հաս իրենց, Քրիստոս իրական փրկութիւն չէ՝ բերած ունէ մեկուն, կամ չէ փրկած ունէ մեկը, բայց ինքնիրում: Հաս իրենց աղանդին՝ «Քրիստոսի փրկութիւնը ամէն մարդու յախտենական կեանք կամ երշանկութիւն չ'ապահովեր, այլ ամենուն համար առիթ մը Կ'ընծայէ յախտենական կեանքի համար»: Ասիկա կը նշանակէ՝ թէ Աստուածոյ հաւատացող մը պարզապէս Քրիստոսի օրինակով ինքզինքը պէտք է փրկէ՝ իր սեփական գործերով:

Բայց հարցնենք, թէ այս ատեն ինչո՞ւ եկա Քրիստոս, և մանաւան՝ ինչո՞ւ խաչին վրայ իր արինը թափեց: Խըրեւ աւազա՞յ խաչուեցա, թէ ինքզինք զոհեց Աստուածոյ կամքով՝ իր արինով մեզ գնելու և փրկելու համար, ինչպէս ըստ ինք եւ կը վկայէ Նոր Կտակարանը (Մրկ. 10.45: Ս. Տիմ 2.6: Տիտ 2.14): Պողոս առարեալ կ'ըսէ. «Ամէնքը մեղք գործեցին, և Աստուած փառքէն պակսած են: Եւ անոր շնորհքովը ձրի Կ'արդարանան Քրիստոս Յիսուսով եղած փրկութեամբը» (Հոռմ 3.23—24): Իսկ այդ փրկութիւնը իրագործուեցա Քրիստոսի արինով. «Մենք փրկութիւն ունինք իր արեան միշոցաւ, մեղքի թողութիւնը՝ իր շնորհքին ճոխութեան չափովը» (Եփես 1.7): Կարդա՛ նաև. — Գործք 20.28: Կող 1.14: Եպր 9.12: Ս. Պետ 1.18—21: Յայտ 5.9:

Եհովայի Վկաներ կ'ըսեն՝ թէ այս կեանքին մեջ մեղաւոր ըլլալը կամ չըլլալը նշանակութիւն չունի, բանի Դատաստանի Օրը մարդոց նոր առիթ-ներ պիտի տրուին՝ իրենք զիրենք փրկելու:

Աստուածաշոնչը ուրի՛շ բան կ'ըսէ, սակայն: Երբայիցց նամակին մեջ կը կարդանք. «Մարդոց սահմանուած է մէկ անգամ մեռնիլ, և անկէ եւոք դատաստան» (Եփր 9.27): Որոշապէս կ'ըսուի՝ մէկ մաս և մէկ դատաստան: Այդ մասին Քրիստոս կարենոր ուսուցում մը կը փոխանցէ՝ Մեծահարուստին և Սղբատ Ղազարոսի առակով, որ դժոխիք մեջ տանջուող և օգնութիւն խնդրող Մեծահարուստին Աքրահամ նահապետ կու տայ հետեւալ կարենոր պատասխանը. «Որդեակ, միտքը բեր, որ դուն քու կեանքիդ ատենք քու բարիքներդ առիք, նոյնպէս Ղազարոս՝ չարիքներ. նիմա անիկա (հոս) կը միսիրարոտի, ու դուն կը տանջուիս» (Առկ 16.25): Այդ ուղղութեամբ իրենց պատասխան կու տայ նաև Երբայիցց նամակին սա հասուածը, որ կը ցուցնէ թէ նո՞ւ է միայն եւ միա՛կ պատեհութիւնը փրկութեան. «Անհնար է մէկ անգամ լուսաւորուածներուն, որոնք երկնաւոր պարզակին համը առին և Սուրբ Հոգիին հաղորդ եղան և Աստուած բարի խուրին և գալիք աշխարհին օրութիւններուն համը առին, իյնալէ ետք՝ նորէն ապաշխարութեամբ նորոգուի. որովհետեւ կրկին Աստուածոյ Որդին խաչը կը նաևն իրնեց անձին, ու կը խացտառակեն» (Եփր 6.4—6, 12. 15—17,25):

8. ՔՐԻՍՏՈՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՆՈՏԸ

Ենովայի Վկաներ Քրիստոսի երկրորդ գալուստին մասին Կ'ըսե՞՞ թէ Քրիստոս իր մարմնով և տեսանելի ձևով պիտի չգայ, այլ իր գալը միայն նոգեար «Ենրկայութիւն» մը, իրենց իսկ բառերով՝ «Երկրորդ Ենրկայութիւն» մը պիտի ըլլայ, որ արդէ՛ իսկ եղած է:

Սակայն Աստուածաշունչը այդպիսի շինու տեսութեան մը հասանութիւն չի տար: Ընթիւնականակը, յայտնապէս կ'ըսէ թէ Երկրորդ գալուստը պիտի ըլլայ պարզօրէն տեսանելի՞: Քրիստոս այդ մասին ըստա. «Եւ շուտ մը, այն նեղութեան օրերէն եսք, ... մարդու Որդիին նշանը պիտի երեսի երկինքի մէջ, և այն ատեն երկիր բոլոր ազգերը կոծ պիտի ընեն, և ՊԻՏԻ ՏԵՍՆԵՆ մարդու Որդին երկինքը ամպերուն վրայ եկած, գօրութեամբ ու մեծ փառքով» (Մտք 24,29—30):

Համբարձման լեռան վրայ, մինչ աշակերտները իրենց մեռութիւր հայեցը ուղղեր էին երկինք՝ որ պահ մը առաջ բարձրացեր եր իրենց Տէրը, անս սպիտակ գգեստներով երկու հրեշտակներ իրենց մօս կանգնեցան և ըսին. «Ավ Գալիկեացի մարդիկ, ինչո՞ւ կեցեր դէայի երկինք կը նայիր. այս Յիսուսը որ ձեզմէ երկինք համբարձաւ, ԱՅՍՊէ՛Ս ՊԻՏԻ ԳԱՅՅ ԻՆՉՊէ՛Ս ՏԵՍԱՔ ԱՆՈՒՐ ԵՐԿԻՆՔ ԵՐԹԱԱԼ» (Գործ 1,11): Պողոս առաքեալ կ'ըսէ թէ մարդիկ «պիտի սպասեն» անոր գալուստը տեսմելու. «Եւոք կուրքերէն Աստուծոյ դարձար՝ կենդանի ու ճշմարիս Աստուծոյ ծառայելու համար, և երկինքէն սպասելու անոր Որդիին, որ ինք մեռելներէն յարուցանց. այսինքն Յիսուսը, որ մեզ կ'ազատէ գալիք բարկութեմէն» (Ա. Թես 1,10): Իսկ թիշ մը անդին աւելի բացայալունով կը գրէ. «Հետեւարար կ'ըսենք ձեզի Տիրոջ խօսրովը, թէ մենք որ մինչև Տիրոջ գալուստը ողջ կը մնանք, բնաւ մնչեցեալներէն առաջ պիտի շանցնենք: Որովհետեւ Տէրը ինք ազդարարութեան հրամանով, հրեշտակապետին ձայնովը և Աստուծոյ փողովը երկինքէն պիտի իջնէ, և Քրիստոսով մեռածները նախ յարութիւն պիտի առնեն: Ֆեռոյ մենք ալ, որ ողջ մնացած ենք [-Կ'ըլլանք], անոնցմով մէկտեղ պիտի յափշտակութինք ամպերով Տիրոջ առջև ելլելու օդին մէջ, և այնպէս յախտեան Տիրոջ հետ պիտի ըլլանք» (Ա. Թես 4,14—16): Անս թէ ինչո՞ւ Յայտնութեան գիրքին սկզբնաւորութեան, Յովհաննես առաքեալ Քրիստոսի վերաբան գալուստին համար կը գրէ. «Անս ամպերով կու զայ. և ԱՄԷԿ Ա.2.Ք. ՊԻՏԻ ՏԵՍՆԵ ԶԱՆԻԿԱ» (Յան 1,7):

9. ՄԵՌԵԼՆԵՐՈՒ ՑԱՐՈՒԹԻՒՆ

Մեռելներու յարութեան մասին Ենովայի Վկաներ շնաշխարհիկ նորութիւններ ունին:

ա.— Կ'ըսե՞՞ թէ երբ մեռելներու յարութեան ժամանակը զայ, մեռելներ իրենց ներկայ մարմնով յարութիւն պիտի չառնե՞ն. այլ՝ թէ այս մարմինները ամբողջութեամբ պիտի փնանան, և անոնց փոխարէ՞ն յարութիւն տանողներուն նորաստեղծ մարմին մը պիտի տրուի:

Քրիստոսի յարութեան մասին խօսած առեն բինք արդէ՛, որ առաջ մարմիններու յարութեան հասարքին մեռելներու յարութիւնը խարկանը ու խարեւթիւն է պարզապէս: Պողոս առաքեալ հանդերձեալ կեանքի մասին խօսելով՝ որոշապէս կ'ըսէ, թէ ներկայիս «մենք ալ, որ Հոգիին առաջին

պատուղը ունինք, մենք մեզմէ մեր անձերուն մէջ կը հառաչենք՝ որդեգրութեան, ԱՅՍԻՒՆՔՆ ՄԵՐ ՄՄ. ՄՄ. ՄՄ. ԱՅՍ. ՏՈՒԹԵԱՆԸ, ապասկով» (Հոդ 8.28): Քրիստոնեութիւնը համերձնալ կեամբի իր պատկերացումին մէջ յունական և այլ աշխարհներու իմաստափրական ըմբռնումներէն կը տարբերի ճիշդ անոնք՝ որ ՄՄ. ՄՄ. ՄՄ. ԱՅՍ. ՏՈՒԹԵԱՆԸ Կ'ընդունի, որուն առաջին օրինակը եղաւ Քրիստոս: Այդ հասարքով ալ Պօղոս առաքեալ Կ'ընէ: «Եթէ կը հաստանք թէ Ֆիւսու մեռա և յարութիւն առա, նոյնպէս ալ Աստուած Անջեցեկալները Ֆիւսով պիտի թերէ անոր նես» (Ա. Թէս 4.18):

թ.— Կ'ըսեն թէ բոլոր մեռելները չէ՝ որ յարութիւն պիտի առնեն, այլ միայն ընտրուածները կամ արդարները: Սակայն Աստուածաշոնչը հակառակ կ'ըսէ: Ֆիւսու առիթով մը Երուսաղէմի մէջ յայտարարեց. «Ժամանակ պիտի գայ, եթիւ բոլոր գերեզմաններու մէջ եղողները անոր [= մարդու նրդիթն] ձայնը պիտի լսն և դրս պիտի գան. անոնք որ բարի գործեր են՝ կեամբի յարութեան համար, և անոնք որ չար գործեր են՝ դատապարտութեան յարութեան համար» (Յով. 5.28—29): Պարզ չէ՝ որ յարութիւնը բոլորին համար կ'ըսուի և ո՛չ միայն արդարներուն: Այդ մասին կասկած չի ձեր Պօղոս առաքեալ, որ Պարեստինեան Կեսարիայի մէջ, Ֆելիքս կատավարիշին Աերկայութեան տեղի ունեցող իր դատավարութեան ըմբացքին յայտարարեց. «Յոյս ունիմ առ Աստուած, ինչպէս ատոնք [= Հրեաներ] ալ ակնկալութիւն ունին, որ մեռելներու յարութիւն պիտի ըլլաց, թէ՛ ԱՅՆ. ՄՄ. ՆԵՐՈՒՆ ԵՒ ԹԷ՛ ՄԵՂԱ. ԽՈՐՆԵՐՈՒՆ» (Գործ 24.15):

10. ԴԱՏԱՍՏԱՆԻ ՕՐ ԵՒ ՀԱՏՈՒՑՈՒՄ

Դատաստանի Օրուան և Դատաստանին մասին Եհովանի Վկաներ այսպէս կ'ուսուցանեն.—

ա.— Կ'ըսեն թէ իրական իմաստով օր մը չէ անիկա, այլ երկար ժամանակաշրջան մըն է, եթիւ իրենց արդարութեան համար մեռելներէն յարութիւն առածները անգամ մը ես պէտք է հաստատեն Աստուծոյ իրենց հաստարմութիւնը:

Սակայն Աստուածաշոնչը կ'ըսէ. «Ինք [= Աստուած] օր մը սահմանեց որուն մէջ աշխարհն արդարութեամբ պիտի դատէ այն ժարդուն [= Քրիստոսի] ձեռքով՝ որ որոշեց » (Գործ 17.81): Աստուածաշոնչը ո՛չ միայն կը խօսի «Օր»ուան մը մասին, այլ նաև «ատեան»ի մը մասին, որ հազար տարի չի յուշեր, այլ միանգամընդմիշտ կատարուելիք դատաստանական պահ նը, ինչպէս Քրիստոս ինք ալ Աերկայացոց վերջին դատաստանի պահը (Մտք. Մտք. 25.31—46): Պօղոս առաքեալ այսպէս կը գոր. «Ամենքս ալ Քրիստոսի ատեանին առջև պիտի Աերկայանանք, որպէսզի ամեն մէկը իր մարմնովը ըրածներուն փոխարենք առնէ՛ ի՞նչ որ գործեր է, թէ՛ բարի և թէ՛ չար» (Բ. Կոր 5.10): Հմմտ. Մտք. 5.22: Հոդ 14.10:

թ.— Կ'ըսեն թէ Դատաստանի Օրը հաշուեառութիւն չկա՞յ և պիտի ըլլաց: Բայց Քրիստոս կ'ըսէ. «Ձեզի կ'ըսեն, թէ ամէն դատարկ խօսք համար՝ որ մարդիկ կը խօսին, դատաստանին օրը հաշին պիտի տան» (Մտք. 12.36): Հոդմայեցոց համարը նոյն բանը կ'ըսէ. «Դուն ինչո՞ւ բու եղրացը կը դատես, կամ ինչո՞ւ բու եղրացը կ'ամարգես, որովհետեւ բոլորս ալ Քրիստոսի ատեանին առջև պիտի կանգնենք: Որովհետեւ գրուած է. «Ես կենդանի եմ,—կ'ըսէ Տէքը,—որ ամէն ծովոկ ինքի պիտի ծոփ, և

ամէն լեզու Աստուծոյ պիտի խոստովանիր»: Ուրեմա ՄԵԶՄԻ: ԱՄԷՆ ՄԷԿԸ ՃԱԾԻԲԻ ՊԻՏԻ ՏԱՅ ԻՐ ԱՆՁԻՆ ՀԱՄԱՐ» (Հռ 14.10—12): Նոյնակա Պատրոս առաքեալ կը գրէ, թէ նեխանուական ցանկովիմներով ապրողներ պատասխան պիտի տան անոր՝ որ պատրաստ է դատել կենդանիները ու մնուները» (Ա. Պետ 4.5):

Գ.— Կ'ըսե՞ն թէ Դաստանանի Օրը մարդիկ պիտի շդատոփ'ն իրենց մնորայ կևանդին և կատարած գործերուն համար, և ուստի նաև չկա՞յ «հաստուցում» իրաքանչիրին գործերուն համեմատ: Բայց Աստուածաշնչը հակառակ'ն է որ կը պարզէ մեզի:

Պողոս առաքեալ իր ժամանակին նոյն բանը որպացողներուն կ'ըսէ: «Մի՛ խարդիք, Աստուած ծաղը չ'ըլլար: Որովհետն ինչ որ մարդ կը սերմանէ, նոյնը պիտի հնձէ: ան որ իր ժամանակին կը սերմանէ, այն ժամանակին պիտի հնձէ: և ան որ Հոգիին կը սերմանէ, այն Հոգիին յախտենական կեանք պիտի հնձէ» (Գաղ 6.7—8): Հոգմայիցոց համակին մէջ առաքեալը կ'ըսէ: «Ան մարդ, ...դուն որ խստորեամբ և անզիդ սրտով քո անձիդ բարկութիւն կը դիզես՝ բարկութեան [օրուաճ] և Աստուծոյ արդար դատաստանին յայտնուելու օրուան համար, որ ԱՄԷՆ ՄԷԿՈՒԽՆ ԻՐ ԳՈՐԾԵՐՈՒԽՆ ՓՈԽԱՐԵՒՆԸ ՊԻՏԻ ՀԱՏՈՒՅՑԱՆՆԵ: յախտենական կեանք՝ անոնց որոնք բարի գործերու մէջ համբերութեամբ յարատեւելով փառը ու պատի և անսահորդին կը խնդրեն, բայց անոնց որ հակառակ են, ճշմարտութեան անհնագանի և անիրատութեան հնագանդած՝ բարկութիւն և սրտմատութիւն, նեղութիւն և տառապանք պիտի ըլլայ, ամէ՛ն մարդու վրայ որ չար կը գործէ» (Հռոմ 2.5—9): Եփեսացոց համակին մէջ նոյնը կը կրկնէ: «Ամէն մէկը ինչ բարիք որ ըստ՝ նոյնը Ֆիրոշմէ պիտի ընդունի» (Եփս 6.8):

Յայտնութեան գիրքին մէջ կը կարդամք. «Են տեսայ պատիկ ու մեծ մեռնելները, որոնք Աստուծոյ առջև կանգնած ենն. և գիրքերը բացուեցան, և բացուեցան որիշ գիրք մը, այսինքն Կենաց գիրքը, և ԳԵՐԱԵԵՐՈՒԽ ՄԷԶ ԳԵՐՈՒՍԵՆԵՐՈՎ: ՄԵԹԵԼՆԵՐԸ ԴԱՏՈՒՅՑԱՆ ԻՐԵՆԸ ԳՈՐԾԵՐՈՒԽՆ ՀԱՄԵՆՄԱՏ» (Յատ 20.12): Իսկ նոյն գիրքին վերջանորութեամ՝ յայտնողը ինը՝ Քրիստոս արքական կը բարտարաք. «Անս եւ շուտով կու գամ, և վարձու ինձի հետ է՝ ԱՄԷՆ ՄԷԿՈՒԽՆ ԻՐ ԳՈՐԾԵՐՈՒԽՆ ՀԱՄԵՆՄԱՏ ՀԱՏՈՒՅՑԱՆԵԼՈՒ» (22.12):

Մեզի պարզապես ամենականակի է, թէ ի՞նչպէս կարելի է որպան արքան բացալայտ վկայութիւնները:

11. Դժուռք ԵՒ ՅԱԼԻՑԵՆԱԿԱՆ ՏԱՆՅԱՆՔ

Մատուան և համերձեալ կեանքի մասին խօսելով, Եթովայի Վկաներ դժուռքի կամ յախտենական տանչանի գաղափարը ամրողովին կը փորձեն որպան:

Ա.— Կ'ըսե՞ն թէ չկա՞յ դժուռք և յախտենական տանչանը, ասոնք Աստանային հնարած սուտեր են: Չարերում վախճանը մաս է,—կ'ըսե՞ն,—այսինքն՝ ընթիշտ փնտում է, ո՞չ թէ տանչանը:

Դժրախտարաք, սակայն, Աստուածաշնչը իրենց կողմը չէ: Քրիստոս վերջին դատաստանի պատկերը գծած տանեն չարագործներուն ըստ. «ՄԷԿ-ոյի՝ զացէք ինձմէ, աքիծեալներ, ՅԱԼԻՑԵՆԱԿՈՒԽ ԿՐՈՒԽՆ ՄԷԶ» որ պատրաստած է Աստուածին և իր նրեշտակներուն (Մտք 25.41), և կ'անել-

ցըմ. «Եւ աստեր պիտի կրթան ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ՏԱՆՉԱՆՔԸ իսկ արդարները՝ բախտենական կեանքը» (25.46): Մեծամարտատին և Սղբառ Դագարոի առակին մէջ Քրիստո Մեծամարտուոր կը պատկերացնէ ո՞չ թէ մեռած ո ոչնչացած, այլ «ԹԺՈԽՔԻՆ ՏԱՆՉԱՆՔՆՔՆԵՐՈՒԹԻՆ ՄԷՋ» (Պոկ 16.28—25): Իսկ Պօղոս առաքեալ, ինչպէս տեսանք, Դատաստաճի Օրուան հասուցումին մասին խօսելով կ'ըսէր. «Քայլ անոնց» որ [Սաստոծոյ] հականուկ են, ճշմարտութեան անհնազանդ և ամիրաւութեան հնազանդած՝ ԲԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՏԱՏՈՒԹԻՒՆ, ՆԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԱՌԱԴԱՆՔ. ՊԻՏԻ ԸԼ-ԼԱՅ, ամէն մարդու վրայ որ չար կը գործէ» (Հոս 2.8—9): Սրբեօք այս բացարութիմները մաս և փացո՞ւմ կը նշանակեն, թէ ՏԱՆՉԱՆՔ, որմէ փախտատ չունին Ենովայի Վկանքը: Կարդացէ՞ր նաև.— Մրկ 9.42—47: Հմտու. Դաճ 12.2: Ցույթ 5.29:

թ.—Կ'ըսեմ՝ թէ Սատանան և իր արքանեակներն ալ պարզապէս պիտի փառանան և ո՞չ թէ բախտեան պիտի տանչումին:

Ցայտուութեան գիրը սա կարեար վկայութիւնը կու տայ. «Եւ երկինքէն, Սատոծմէն կրակ իշառ և սպառեց զանոնք [—Սատանային ետեւէն մոլուածները]. և Բանաւարկուն, որ զանոնք մոլորեցոց, ձգուեան կրակի ու ծծումբի լիճին մէջ, որ եր զազանք, և սուս մարզարէն. և ՊԻՏԻ 20.02ԱՐ-ՈՒԻՆ ՑԵՐԵԿ ՈՒ ԳԻԵԵՐ ՅԱՒԻՏԵՆԱՆՍ ՅԱՒԻՏԵՆԻՑ» (Յայտ 20.9—10):

12. ԿՐՈՆԱԿԱՆ ՏԾՆԵՐ

Եկեղեցիներէն ներս տօնուող կրօնական տօներուն (նաև ազգային տօներուն) համար կ'ըսեն թէ Սատուած կամ Սատուածաշունչը չ' հրանազանց զանոնք. թէ Ծնունդը կամ Զատիկը նեթանուական են և ո՞չ բրիտունէալան:

Սատուածաշունչը ճանշող անձը միայն կը ծիծաղի այս արտապատութեանց վրայ, որովհետեւ Սատուած ի'նըն է տօները հրանազորդը (Ելք 23. 14—17; Պետացոց 23-րդ գլուխ: Թուոց 29—30 գլուխներ, եղթ), որպէսզի անոնք Տէրը պաշտկու յառուկ առիթ դառնան, իր ժողովորդին համար ուրախութեանց առիթները ըլլան, և ծառայեն նաև՝ ապագայ փրկութեան և հանդերձնալ կեանքի սրատկերը դրույնելու հաստացեալներու միտքերուն մէջ:

Ծնունդին մասին շիտուկ է որ Նոր Կոսմարանը բան մը չ'ըսեր, բայց թէ առող ի'նչպէս տօնը նեթանուական կ'ըլլայ՝ դո՞ւթ դատեցէք:

Գալոյ Զատիկին, ամէկա Սաստոծոյ ժողովորդին ազատազրութեան տօնն եր և Քրիստո ո՞չ միայն միշտ պամեց զայն, այլ իր չարչարանքներէն ու մանուրմէն առաջ յառուկ դիտումով մը ուզեց Զատիկական ընթրիքը ուսել իր աշակերտներուն նետ (Ակ 22.15), Զատիկի տօնին փրկագործական նոր իմաստ մը տապու և զատկական գանձուկին ճաշակումին փոխարէն իր տորք Մարտնին և Արեան բաիչ Խորմորդը հաստաներու համար (Մոն 26.26—29; Մր 14.22—25; Ակ 22.14—20; Ա. Կր 11.28—26): Եւ Պօլոյն ստարեալ Կոթուացիներուն զրած ստացին նամակին մէջ բացարարութէն կ'ըսէ, Ճեկուացուցէն ճիշ խմորը մէկնի, որպէսզի ըլլաք նո՞ր զամգուած, առանց թթիսնորի: Գանձի Քրիստո, ՄԵՐ ԶԱՏԻԿԻ, մեզի համար զնոտեցան: ՈՒՍՏԻ ՏԾՆ ԿԱՏԱՐԵՆՔ ո՞չ թէ նիշ խմորով, և ո՞չ թէ չարութեան

ու անզամութեան խօսքը, այլ անկանութեան, ջշմարտութեան ամիսնը նաղուա (5.7—8):

18. ՊԵՏԱԿԱՆ ԽԾԽԱՆՈՒԹԵԱՆՑ ՀՆԱՁԱՆՆՈՒԹԻՒՆ

Ենովայի Վկասեր պետական իշխանութիւններում համար Կ'ըսեն՝ թէ անոնք Սաստանային կողմէ դեկանարուած են, անոր կը պատկանին, և նևուարար իրաւ նատառացեալը պէտք չէ՝ մասնակից ազգային-բաղարարկան կամքի, ո՞չ այ պէտք է բարձ ազգային ու բաղարարկան իշխանութիւնները, ո՞չ այ պէտք է զինուրացած ծառադրութիւն ընէ կամ պատի ընծայէ պետական դրաշակին, որ Սաստանային իշխանութեան խորհրդանշը է:

Սատրայի Սաստանաշաշունչը ամրողութեամբ տարրեր բամ կը սորվեցնէ: «Կայ» Սաստանաշաշունչը ունի տեղ չ'ըսէր թէ Սաստան աշխարհի իշխանութիւնը կամ կառավարութիւնը Սաստանային յանձնեց, այլ՝ մարդուն յանձնեց (Ծն 1.26—28), թէպէս զիտէր թէ մարդիկ միշտ չէ որ արժանի ձեռով պիտի գործածին իրենց վառակուած այլ իշխանութիւնը: Գարով աշխարիք յագաւորութեամց ու վետութեամց, Երևանայի մարդարդութեամ մէջ Սաստան իմք Կ'ըսէ, և՛ս է որ բոլոր երկիրները տուեր եմ իմ ծառային՝ Բարերնի Նարուղողնուոր բազարին ձեռքը» (Ծր 27.0): Դամիշէի մարգարերինամ մէջ Սաստունոյ համար Կ'ըսով, «Ո՛մ է ծաճանակները և ծանրը փոխողը, բազարները իշեցնողը և բազարները դնողը» (Կն 2.21), մնարձեալն է որ կը սիրէ մարդոց բազարութեան վրայ, և որու որ ուզէ կու տայ զայթ, և մարդոցէ անարգը կը կարգէ անոր վրաք (Կն 4.17):

Սրբ, բայցնայլ՝ այլ իշխանութիւնները, կառավարութիւնները Սաստունոյ հովանակիք տակմ են, և ո՞չ թէ Սաստանային: Սառոր համար էր, որ Քրիստոս զիմը փորձող Հրեաներուն բառ, «Ինչ որ կայսրին է՝ կայսրին տուեր, և ինչ որ Սաստունոյ է՝ Սաստունոյ» (Ծար 22.22): Դուռս առարեալ պետական իշխանութիւններուն մնազանդիլ կը սորվեցնէ, որովհետեւ «չկայ իշխանութիւն մը որ Սաստունոյ չըլապ, և ԱՅՆ ԽԾԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ Ո՛՛ ԿԱՆ՝ ԱՍՏՈՒՆԾՄԷ ԿԱՐԳՈՒԽԾ ԵՆ», և թէ իշխանութեար «Սաստունոյ սպասուորներն են, որովհետեւ կարգ ու կանոն կը հաստատեն ու կը պահպանեն ձեռու մը Սաստունոյ գործը կատարեալով, բարիքները նովաճարեալով, դրուատեալով ու բացակերեալով, իսկ չարիքները պատմեալով ու սահմանայակերով (Հոռո 18.1—7; Տե՛ս Սահա Ցիտ 8.1; Ս. Պետ 2.18—14), որովհետեւ Սաստան ամերգութեան Սաստանը չէ, այլ կարգաւորութեան և խալադութեան (Բնիտ, Ս. Կր 14.88):

Այդ զիտակցութեամբ այ բրիստունայ ամենաը պէտք է բարգէ պետական իշխանութիւնները և մնազանդի անոնց՝ պետական-բաղարարկան գործերու մաստարարման մէջ, այլ ձեռով ամուղղակիօրէն իր հարատակութիւնը բարտմելով Սաստունոյ:


* * *

Այսրանոց չե՛ն վերջանար Ենովայի Վկաներուն քնանած բացարութիւնները և Սաստանաշաշունչի պարզ ու վեհու ճշմարտութեան դէմ քացող սոսութիւնները, բայց այսրանը անելիով կը բարէ ցոյց տալու՝ թէ իրենց

Երամցոցածը Աննափոխուած «առեսարան» մբ է, որտեղ կը զգուշացմենք բոլոր Եշմարիս աստուածապաշտները: Ամպարիս կարդացի՝ թ Աշուած Բամարները և դուք անձա՞մբ Բաստանեցեք, որպեսզի «զիտմար Եշմարսութիւնը», և Եշմարտութիւնը ձեզ պիտի ազատէ» չարին դրդումով իրեմց լաւած որոգացմենքէն (Բմթ. Յոլի 8.82):

Որովհետե՞ւ՝

Եշմարտութիւնը միմն ու խարիսխ է մեր Բատատին և մեր Փրկութեան, և Եշմարտութիւնը պիտմալը պարուն է խրաբանչիր գիտակից Բատատեալի, անոյ զիմուելու և անոյ պարարելու Բամար աստութեան և բոլոր մոլորեցոցի Անրուն դէմ: Անս թէ ինչու «Այս բամերը զրուեան, որպեսզի Բակատար թէ Ձիուս Քրիստոս [«Մեսիան»] է, Աստուծոյ Որդին, և որպեսզի Բատատալով կեամբ ոմենար Անոր անմոնի» (Յոլի 20.21):





ՆԱԹՈՒՐԱ ԱԲԵԴԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑԸ Բ—Գ ԴԱՐԵՐԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Վաղ քրիստոնեական գրականության ուսումնափրության առաջնակարգ հարցերից է նեթանուական փիլիսոփայության մկանուամբ Նկեղեցու Հայութի դիրքորոշման հարցը:

Հայութի է, որ քրիստոնեական հավատքի ծագման և զորացման հետ միաժմ փիլիսոփայությունն սկսեց կորցնել իր նեղինակությունն ու կարևորությունը: Նախ՝ այն վատանությունը, որ քրիստոնեական կրոնն իր մեջ բովանդակում է բոլոր այն ճշմարտությունները, որոնք անհրաժեշտ են մարդու երշամկության և փրկության համար, ապա՝ փորձառական այն համոզմունքը, որ անվերջ ճշմարտության ձգտող մարդկային միտքը տկար ու անզոր է հասնելու բացարձակ ճշմարտությանը, հանգեցրին նրան, որ փիլիսոփայությունը ճանաչվեց իրեն սմամկ և ոչ պիտանի գիտություն քրիստոնյամերի համար:

Դուես Պողոս առաքյալը քրիստոնյամերին զգուշացրել է փիլիսոփայությամբ տարվելոց, «Զգույց եղեք, չիմի, որ մենք ձեզ գրավի ճարտարանությամբ և սմուսի խարեւալությամբ. դրանք ըստ մարդկանց ավանդության և այս աշխարհի տարերքի են և ոչ ըստ Հիսոս Քրիստոսի»¹: Սուազյալը խոսելով ճշմարիտ իմաստության մասին, հայտնում է, «որ իր խորք և քարոզությունը իմաստության պատիք խուսերով չէին, այլ նոգու արդյունավորությամբ և զորությամբ, որպությամբ, որտեսավ հավատը չիմի մարդկանց իմաստությամբ, այլ՝ Սաստծոն զորությամբ»²:

Սբունամերձ, Ս. դարի Նկեղեցու Հայութի մոտ փիլիսոփայության վերաբերյալ և ոչ մեկ կարծիքի շեմք համեմատում է իմանով ամմիջական մետեղորդմերը Հիսոս Քրիստոսի և Սուազյալմերի, որոնք Սկիտարանական ճշմարտությունները մասուցում են երկրային իմաստությանը խորթ բնական պարզությամբ, Ս. դարի Հայութը շամացել են միմիայն հնարավորին:

¹ Կող. Բ, 8:

² Ս. Կորմը., Բ, 4—5:

չափ վեր նաև Ավետարանական վարդապետության ոգին, ուստի և արմամբինը խորի արվեստի բոլոր միջոցները՝ զբաղվել են սույ Աստվածային Հայունությամբ:

Սակայն, արդին Բ դարում, երբ, մի կողմից՝ քրիստոնեական նախայնք անդամագրված կրթված ներանուները նրանց սկսում են ծանրութանը նունան փիլիսոփայության մեջ, իսկ մըս կողմից՝ ներանու փիլիսոփա-մերի նարձակումների դեմ պարագելու նաև ար պահանջ է առաջանում փի-լիսոփայական մտածողության ու գիտելիքների, ապա մենց այս ժամանակաշրջանում փիլիսոփայությունն իր կողմն է գրավում Եկեղեցու Հայրերի ուղարկությունը և քափանցում է նրանց ուսումնասիրությունների որորությունը:

Մոռորե, մեր նպատակն է ցույց տալ, թե փիլիսոփայության նկատմամբ ինչպիսի վերաբերմունք են ցուցաբերում Բ—Գ դարերի շատագով նայերը և ինչպես են միմնավորում իրենց բռնած դիրքը:

Այս նարդում շատագովներին կարեի է բաժանել, միմնականում, երկու խմբի: Առաջին խմբը, որ առավել նամակութական է տրամադրության մեջանուական փիլիսոփայության նկատմամբ, երկրորդ խմբը, որը գործեն բացարձակական մերժում է այն:

Վերջին խմբի ակնառու մերկայացուցիչներն են Տերտուղիանոսը, Առարիոսը, Լակտոսատիոսը:

Փիլիսոփայությունը ժխտող Հայրերի կարծիքով, ճշմարտության միմնական և միակ առլուրը միմիայն Աստվածային Հայունությունն է և նրանից դուրս չկա ոչ մի ճշմարտություն: Աստվածային Հայունության լոյսով չուսավորված միուր ոչ մի կերպ չի կարող նաև ան ճշմարտության ճանաչմանը, այս մթագնած է և կույր, ոչիմէ չի նաև ան ճանաչում, ոչիմէ չգիտ և, մոյմիսկ, չի տեսնում այն, ինչը գունդում է իր աչքերի առջև:³

Նվաստացնելով փիլիսոփայությունը՝ Տերտուղիանոսը և Լակտոսատիոսը ոչ միայն չեն ցանկանուու եղբեր գումակ վերջինիս և Հայունության միջև, այն, ըստնակառակը, բացարձակապես ժխտում են նրանց միջև որևէ կապի առկացությունը:

«Ի՞նչ կաա կա Աթենքի և Երուսաղեմի միջև»

Ի՞նչ ըմբռանուր բա՛ Եկեղեցու և Ակադեմիայի միջև»

Ի՞նչ առնչություն՝ քրիստոնեաների և ներեւիկոսների միջև»

Հիսուս Քրիստոսից և նրա Ավետարանից մենք պեսք չունենք ոչ մի լուսավորության և ուսումնասիրության»⁴:

Տերտուղիանոսի կարծիքով քրիստոնեաների նաև ան փիլիսոփայությամբ զբաղվելը ոչ միայն ամենին անօգուտ է, այլև վտանգավոր Այն պեսք է մերժել և, ըստ Առաքյալի պատմիքանի (Կող., Բ, 8), մեռու մնալ նրանիցն:

Թեև Եկեղեցու մըս՝ նատկապես նոյն նայերը ավելի բարբարամորեն ու զիջողաբար էին տրամադրված փիլիսոփայության նկատմամբ, այնուամենայնիվ, նրանց մոտ ևս երեսման-երեսման նաև նույնիպսուն են ոչ շամեկան կարծիքներ փիլիսոփայության վերաբերյալ: Նոյմիսկ Կղեմու Ավետարացին՝ փիլիսոփայության չերմ պաշտպանը, մի տեղ այն կոչում է

³ Առնորիոս—Ընդդեմ նկատմաների, գիր Ա, Պ, 27:

⁴ Տերտուղիանոս—Ընդդիմության ընդդեմ ներեւիկոսների, Պ, 7:

⁵ Անդ:

«վարպետ կեղծիքի ու խարդախության, որը կեղծաբար իր վրա է կրում ճշմարտության օրինակի անոն»⁶:

Վաղ քրիստոնեական Եկեղեցու Հայրերը փիլիստիայության նկատմամբ իրենց բացասական վերաբերմունքը պատճառաբանում են՝ հիմնավորելով, որ փիլիստիայությունը կեղծ և սանակ ուստունք է, և իրենց ոչինչ չի ներկայացնում թե տեսական և թե գործնական առումով։ Ապացուցելու համար փիլիստիայության սնանկությունը, քրիստոնյա հեղինակները առաջին մերժին վեր են հանում տարրեր փիլիստիական դպրոցների տրամաբանական հակասությունները։ Ժխտման այս սկզբունքը որդեգրել են գրեթե բոլոր ջատագով հայրերը, ինչպես, օրինակ՝ Տատիանոսը, Թեոփիլեսը, Մինուկիոս Ֆելիքսը, Լակտանիոսը։

«Դու հետևում ես Պատոնի ուսմունքին և, ահա, Էպիկուրյան սովուտը բացահայտորեն ծառանում է քո դեմ։ Դարձյալ, դու ուզում ես հետևել Սրբաստուելին և, քեզ հանդիմանում է Դեմոկրիտի հետեւ վորդներից մեկը»⁷։

Իրար հերքող փիլիստիայական ուսմունքները հատկապես սուր ծաղրի է ենթարկում Հերմիասը։

«...Փիլիստիաները շարադրելով իրենց ուսմունքները, իրար միջև անհամաձայն են թե խոսքով, թե գաղափարներով։ Այսպես, նրանցից ոմանք մարդու հոգին համարում են հոր, ինչպես Դեմոկրիտը. ոմանք՝ ող, ինչպես ստորկները. որիշները՝ շարժում, ինչպես Հերակլիդեար. ոմանք՝ գոլորշի, ոմանք՝ աստերից բխող զորություն. ոմանք այն համարում են շարժման զորությամբ օժտված թիվ՝ ինչպես Պյութագորասը... Որքա՞ն կարծիքներ կան այս առարկայի շուրջ։ Որքա՞ն դատողություններ են անում փիլիստիաներն ու սովուները, որոնք ավելի շատ իրար միջև վիճում են, քան թե գտնում ճշմարտությունը։

Թող որ նրանք անհամաձայն են իրար միջև հոգու հարցում, բայց գոնե թող իրար հետ համաձայն ուսուցանեն այլ առարկաների մասին։ Մինչդեռ, նրանցից մեկը հաճույքը համարում է հոգու բարիք, մեկ որիշը՝ շարիք, իսկ այլ մեկը՝ շարիքի և բարիքի միջև մի քան: Այսուհետև, ոմանք ասում են, որ հոգու բնությունն անմահ է, որիշները՝ որ մահկանացու է, ոմանք էլ՝ որ այն գոյատևում է կարճ ժամանակով... Ինչպես՞ս կոչել այս կարծիքները։ Գուցե ցնո՞րք, թե՞ հիմարություն, կամ անմտություն, կամ անհեթեթություն, կամ էլ՝ այս բոլորը միասին։ Եթե նրանք որևէ ճշմարտություն են գրել, ապա թող որ միանան, մտածեն, կամ խոսեն իրար միջև համաձայն։ այդ դեպքում ես ևս նրանց կհամաձայնեմ։ Բայց, եթե նրանք, այսպես ասած բզկուում են հոգին, այն վերածում են մեկը այսպիսի, մյուսը՝ մի այլ էլույան, այն ենթարկում են զանազան հյութական փոխարկումների, խոստվանելում եմ. այդպիսի գոյափոխումներն իմ մեջ հակարան է ծնում։

Եթե փիլիստիաներն այսպես տարածայնում են մարդկային հոգու հարցում, առավել ևս նրանք չին կարող որևէ ճշմարտություն ասել աստվածների կամ աշխարհի մասին։ ...Նրանք ի վիճակի շիմելով ճանաշելու իրենց սեփական հոգին, ուսումնասիրում են աստվածնե-

⁶ Կդեմոս Ալեքսանդրացի—Ստրոմատներ, գիրք Ա:

⁷ Տատիանոս, Ուսումնական պատմություն, գիրք Ա:

րի բնությունը և, շճանաչելով սեփական մարմինը՝ շանում են ճանաշել աշխարհի էությունը...»⁸:

Սուր քննադատության և նախարկելով փիլիստիվայական տարրեր դրադությունները, կամ գոնե, բացահայտելով փիլիստիվաների տարածայնությունները աշխարհի, աստվածության և մարդու մասին հարցերում, շատագովները եղրակացնում են, որ փիլիստիվայությունը լինելով կեղծ ու սանակ գիտություն, ոչ միայն անկարող է մարդկանց սովորեցնելու ամենաէական ու անհրաժեշտ ճշմարտությունները: Ըստ այդմ, քրիստոնյա հայրերը իրենց ժամանակակիցներին շանում են համոզել, որ անհրաժեշտ է դիմել առավել վստահելի առաջնորդների, այսինքն՝ մարդարներին և առաջյաներին, ովքեր ոչ միայն միաբան են իրար միջև, այլև՝ ուսուցանում են Սուրբ Հոգով և առաջակացնելու առաջապահ անձունը, եթե Սատուկած չուսուցանի օրենքի միջոցով»⁹:

«Օրենքի պատվիրած արդարության վերաբերյալ ևս իրար համաձայն են թե մարդարների և թե Ավետարանիների խոսքերը, քանզի նրանք բոյորն ել խոսել են միայն Աստուծոն Հոգով ներշնչված: ...Ուստի, ավելի լավ է լինել Աստուծոն Օրենքի աշակերտը, ինչպես խոստվանել է նաև ինքը՝ Պատոնը, որ հնարավոր չէ այլ կերպ ճանաչել ճշմարտությունը, եթե Սատուկած չուսուցանի օրենքի միջոցով»:

Ապացուցելով հեթանոսական փիլիստիվայության տեսական սանակությունը, քրիստոնյա հետինակներն անցնում են փիլիստիվայության գործնական-բարոյական նշանակության քննադատությանը:

Փիլիստիվայական ուսուունքները ինչպես տեսականորեն, այնպես էլ գործնականորեն անկարող եղան բարեփոխելու մարդկության բարոյականությունը,—հաստատում են նրանք,—որովհետև հիմքեր չունեն, որոնք կարող են իրենց նկատմամբ վստահություն ներշնչել: Ավելին, նրանք ոչ միայն անզոր եղան բարձրացնելու մարդկության բարոյական մակարդակը, այլ նոյնիսկ իրենք, իրենց բարոյական ընթացքով, վատ ազդեցություն ներգործեցին: Նկարագրելով առանձին փիլիստիվաների բարոյական կերպարները, նրանց ուսուունքների բարոյական սկզբունքները, շատագով հայրերը վերշններին մեղադրում են բնական բարոյականության խեղաթյուրման մեջ, նրանց համարելով ամբարիչու, իսկ նրանց առաքինությունները՝ կեղծ:

«...Դիրգենեսը, որ պարծենում էր իր տակառով և ժոմկապութամբ՝ հում պղիս էր ցանում և, ախտահարված ներքին հիվանդությամբ՝ մեռավ որպես անժուժկալության գոհ: Արիստիպառը, որը շրջում էր ծիրանիով, իր համոզունքների համաձայն անառակ կյանք էր վարում: Պատոն փիլիստիվային Դիոնիսիոսը վաճառեց որկրամության պատճառով: Արիստոտելը, որը անողջամտորեն սահմանների մեջ դրեց նախախնամությունը և երշանկությունը սահմանափակեց այն առարկաներով, որոնք իրեն համեմի էին, հակառակ դաստիարակի իր պարտքին՝ չափազանց շատ էր հաճոյանում Ալեքսանդրին: ...Ենթա համար ծիծաղելի են նաև նրա ուսուունքի այսօրվա հետևորդները: Ըստ Արիստոտելի ուսուունքի չեն կարող երշանիկ լինել նրանք, ովքեր չունեն ոչ գեղեցկություն, ոչ հարատություն, ոչ մարմնական առողջրություն, ոչ ազնվական ծագում: Եվ այսպիսի

⁸ Հերմիաս—Հեթանոս փիլիստիվաների ծաղրումը, Գլ. 1, 2, 3:

⁹ Թեոփիլես Անտիռքացի—Առ Ավտովիկոս, գիրք Գ, 12, 17:

մարդիկ համարվում են փիլիսոփա... Խոկ Կրթակենտուսը, որը բուզն էր դրել մեծ քաղաքում, բղորին գերազանցում էր արվամոլոյթյան մեջ և շափազանց անրժառատեր էր: Մահն այդ արհամարտողը, այն պես էր վախենում նրանից, որ ջանում էր մահվան մատնել Հուսինուին նրա համար, որ նա ճշմարտություն քարոզելով՝ փիլիսոփանին նրանից մերկացնում էր հետասիրության և գեղձարարության մեջ»¹⁰:

Սակայն չնայած փիլիսոփայության վերաբերյալ վերը շարադրած բոլոր անքարենապատ կարծիքների, քրիստոնյա հեղինակներից շատերը փիլիսոփայության մեջ նկատել են գնահատելի շատ կողմեր և ընդունելի արձանիքներ:

«Հեղինակներին իրավունք չունեն դատապարտելու նրանք, ովքեր նրանց ուսմունքներում բացի մերկ խոսքերից որից ոչինչ չեն տեսնում և չեն ներթափանցում սույն ուսմունքների խորքը»¹¹:

Անաշառությամբ մանրազնին ուսումնասիրության ենթարկելով հեթանոսական փիլիսոփայության ուսմունքները, ճշմարիտը զատկով կեղծից, նրանք համոզվել են, որ փիլիսոփայությունը սույն մոլորություններ չեն բովանդակում իր մեջ, և որ մոլորությունների միջև կան ճշմարտություններ:

Լակտանտիոսը՝ փիլիսոփայության ամենախիստ ընդդիմադիրներից մեկը, փիլիսոփայական տարբեր ուսմունքների մանրակրկիտ քննությունից հետո խոստվանում է.

«Դժվար չէ նկատել, որ գրեթե չկա ոչ մի ճշմարտություն, որի մասին շտարաձայնեն փիլիսոփաները ... Եթե մեկը մտադրվի ի մի հավաքելու բոլոր փիլիսոփայական սղանդներով մեկ ցիրուցան եղած ճշմարտությունները և նրանցից կազմելու մեկ ամբողջական ուսմունք, առ հեռու չի լինի իմ կարծիքից: ... Այսպիսով, պարզ է, որ մեր կրոնում չկա ոչ մի ճշմարտություն, ոչ մի խորհուրդ, որոնք մասամբ բացահայտված կամ շոշափված չինեն փիլիսոփաների կողմից: Սակայն, նրանք չեն կարողացել իրենց բացահայտած ճշմարտությունները պահպանել, քանզի անկարող են եղել նրանցից կազմել մեկ ամբողջական մարմին»¹²:

Լակտանտիոսի այս կարծիքը գործնականորեն հաստատում է Մինուի Ֆելիքսը: Նա, քրիստոնեության առաջնակարգ սկզբունքը՝ մեկ Աստուծո գոյությունը ապացուցելու համար վկայակոչում է անտիկ փիլիսոփաներին՝ վերջում եզրակացնելով.

«Ես վեր համեցի գրեթե բոլոր նշանավոր փիլիսոփաների կարծիքները. նրանք բոլորն եւ թեև տարբեր անուններ են տալիս, սակայն ընդունում են, որ կա մեկ Աստված: Կարելի է կարծել, թե կամ այսօր քրիստոնյաները փիլիսոփա են, կամ անցյալի փիլիսոփաները քրիստոնյան են եղել»¹³:

Ինչպես կարելի է բացարել այս ընդհանրությունները:

Վաղ քրիստոնեական Եկեղեցու Հայրերը այս կարևոր խնդրի տարբեր լուծումներ են առաջ քաշում:

Տերտուղիանուն այս փաստը, իմա քրիստոնեական վարդապետության և հեթանոսական փիլիսոփայության միջև եղած համաձայնություն-

¹⁰ Տատիանոս—Ընդդեմ հովանելիի, Գլ. 2, 5:

¹¹ Կղեմեն Ալեքսանդրացի—Ստրոմանունը, գիր Ա, 2:

¹² Ալիքնը՝ այդ ուսմունքը նման կիմնի քրիստոնեական վարդապետությանը:

¹³ Լակտանտիոս—Աստվածային ուսմունքներ, գիր Է, 7:

ները, պատճառաբանում է բոլոր մարդկանց համար ներհատող քնական բնազդի առկայությամբ, որը և պայմանավորում է նրանց միջև եղած ընդհանրությունները՝ որոշ ճշմարտություններում:

«Քնական բնազդը, որը ներհատող է բոլոր մարդկանց համար, փիլիսոփաներին ևս հնարավորություն է տվել իրենց շրջապատող անգիտության ու մոլորության խավարի մեջ տեսնելու ճշմարտության որոշ առկայություններ»¹⁴:

Նոյն կարծիքն է արտահայտում նաև Աթենագորասը:

Խոսելով Աստուծո մի-ության մասին, նա ասում է.

«Պուտները և փիլիսոփաները այս, ինչպես և մյուս հարցերը, կուսիւլով շոշափել են ցատ իրենց և Աստվածային Հզոր հարազատության¹⁵:

Քրիստոնեական վարդապետության և հեթանոսական փիլիսոփայության միջև եղած որոշ ընդհանրությունները քրիստոնյա հեղինակները բացասարում են նաև Աստվածային Նախախնամության ներգործությամբ: Հեթանոսական աշխարհի մեծ մտածողները,—ասում են նրանք,—գտնվել են Աստվածային Նախախնամության ներգործության ներքո, որի միջոցով էլ նրանց հայտնվել են մի շարք կրոնաբարյական ճշմարտություններ: Կղեմեն Ալեքսանդրացին հայտնում է, որ փիլիսոփայությունը պետք է համարել Աստվածային Նախախնամության գործ, քանզի այն իր մեջ բովանդակում է շատ ճշմարտություններ, ուստի և չի կարող լինել շարի ծնունդ:

«Ստրոմատների բոլոր գրքերում ևս ցուց կտամ, որ շարճ ունի շար բնություն և չի կարող որևէ բարիքի պատճառ ... և, որը փիլիսոփայությունը ևս, որոշ իմաստով, Աստվածային Նախախնամության գործ է»¹⁶:

Սակայն, վերոհիշյալ բոլոր դատողությունները չեն կարող բավարար շափով բացասարել քրիստոնեական վարդապետության և փիլիսոփայական ուսմունքների միջև եղած ընդհանրությունների պատճառները: Ուստի, քրիստոնյա հեղինակները դիմում են (և ամենից հաճախ) բացասարության մեկ այլ միջոցի, ինա առաջ են քաշում գրագողության վարկածը: Նրանք հեթանոս պետաներին և փիլիսոփաներին մեղադրում են նրանում, որ վերջիններս իրենց ուսմունքներում եղած բոլոր ճշմարտությունները վերցրել են հրեական գրքերից:

«Պլատոնը ևս, ասելով, «որ մեղավորությունը ընսրող մարդու մեջ է, այլ ոչ թե Աստված է մեղավոր», այն փոխառել է Մովսես մարգարեից, քանզի Մովսեսն ավելի հին է բոլոր հոյն գրողներից: Եվ, առհասարակ այն, ինչ որ փիլիսոփաները և պետաները ասել են հոգու անմահության, հետմահու պատիժների, երկնային մտահայեցության և նման այլ բաների մասին, օգտվել են մարգարեներից, քանզի նրանք միայն նրանց միջոցով էին կարող այս ամենն ըմբռնել ու շարադրել»¹⁷:

Հուստինոս Վկայի սանը՝ Տատիանոսը ևս համոզված է եղել, որ փիլիսոփաները շատ ճշմարտություններ վերցրել են Մովսեսական գրքերից և այլ մարգարեցություններից:

¹⁴ Մինուկիսոս Ֆելիքս—Օկտավիոս, Գլ. 1, 1: Տես նաև՝ Գլ. ԺԹ:

¹⁵ Սթենագորաս—Սիջնորություն քրիստոնյաների համար, Գլ. 7:

¹⁶ Կղեմեն Ալեքսանդրացի—Ստրոմատներ, գիրը Ս, 1:

¹⁷ Հուստինոս Ալուս—Ա Զարարանություն, Գլ. 40:

«Եվ քանզի Մովսեսն ըստ ժամանակի ավելի հին է, ապա նրան պետք է ավելի մեծ հավատը ընծայել, քան հեղեաներին, որոնք չխոս-տովանելով՝ նրանից են փոխառել իրենց ուսմունքները. քանի որ նրանց սովորականությունը դրդված, ծանո-թանալով Մովսեսի և նրա նման այլ փիլիսոփաների գրվածքներին, շանացել են կերպարանափոխել նրանց ուսմունքները. նախ՝ այն պատ-ճառով, որ որիշները կարծեն, թե իրենք ասում են իրենցը, ապա, նրա համար, որ այն, ինչ որ իրենք չեն հասկանում, ծածկեին խո-քային ծածկույթով՝ ճշմարտությանը տալով առապելի ձև»¹⁸:

Նոյն միտքն է արտահայտում նաև Թեոփիլես Անտիռքացին: Դիմելով հեթանոսներին, նա ասում է.

«Այսպիսով, ձեր պրետները ևս կանխասել են, որ Աստված պիտի դատի անարդար երդումը և բոլոր այլ հանցանքները. ավելին, նրանք կամա թե ակամա, համաձայն մարգարեներին խոսել են նաև աշխար-հի հրկիզման մասին, միայն թե ապրելով նրանցից ավելի ուշ, այս ամենը գողացել են Օրենքից ու Մարգարեներից»¹⁹:

Որ խնդրո առարկա կարծիքը լիովին կիսել են նաև հնագույն լատին շատագովները, պարզորոշ երևում է Մինուկիոս Ֆելիքսի հետևյալ խորե-րից.

«Տեսնո՞ւմ ես, որ փիլիսոփաները ևս դատում են ճիշտ այնպես, ինչ-պես և մենք. միայն, ոչ թե մենք ենք հետևում նրանց, այլ նրանք են նետում աստվածաշունչ մարգարենություններում նշմարել ճշմարտու-թյան ստվերը, սակայն խեղաթյորել են այն»²⁰:

Ինչևէ, բոլոր վերը բերված կարծիքներից, իրենց ողջ բազմազանու-թյամբ հանդերձ, պարզորոշ երևում է, որ վաղ քրիստոնեական Եկեղեցու Հայրերը բացարձակապես չեն մերժել հեթանոսական փիլիսոփայությունը և, ավելին, քրիստոնեական վարդապետության և փիլիսոփայական ուս-մունքների միջև, թեև տարբեր մոտեցումներով, գտնում են ընդհանրություն-ներ և շփման եղբեր: Այսպիսով, ինքնարերաբար, տեղի է ունենում Աստ-վածային Հայտնության և փիլիսոփայական գիտության մերձեցում, որն էլ իր հերթին պատճառ է դառնում մեկ այլ հարցի ծագման. արդյո՞ք հեթա-նոսական փիլիսոփայությունը քրիստոնեության համար չունի որևէ հշանա-կություն, ինչպես Հին Կոստանդնուպոլիսի Հայտնությունը: Ի պատասխան այս հարցին, Կումես Ալեքսանդրացին հայտնում է, որ փիլիսոփաները հեղեան-ների փրկության համար նույն հշանակությունն ունեն, ինչպես մարգարե-րը՝ հրեաների համար.

«Քանզի ինչպես հրեաների փրկության համար Աստված համեց ու-ղարկել մարգարեներին, աղոթես էլ հեղեաներից Նա ընորեց առաքի-նի մարդկանց և նրանց առանձնացնելով տգես ամբոխից՝ մարգարե-կարգեց իրենց ծղովլրի համար, որքանով որ նրանք ընդունակ էին Աստուծո այդ շնորհներն ընդունելու»²¹:

Այստեղից պահանջվում էր մեկ քայլ ճանաչելու համար, որ փիլիսո-փայությունը հեղեաների համար նույն նախապատրաստական հշանակո-

¹⁸ Տատիանոս—Ընդդեմ հոյների, Գլ. 40:

¹⁹ Թեոփիլես—Սոլ Ավոնդիկոս, գիրք Բ, 37:

²⁰ Մինուկիոս Ֆելիքս—Օկտավիոս, Գլ. 1.Դ, 5:

²¹ Կումես Ալեքսանդրացի—Ստրոմատներ, գիրք Զ, 5: Հմմտ.՝ Հուստինոս Վկա—Ա. Զատագովություն, 46, Բ Զատագովություն, 13:

թյունը է ունեցել, ինչպես Հին Կտակարանը՝ հրեաների համար:

«Փիլիստիայությունը հեղեններին շնորհվել է իբրև յուրատեսակ և իրենց առավել պատշաճ մի կտակարան, իբրև նախապատրաստական հիմք, որի վրա պետք է կառուցվեր ու բարձրանար քրիստոնեական փիլիստիայության շենքը: ...Փիլիստիայությունը նախապատրաստում է, դեկապարում է, իսկ կատարելութունն ստանում է Քրիստոփ»²²:

Ըստունեղով և համոզվելով, որ փիլիստիայությունը Հին կտակարանային Հայունությունից ոչ պակաս դեռ ու նշանակություն ունի փրկության համար, քրիստոնյա հեղինակները ժամանակի ընթացքում այն սկսեցին նկատել իբրև օգտակար և պիտօնի առարկա քրիստոնյաների համար:

«Փիլիստիայությունն ինքնին ոչ մի կործանարար ազդեցություն չի գործում մարդկային կյանքի վրա և նա չէ պատճառը կեղծ գաղափարների ու չար գործերի, ինչպես զրապարտում են նրան շատերը. այլ նա ճշմարիտ ուսմունքի ակնհայտ ու մարմնացյալ նախատիպ է. շնորհ, որ հեղեններին տրված է Աստծոց: Նա մեզ հավատքից էլ չի շեղում, ... այլ, ընդհակառակը, փիլիստիայությունը մեզ համար պաշտպանութան ամրակուր պատվար է և դաշնակից, որի հետ միասին հիմնավորում ենք մեր հավատքը»²³:

Այսպիսով, հեթանոսական փիլիստիայությունը արդարացվում է և ճանաչում է գտնում քրիստոնյաների կողմից: Տեղի է ունենում քրիստոնեական վարդապետության և փիլիստիայական ուսմունքների մերձեցում, որն իր հերթին նպաստում է քրիստոնեական գիտական մտքի զարգացմանը: Հետևանքը սրան, ստեղծվում է փիլիստիայա-աստվածաբանական դպրոցներ, որտեղ դրվում են քրիստոնեական վարդապետության սիստեմատիկ ուսումնասիրության և ուսման հիմքերը: Քրիստոնյա գիտնականների կողմից հեթանոսական փիլիստիայությունից փոխառնված գիտական միջոցները օգտագործվում են քրիստոնեական դոգմաների բացահայտման և համակարգման համար: Եթե քրիստոնեության առաջին շատագովները շանում էին քրիստոնեական որոշ դոգմաները հիմնավորել փիլիստիայական պատուցներով և հաճախ դրանց պաշտպանության համար վկայակոչում էին անտիկ հեթանոս հեղինակներին, ապա այս շրջանի վերջում, հանկապես Աղեքսանիրյան Հայրերը, «Փիլիստիայությունը դաշնակից ունենալով», քրիստոնեական սկզբունքների համակարգված շարադրման առաջին փորձերը կատարեցին, որը և սկիզբը հանդիսացավ աստվածաբանական գիտության: Սակայն, հարկ է նշել, որ այստեղ ոչ թե փիլիստիայությունն է ստեղծում դոգմաները, այլ քրիստոնեական միտքն է նրանում փնտրում իր համար համապատասխան ձևեր և արտահայտչամիջոցներ:

²² Կղեմես Սկեսանդրացի—Ստրոմատներ, գիրք Զ, 8 և գիրք Ա, 5:

²³ Կղեմես Սկեսանդրացի—Ստրոմատներ, գիրք Ա, 2:



ԱՐԾԱԼՈՒՅՍ ՂԱԶԻՆՅԱՆ

ՀԱՎԱՍՏԻՆ ԵՎ ՀԱՎԱՆԱԿԱՆԸ ԳՐԻԳՈՐ ՆԱՌԵԿԱՑՈՒ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Ա.

Համեմատաբար քիչ են Գրիգոր Նարեկացու մասին կենսագրական տեղեկությունները: Դրանք կարելի է պայմանականորեն բաժանել երկու աղբյուրների՝ մատենագրական և բանահյուսական: Մատենագրական տեղեկություններից ամենից առաջ կարեոր են Նարեկացու վկայությունները: Թեև շատ սույն, բայց առանձին տեղեկություններ կան նաև մի քանի մատենագրիների և գրիշների հիշատակարաններում: Նարեկացին ինքնակենսագրություն չի թողել: Ժամանակակիցներից որևէ մեկն էլ չի ավանդել գունե նրա համարու կենսագրությունը:

Հայ ժողովրդը Նարեկացու մասին հյուսել է մի շարք ավանդություններ, զրոյցներ, երգեր¹: Թեև դրանք հիմնականում ունեն հրաշապատում թաղյօթ, բայց այդ «ավանդություններն ու զրոյցները, —ինչպես գրել է Արամ Ղանաղանյանը, —զերծ չեն նաև պատմական ատաղձից»², և ժողովրդը հավատարիմ մնալով դարաշրջամի ոգում՝ «Երան դարձրել է սեփական նվիրական հոյզերի ու ապրուների մարմնացումը, իր երազանքների ու ակնկալությունների իրականացնողը, նրա միջոցով մերկացրել ու դատապարել է շարիքն ու անարդարութունը, հաստատել ու փառաբանել բարին ու արդարը»³:

Բանահյուսական այդ աղբյուրները ժողովրդական հիշողության ուրույն վավերականներ են Նարեկացու մասին: Սուանձին կետեր կարող են շրփման եզրեր ունենալ պատմական փաստերի հետ: Դրանցից կարելի է արտածել ինչ-որ հավանական, բայց ոչ երբեք հավաստի կենսագրություն:

¹ Տես Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձևո. 9861, էջ 3ա—22թ: Տես նաև՝ Ա. Ղանաղանյան, Ավանդապատում, Երևան, 1969, էջ 306—320:

² Ա. Ղանաղանյան, Ավանդապատում, էջ ԾԽ:

³ Կոյլ տեղում, էջ ԾԽ:

Նարեկացու վարքը, որ նախապես ստեղծվել է մատենագրական տվյալների հիման վրա, հետագայում ընդարձակվել է ժողովրդական ավանդությունների հաշվին՝ հավատին լրացնելով հավանականով։ Դա միանգամայն հարիր էր վարքագրության ավանդույթին։

Նարեկացու մասին առաջին սեղմ ակնարկը գրել է նշանավոր մատենագիր և հասարակական-եկեղեցական գործիչ Ներսես Լամբրոնացին (1153—1198)։ Ակնարկը Լամբրոնացու ինքնազիրն է՝ գրված 1173 թվին և վերնագրված է այսպէս։ «Վարք սրբոյ առն Աստուծոյ Գրիգորի Նարեկացուց»⁴։ Հետաքրքիր է, որ այս պարզ վերնագիրը աստիճանաբար ընդունել է միշնադարի համար պատշաճ տարած։ «Վարք երանելյան սրբոյ առն Աստուծոյ Գրիգորի Նարեկացուց, զոր արարեալ է սուրբ արքեպիսկոպոսին տէր Ներսեսի՝ առաջնորդի սուրբ ուխտին Սկուռայի»⁵։

Ի՞նչ կարելի է ասել այս վարքի մասին։ 1-ին, Լամբրոնացին իր տվյալները քաղել է Նարեկացու մի քանի գործերի և, առաջին հերթին, Ապարանից Խաչի պատմության հիշատակարանից։ 2-րդ, նա իմացել է, որ Անահիա Նարեկացին եղել է Նարեկավանքի առաջնորդը և Նարեկացու մոր հորեղբայրը։ Այլ կերպ ասած՝ մոր կողմից Նարեկացու պատերազմը։ 3-րդ, Գրիգոր և Հովհաննես Նարեկացի եղբայրները սմվել, դաստիարակվել և կրթություն են ստացել Նարեկավանքում։ 4-րդ, Գրիգոր Նարեկացին գրել է Մատյան ողբերգության երկը՝ բաղկացած 95 գլուխց, գրել է նաև ներբողներ, մելքոնություն և այլն։ 5-րդ, Գրիգոր Նարեկացին ապրել և ստեղծագործել է Նարեկավանքում, բյուզանդական Վասիլ (976—1025) և Կոստանդին (976—1028) եղբայրների կայսրության ժամանակ։ 6-րդ, Հովհաննես Նարեկացին եղել է Գրիգոր Նարեկացու անդրանիկ եղբայրը։

Լամբրոնացին թույլ է տվել նաև ժամանակագրական անձնություններ։ Հայութական ապրել է Վահան Սյունեցի կաթողիկոսի (966—969) և Վասպորականի թագավոր Սենեքերիմ Արծրունու (1003—1021) ժամանակ։ Կաթողիկոսն ու թագավորը ժամանակակիցներ չեն, ինչպես պարզված է քանակիրության մեջ⁶։ Լամբրոնացին սխալվել է նաև, գրելով, թե Հովհաննեսը վախճանված է եղել, և Նարեկացին Մատյանը գրել է նրա մահից հետո։ Մինչդեռ Մատյանի հիշատակարանում Նարեկացին խոսում է Հովհաննեսի մասին, նշելով, որ ինքը Մատյանը գրել է նրա գործակցությամբ։ Չնայած այս փրփումներին, Լամբրոնացու երախայրիքն ունի ուրույն արժեք։ Նախ՝ նա ցանկացել է սրտի խոսք ասել Նարեկացու մասին, որը միշտ էլ բարձրագույն հեղինակություն մնաց նրա համար և ապա՝ հետագայում ոչ մի կենացգիր չի շրջանցել այդ վարքը և, վերջապես, Լամբրոնացին հետաքրքրություն է հարուցել գրելու պատմական նշանավոր ան-

⁴ Մատյանադարան, ձեռ. 1568, էջ 119ա—բ։ Տես նաև՝ Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, աշխատափրությամբ Պ. Մ. Խաչատրյանի և Ս. Ս. Ղազինյանի, Երևան, 1985, էջ 170։

⁵ Մատյանադարան, ձեռ. 5135, էջ 259թ։

⁶ 1970 թ. Ասմիկ Սկուռացին, ընդօրինակելով Ներսես Լամբրոնացու «Մեկնութիւն սաղմուաց» երկը, հեղինակի մասին գրել է այսպէս։ «Փոքր ինչ թողի ձեզ զայտութիւն կենաց սորին ընթացից, զի մի մնացէ տարակոյն յառաջել ժամանակին սորին ըննողի ովն և ուստի և զիարդն, որպէս և մեր այսաւը ունիմք գրազում նարը մերց և վարդապետաց Հայոց, ալխիմք՝ զԴաւիթը Ներքինեցի և զԳրիգոր Նարեկեցի և զՄովսէ Խորենացի և զայս, որոց ի բանիցն պարարտութենք, զուարձանամք և զիարդ կենաց և վարդապետաց Հայոց, ալխիմք՝ զիաւիթը ոչ ունիմք և ոչ մի բան վասն երանելիացն պատմութիւն» (Պ. Ղազինյան, Հիշատակարանը ձեռագրաց, Բ. Ս. Անդիխաս, 951, պահանջ 549)։

ձերի վարքերը⁶: Այս վարքից է ծագում մեկ այլ խմբագրություն, որի հնագույն օրինակը հայտնի է 1286 թվականին գրված ձեռագրից (Մատենադարան, ձեռ. 5135, էջ 259թ—261թ): Այստեղ հայտնի փաստերին ավելացվել է մեկ փաստ և՝ Նարեկացու հոր՝ Խոսրով Անձնացու անոնք: Փորձ է արվել նաև գնահատության խոր ասելու Մատյանի նշանակության մասին:

Փոփոխություններ կատարվել են նաև վարքի հայսմավորքային տարբերակների մեջ⁷: Նշված է Նարեկացու մահվան տարեթիվը՝ 1003: Օգտագործված են ֆողովորդական ավանդություններ, պատմական փաստեր, որոնցից կարևոր է Սենեկերիմ Արծրունու կողմից Վասպորտականը բյուզանդական Վասիլ Բ կայսրին տալու և փոխարենը Սեբաստիան ստանալու մասին փաստը և այլն: Վարքի վերջնական խմբագրությունը պատկանում է Հարություն Ավգերյանի (1774—1854) գրչին⁸: Գրականության պատմության մեջ Նարեկացու կենսագրությունը գրված է այս աղբյուրների օգտագործմամբ:

Հայունի չէ Նարեկացու ծննդյան ստույգ տարեթիվը: Այդ տարեթիվն ընկնում է 940—951 թվերի միջև: Բացառություն է կազմում Հակոբ Նալյանի կարծիքը, որը կարելի էր թուրիմացություն համարել, եթե համոզմունք չլիներ նոր համար: Հայ Նալյանի՝ «ծնաւ սուրբ Գրիգոր ի Դճէ» (986) թուականին Հայոց, ի ժամանակս Վասիլ և Կոստանդիա», ապա և «որոյ ամք կենաց հասակին՝ հասասար Փրկչին մերոյ ամաց ԼԳ (33) յարդարեցան»⁹:

Քննական մոտեցման առաջին փորձն արել է Միքայել Չամչյանը: Հայ նոր՝ Նարեկացին «ծնաւ ի թուին Հայոց իբր Ն (400) այսինքն է յամի տեսան 951»¹⁰: Նարեկացու ծննդյան այս թվականը Չամչյանը նշել է նաև Խոսրով Անձնացու մասին խուելին¹¹: Չամչյանը մերժում է Նալյանի վարկածը՝ իբր Նարեկացին մահացել է 33 տարեկան. «կեանք նորա տնեաց ոչ պակաս, քան զյուտն ամ»¹²:

Գիտական ավելի ճիշտ մոտեցում ունի Գաբրիել Ավետիքյանը (1750—1827): Նա մերժում է 951 թվին Նարեկացին ծնված լինելու վարկածը¹³: Ըստ Ավետիքյանի՝ Նարեկացին պետք է ծնված լինի այդ թվականից առաջ: Որպես ապացուց՝ նա հենվում է Խոսրով Անձնացու Պատարագի խորհրդի մեկնության հիշատակարանի վրա, որը գրել է Գրիգոր Նարեկացին: Հայունի չէ, թե Նարեկացին երբ է ընդօրինակել: Հիշատակարանում նա հայտնում է, որ իր հոր այդ մեկնության առաջին գծագրությունը արել է իր եղբայր Սահակը «ՅՂԹ թուականութեանս Հայոց», այսինքն՝ 950 թվին: Եվ որովհետև Անձնացին թե Պատարագի խորհրդի և թե Ժամակարգության մեկնությունները գրել է եպիսկոպոս դառնալուց հետո, նշանակում է՝ Գրիգորը պետք է ծնված լիներ այդ թվականից առաջ: Որեմն՝

⁷ «Գրիգոր որ կոչի Այսմատորք», Կ. Պոլիս, 1730, էջ ԳԾՂԳ—ԳԾՂԴ:

⁸ «Լիհակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հ. Ե, Վենետիկ, 1813, էջ 321—329:

⁹ Հ. Նալյան, Գրիգոր մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, Կ. Պոլիս, 1745, էջ 8:

¹⁰ Մ. Չամչյան, Պատմության Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 852:

¹¹ Նոյն տեղում, էջ 839:

¹² Նոյն տեղում, էջ 857:

¹³ «Նարեկ աղօթից. համառու և զգուշաւոր լուծմամբ բացայացնեալ միանգամ և այժմ երկրորդ անգամ լաւեւուծով, աշխատափրութեամբ նորին տեսան հ. Գաբրիելի Ավետիքյան ալոռակալ վարդապետի», Վենետիկ, 1827, էջ 543—544:

Նարեկացին մինչև 950 թիվը գեր պետք է լիներ 6—7 տարեկան: Հետևաբար, ըստ Ավետիքյանի, նա պետք է ծնված լիներ 943—944 թվականներին:

Այնուհետև, գտնելով, որ Երգ երգոցի մեկնությունը Նարեկացին գրել է 977 թվին, իսկ Մատյանն ավարտել է 1002/1003 թթ., Ավետիքյանն ընդունում է, որ այդ ժամանակ, Մատյանն ավարտելու տարին, պետք է լիներ վաթուունն անց: Այս հաշվարկների համար հիմք է հանդիսացել այն փաստը, որ Նարեկացու հայրը 950 թ. արդեն եղել է եպիսկոպոս: Սա հշանակում է, որ ոչ միայն մինչ այդ պետք է ծնված լիներ Գրիգորը, որ Անձնագացու կրտսեր զավակն էր, այն այն, որ Նարեկացու մայրը պետք է վախճանված լիներ: Անձնացին եպիսկոպոս կարող էր դառնալ միայն կնոջ մահից հետո:

Արդ, ե՞րբ է եպիսկոպոս ձեռնադրվել Խոսրով Անձնացին: Այս հարցին անդրադարձել է Գալուստ Տեր-Մկրտչյանը¹⁴: Նա ապացուում է, որ Անանիա Մոկացին, որը եպիսկոպոս է ձեռնադրվել Խոսրով Անձնացուն, կաթողիկոս է դարձել 941 թվին: Եվ որովհետև Անձնացին, ինչպես վկայում է Նարեկացին, 950 թ. արդեն եպիսկոպոս էր, հետևաբար, ըստ Տեր-Մկրտչյանի՝ Անձնացու ձեռնադրությունն ընկնում է 941—949 թթ. միջև, իսկ Նարեկացու ծննդյան տարեթիվը՝ 940—949 թթ. միջև¹⁵:

Մասուկ Աքեղյանն ընդունում է Տեր-Մկրտչյանի այս վարկածը: «940 թվից շատ առաջ չի կարելի դնել Գրիգորի ծնունդը,—գրում է Աքեղյանը,—որովհետև Ողբերգության մատյանի մեջ ինքն իրեն 1001—1003 թվականներին, թեպես հասակն առած, բայց ծեր չի համարում»: Հետևաբար, ըստ Աքեղյանի Նարեկացին պետք է ծնված լինի, «940-ական թվականներին, ավելի շուրջ՝ այդ թվականների երկրորդ հնգամյակին»¹⁶:

Մկրտիչ Մկրտչյանը հետևում է Նարեկացու ծննդյան և մահվան ավանդական թվականներին. «Նարեկացին ծնվել է 951 թվականին, վախճանելի է 1003 թվականին»¹⁷: Մկրտչյան համոզիչ չեն թվում ոչ Տեր-Մկրտչյանի և ոչ Էլ Աքեղյանի առաջարկած մոտավոր տարեթվերը: «Նախ՝ ըստ Օրմանյանի, Անանիան կաթողիկոս է դարձել ոչ թե 941 թվին, այլ 946 թվին,—գրում է նա, —այնուհետև՝ թեպես 950 թվին գրված Պատարագի խորհրդի հիշատակարանում Խոսրովը եպիսկոպոս է հիշվում, բայց դա բոլորովին էլ չի ապացուում, որ 950 թվին նա անպայման եպիսկոպոս էր, որովհետև նիշատակարանը 950 թվին չի գրված, այլ հետագայում, եթե Խոսրովը կարող էր արդեն եպիսկոպոս դարձած լինել»¹⁸:

Ծիշու է, որ Մաղաքիա Օրմանյանը Անանիայի կաթողիկոպության տարիները դնում է 956—968 թթ.¹⁹: Բայց Օրմանյանը սխալվում է, և իրավացի գ. Տեր-Մկրտչյանը: Հայտնի է, որ Անանիա Մոկացին Խոսրով Անձնացուն մեղադրել է աղամդավորության մեջ: Եթ թոթերից մեկում նա գրել է. «Ի ՆԳ (454) թուականիս և ԴԺ-ան (14) ամի մերոյ դիտապետութեան յարեա ուն լեպիսկոպոսաց մերոց Խոսրով անուն, որում հաւատացեալ էր

¹⁴ «Արարատ», 1897, էջ 92—93:

¹⁵ Սույն տեղում, էջ 92:

¹⁶ Մ. Աքեղյան, Երևան, հ. Գ, Երևան 1968, էջ 576:

¹⁷ Մ. Մկրտչյան, Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը (տես Գրիգոր «Ի ՆԳ (454) թուականիս և ԴԺ-ան (14) ամի մերոյ դիտապետութեան յարեա ուն լեպիսկոպոսաց մերոց Խոսրով անուն, որում հաւատացեալ էր

¹⁸ Մ. Մկրտչյան, Գրիգոր Նարեկացի, Երևան, 1955, էջ 114:

¹⁹ Մ. Օրմանյան, Ազգագալուում, Ա. Բատ., Գ. գիրք, Կ. Պոլիս, 1912, էջ 1085:

մեր նմա զվիճակն Անձնացեացն, այլ համեստ և գիտնաբոր և ալեօք ծերութեամբ զարդացեալ»²⁰: Պարզ է, որ 941 թ. Անանիան կաթողիկոս էր: Պարզ է, որ Անձնացին արդեն եպիսկոպոս էր: Մկրյանի առարկությունը կորցնում է իր ուժը:

Մկրյանի փաստարկը, թե Պատարագի խորհրդի մեկնությունը եթե անգամ գրվել է 950 թվին, ապա դա չի հշանակում, թե Անձնացին այդ թվին անպայման եպիսկոպոս էր, չի դիմանում քննադատության: Հավաստի է, որ Անձնացին այդ մեկնությունը գրել է եպիսկոպոս խախտված կարգերը վերականգնելու համար: «Համարձակեցայ առ այս յանդենաբար ի հարկե, —գրում է Անձնացին, —ոչ զի անձին փառ ստացայ, այլ զի գեպիսկոպոսութիւն վիճակեցայ. և ի վիճակեալս տգիտութիւն ի յորվան վարկայ և բանի ամենայն ունեք զրովանդակ զայս ծանոցեալ՝ անհնարին գիտացի, պատշաճ համարեցայ ի գրի արկանել, զի թերևս այսպէս դիրին առ ուսանել արարից կամողաց»²¹:

Անձնացին չի ասել, թե երբ է եպիսկոպոս դարձել: Գրիգոր Նարեկացին գրում է, որ իր հայրը Պատարագի խորհրդի մեկնությունը գրել է 950 թ.: Ոչ մի հիմք չկա չհավատապու Նարեկացու այս վկայությանը: Սա ընդունելի է անվերապահորեն: Անվերապահ է նաև, որ Անձնացին այդ թվականից առաջ և Անանիա Մոկացին կաթողիկոս դառնալուց հետո, ձեռնադրված էր եպիսկոպոս: Այսպիսով, Գրիգոր Նարեկացու ծննդյան տարեթիվը տատանվում է 940—950 թթ. տասնամյակի միջև: Ըստ իս' հավանական մոտավոր տարեթիվը մնում է շորշ 945 թվականը:

Հայունի չէ նաև Նարեկացու ծննդավայրը: Հավանական է համարվում, որ նա ծնվել է Վասպորական աշխարհի Ռշտունիք գավառի Նարեկ գյուղում: Ենթադրվում է, որ նա կարող էր ծնված լինել Անձնացյաց գավառում, որի եպիսկոպոսն էր հետագայում հրա հայրը՝ Խոսրով Անձնացին: Հավաստի է, որ Գրիգոր Նարեկացին վաղ մանկությունից իր անդրանիկ եղբայր Հովհաննեսի հետ ուսանել է Նարեկավանքում, որի հիմնադիրն ու առաջնորդն էր Անանիա Նարեկացին, ինչպես վերև ասվեց, Գրիգոր Նարեկացու մոր հորեղբայրը: Գրիգորն ավարտել է Նարեկավանքի դպրոցը, ձեռնադրվել նախ բանանա և ապա օծվել վարդապետ: Այստեղ էլ նա ծավալել է իր գրական գործունեությունը, զբաղվել մանկավարժությամբ, ինչպես նաև գրչությամբ:

Նարեկացին եղել է բազմաշնորհ անհատականություն: Նա ստացել է ժամանակի համար փայլուն կրթություն: «Հրաշավի էր և յաստուածաբանական վարդապահութեան և յատենախօս քարոզութեան, պերճ և առատ բահիք և քաղցրաբույլ շրթամբը, նոյն և լաշողակ ի գիր և զօրաւոր, որով զարմացուցանէր զմերձաւոր և զիեռաւոր, և քարոզեալ լինելու համբաւ սրբութեան և իմաստութեան նորա ընդ ամենայն աշխարհն Հայոց առաջի թագաւորաց և կաթողիկոսաց ժամանակին»²², ապա է հրա վարքի խըմբագրություններից մեկում: «Նարեկացին, —գրել է երաժշտագետ Նիկողոս

²⁰ «Արարատ», 1897, էջ 276:

²¹ «Խոսրովի Անձնացեաց եպիսկոպոսի Մեկնութիւն աղօթից պատարագին», Վենետիկ, 1869, էջ 66—67:

²² «Վիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց», հ. Ե, էջ 322—323,

Թահմիզյանը, —իր տաղերը ինքն է հղացել որպես երաժշտական բանաւողական ստեղծագործություններ»²³:

Նարեկացին եղել է բուռն ընթերցաւեր: Սպարանից Խաչի պատմոթյան հիշատակարանում նա խնդրում է Մոլեա Ստեփանոս Եպիսկոպոսին, որի պատվերով գրել էր այդ գործը՝ լրացնել թերին և աղոթել իր համար, որ «յարածամ դեգերիս լընթենուլն, իսկ գործ՝ և ոչ փոքր ինչ ժամանակ սահմանեալ որոշեմ»²⁴: Նարեկացին աստվածաշնչական գրերից շատերը թերևս իմացել է անգիր: Ընթերցել և խորապուխ է եղել հայրաբանական և փիլիսոփայական գրականության մեջ: Հայ մատենագրությունը գիտեր Կորյունից և Ագաթանգեղոսից սկած մինչև Հովհաննես Դրախտանակերտցի, Անանիա Նարեկացի և իր ժամանակի հեղինակները: Նա պետք է ծանոթ լիներ նաև արաբական գրականությանը:

Իմացել է արդյոք օտար լեզուներ: Թեև ուղղակի վկայություններ չկան, բայց չպետք է տարակուսել, որ նա տիբրապետել է հունարենին: Հաստան է, որ հունարեն իմացել են Խոսրով Անձնացին, Անանիա Նարեկացին և Նարեկավանքի այլ վանականներ: Հայոնի է, որ 10-րդ դարում հիմնադրվել են մի շարք վանքեր, որոնց կրոնավորներից շատերը հայրենադարձվել են Բյուզանդիայից: Ռումանու Լեկապենու կայսրը (920—944) իր գահակալության առաջին իսկ տարիներից սկսած՝ «հայածեաց զամենայն կրօնաւոր և զքահանայս Հայոց,—գրել է Կիրակոս Գանձակեցին,—որք էին յաշխարհին Հոռոմոց, զի ոչ հայանեցան դասանութեանն Քաղկեդոնին»²⁵: Արանք է, ըստ Գանձակեցու, հիմնադրում են Կամքանորի և Կապուտքարի վանքերը Արշարունիքում, Հոռոմոց վանքը և Դարեկանքը Շիրակում և այլն: Նարեկավանքը ևս կառուցվել է այդ ժամանակ, հավանաբար 935—940 թթ.: Ծուռով պատեղ են շտապում «ևս և ոսանելոց ոմանց յաշխարհին Յունաց և վարժելոց յիմաստու փիլիսոփայութեան, յորոց միջի անուանի երեւցաւ Անանիա վարդապետ փիլիսոփայ հօգոր»²⁶: Նշանակում է՝ Նարեկավանքի միաբաններից ոմանք կրթություն էին ստացել Բյուզանդիայում: Եվ առհասարակ «Նարեկավանքը բարի դրացիական հարաբերություններ է ունեցել կենացագրություն: Նա ապել է հանճարի այն անխուսափելի ողբերգությունը, որ ծնվում է թշամիտ ավանդամոլների հայտնի ու գաղտնի, թունու ու քինու հալածանքներից: Մատյանում (Բան 29) Նարեկացին ակնարկում է

²³ Ն. Թահմիզյան, Կոմիտասը և Նարեկացու տաղերը, «Բանքեր Երևանի համապարհ», 1969, № 3, էջ 43:

²⁴ «Արքոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնը», Վեցուիկ, 1840, էջ 422:

²⁵ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատափրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 84:

²⁶ Մ. Զածշան, Պատմութիւն Հայոց, Բ. Բ., էջ 824:

²⁷ Grégoire de Narek, Le livre de prières, introduction, traduction de l'arménien et notes par J. Kéchichian, Paris, 1961, p. 34.

²⁸ Նույն տեղում, էջ 24:

իր թշնամիների, իրեն ատողների, բանարկուների մասին: Նա աղջոռում է իր թշնամիների, իրեն ատողների, բանարկուների մասին: Նա աղջոռում է նաև նրանց համար՝ Աստծոց խնդրելով ոչ թե պատմել նրանց «իրրեւ զայրք բամբասղաց», այլ ներել նրանց հանցանքները «որպէս զշար կշտամբողաց և իրաւամբք նախասողաց» (Բան ԶԳ, ա): Սա բխում է ոչ միայն շարի փոխարեն բարի հատուցելու ավետարանական պատվիրանից, այլև Նարեկացո՞ւ իր հանձնարի բարձրության գիտակցությունից: Եզրու չէ, որ նա վայելել է եղակիորեն սրբաբար, առաքինի և արդարամիտ մարդու համբավ:

Նարեկացին եղբայրական սրտառուց սիրով է սիրել եղբորը՝ Հովհաննեն Նարեկացուն: Նա խոնարի մեծարանքով է խոսում նրա մասին, շեշտելով իրենց հոգեկան ներդաշնակությունը: Մատյանի նիշատակարանում իր և եղբոր մասին նաև գրել է այսպես. «իրրեւ զմի մարմին բանական ի յերկոց առ մի կերպարան շինելոյ դիմաց կենցաղակցելով, ոչ միայն հարազատք, այլ և միաշունչք, միակրտանք, համապատիք, զուգահասանք, ի քանից աչաց առ մի եւ նոյն շահիդ խորհրդյու տեսեալք»²⁹: Ուրիշ անգամ նա խնդրում է հիշել իրեն և «զեղբայրն իմ զանդրանիկ զՅովիհաննեւս ցանկալի անուն ի միում կարգի, որ գիտնականն է և հանձնարեղ իմաստաէր, քան զիս առաւել յամենայնի»³⁰: Անանիս Նարեկացու մասից հետո Հովհաննեւսը ստանձնել է Նարեկավանքի առաջնորդի պաշտոնը: Նա եղել է Նարեկացու առաջին գրաքննադատն ու խորհրդատուն, թերևս նաև առաջին գրիչն ու խմբագիրը: Հավաստի է, որ անդրանիկ եղբայրը միշտ է օգնել է կըրտստեր եղբորը:

Նարեկացու թվակիր առաջին երկը՝ Երգ երգոցի մեկնությունը գրված է 977, վերջինը՝ Մատյանը 1002 թվին: Սուոյց տարեթվերի այս սահմանագիծն ընդգրկում է ստեղծագործական կյանքի ուղիղ քառորդ դար: Մատյանը գրելիս Նարեկացին իրեն ծեր չի համարում: Նա ստերսում է Աստծոց, որ եթե ինքը հասնի ծերության, ապա այնպես չինի, որ անարգվեն իր երմակ ալիքները (Բան ԶԵ, գ), և ինչպես ասված է Մատյանի միջնադարյան մեկնության մեջ, «Զի չեր ծեր, յորժամ ասէր զայս և աղօթէր վասն հասանել ծերութեանն»³¹: Նշանակում է՝ Նարեկացին մահացել է ստեղծագործական ուժերի վերելքի շրջանում, քանի որ Մատյանն ավարտելուց հետո նա կնքել է իր մահկանացուն:

Վիճելի է նաև Գրիգոր Նարեկացու մահվան թվականը: Ուսումնասիրողները՝ սկսած Մ. Չամչյանից և Գ. Ավետիքյանից մինչև Մ. Աքելյան և Մ. Մկրտչյան՝ այդ տարեթվը դնում են 1003—1010 թթ. միշն՝ Նարեկացու կյանքի տևողությունն ընդունելով 50—60 տարի: Ներսէս Լամբրոնացին տարեթիվ չի նշել. «Ճն ևս հասարակեալ աստ զընթացս կենաց,—գրել է Հաւ,—այլ յերիտասարդական աստիս վախճանեալ»³²: Վարքի հայամավորքային տարբերակներից մեկը, որը հայտնի է 1471 թվին գրված ձեռագրից, ուժի Նարեկացու մահվան որոշակի տարեթիվ՝ 1003 թվական³³: Խսկ տպա-

²⁹ Եղբայրամիության այս բարձր գնահատականը Նարեկացին տվել է նաև բյուզանդական կամաց և Կոստանդին կայսրներին. «որք ի մի մկանումն կամաց խորհրդյութեակ մարմնով և միով սրտի կենցաղավարեցան. և որպէս զերթին երկուու տարագուց անձին և մարմնով ի մի կերպարան շարունակեցան» («Մատենագրութիւնը», էջ 375):

³⁰ Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնը, էջ 422:

³¹ Մատենագրաբան, ձևու. 5650, էջ 427բ:

³² Մատենագրաբան, ձևու. 1568, էջ 119բ:

³³ Մատենագրաբան, ձևու. 1511, էջ 349ը.

զիր հայսմավորքում ասված է այսպես. «Քայց չև ևս կատարեալ զընթացս աստի կենացս, այլ երիտասարդական տիս վախճանեալ, ի թուականին մերում Դօ՛ՏԲ (1003) ամին»³⁴: Նարեկացոյ լիակատար վարքում նշված է նաև մահվան օրը. «յամի տեառն 1003 և ի թուին Հայոց ՆՌԲ, ի մենենի իւն (21), որ յան ժամանակս հոկտեմբերի 6 կամ ըստ Յայսմատորաց՝ փետրվարի 27, ի կաթողիկոսութեան տեառն Սարգսի»³⁵:

Այս տարեթիվը հայտնի է նաև մի բանի ժամանակագրություններից. «Թուականին ՆՌԲ (1003) վախճանեցաւ Գրիգոր Նարեկացին»³⁶: «Եւ թագաւորեաց Գագիկ՝ եղբայր Սմբատայ, ամս Իթ (29), թվին ՆվԲ (993): Արդ, ի Ժ (10) ամին Գագիկ և ի ԻԵ (27) Վասիլ կայսեր Յունաց և Ռ և Դ (1004) մարմնանալոյ տեառն և թվին Հայոց ՆՌՍ (1002) փայլեր իբրև զարեգակն սորբն Գրիգոր Նարեկացին, որդի Խոսրովու Անձնացեաց եպիսկոպոսին. և յայսմ ամի աւարտեաց զիոնեկեցոյց բանս իր, զոր այժմ ունի եկեղեցի սորբ. և ոմանք ասեն, թէ յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստո Աստուած»³⁷:

Հակոբ Նալլանը, ինչպես վերև ասացի, Նարեկացոյ կյանքի տևողությունը համարել է 33 տարի: «Ամենայն որ սիրե զիր ինչ,—գրում է նա,— փութով ընթանաց և արագ ժամանէ. իսկ սուրբ Գրիգոր՝ ըստ ամաց Փըրկչին ԼԳ (33)-ամեալ Անշեաց», «ի Դօ՛ՏԳ (1004) ամին՝ յաւարտման աղօթից գրքոյս»³⁸: Ավետիքյանը Նարեկացոյ մահվան տարեթիվ չի հշել. «Լինելու Գրիգոր աւելի բան զվարաւունամեաց ի յօրինելու աղօթիցն»³⁹: Նարեկացուն վարչունամյա են համարել Գ. Զարքիանալյանը, Թ. Գուշակյանը և որիշներ: Աքեղյանը գրում է, թէ «որտեղից են առնված նրա տարիքն ու մահվան ենթադրական թվականները, այդ հայտնի չեն»⁴⁰: Սա հշանակում է, որ հայսմավորքայն և ժամանակագրությունների տվյալները Աքեղյանը չի համարում սուոյ տեղեկություններ: Օրմանյանը ևս Նարեկացոյ մահվան թվականը համարում է 1003 թվականը: Հայսմավորքում նշված ամսաթվի տոմարական հաշվարկն ավելի միշտ է Օրմանյանի մոտ. ըստ նրա՝ Գրիգոր Նարեկացին մահացել է 1003 թ. հոկտեմբերի 7-ին⁴¹: Ըստ իս' սա պետք է համարել բոլորից հավանական, թերևս՝ սուոյ և վերջնական:

Նարեկացին թաղվել է Նարեկավանքում Սանեղովս կույսի եկեղեցու մոտ: 1021 թ. Վասպորականի Սենեքերիմ Սրծրունի թագավորը իր տիրուցները տվեց Բյուզանդիայի Կոստանդին կայսրին և փոխարենը սուացավ Սեբաստիան: Վասպորականից գալյուց բնակչության գրեթե մեկ երրորդը՝ շորջ չորս հարյուր հազար հոգի: «Ի չուել Աննեքերիմայ, —գրում է Մ. Զամշյանը, —բազում կրօնատոք ևս գնացին ընդ նմա. ընդ որս և բազում ի միաբանից Նարեկայ վանիցն, առեալ ընդ հիրեան զմարմին սրբոյն Գրիգորի Նարեկացու: և շինեցին սոքս անդ վանս մօս Ակնայ, զոր և կո-

³⁴ «Գիրք, որ կոչի Այսմատորք», էջ ԳԾՂԴ:

³⁵ «Լիակատար վարք և վեպարանութիւն սրբոց», հ. Ա, էջ 327—328:

³⁶ «Մանր ժամանակագրություններ, 13—18-րդ դդ.», հ. Ա, կազմուց Վ. Ա. Հակոբյան,

Երևան, 1951, էջ 208:

³⁷ «Մանր ժամանակագրություններ, 13—18-րդ դդ., հ. Բ, կազմուց Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 338:

³⁸ Հ. Նալլան, Մեկնութիւն աղօթից, էջ 742:

³⁹ «Նարեկ աղօթից», Վենետիկ, 1827, էջ 544:

⁴⁰ Մ. Աքեղյան, Երկեր, հ. Գ, էջ 580:

⁴¹ Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա հատ., Գ գիրք, էջ 1181:

չեցին Նարեկ. և անդ հաճգուցին զմարմին սրբով»⁴²: Խոսքը, անշուշտ, վերաբերում է մասունքներ տեղափոխելուն: Նարեկացու գերեզմանը հայրենի Վասպորականում դարձել էր սրբատեղի:

Դարեր շարունակ հայերն ուստի են գնացել Նարեկացու շիրիմին: «Նարեկացու շիրիմը,—գրել է մի ուխտավոր,—մինչև 1867 թ. ունեցել է միայն անհիշատակագիր և պարզ ու անպահով քար մը: Բայց առյօն թվին Նարեկա վանքի վաճահայրը, Հովսեփ Վարդապետ, շինել կոտա մարմար յա շիրմաքար մը, որու սնարաքարի վրա բարձրաքանդակված է Նարեկացու տեսիլ՝ Աստվածածին Հիսուս Գիրկը, իսկ Նարեկացին վեղարավոր և փիլոնով ծունկի եկած անոնց առջև՝ Կերկրպագե»⁴³: Ծիրմաքարին եղել է տապահագիր: Հողվածի հեղինակն իր ակնարկն ավարտել է այսպես. «Ավելիսկ ու ամայի են այժմ Նարեկա վանքն ու Նարեկ գյուղը»⁴⁴:

Ավելուակ ու ամայի: Գուցե այլևս չկա նաև Նարեկացու շիրիմը՝ նրա աճյունի հողապատշաճ ծածկոցը: Գուցե չկա, բայց հավերժ կենդանի է նրա հաճաքարի ոգին, նրա խոսքը, որը, ինչպես ինքն է ասել, պիտի մեռ հավերժ՝ իբրև

Մրգան փորագրեա՝ ամենեին անեղ ծանելի...
(Բան ԿԶ, ա)

Հանրագումարի բերելով Նարեկացու կյանքի մասին տեղեկություննենը, կարող ենք ստել, որ դեռևս հայտնի չէ Նարեկացու ծննդյան ստույգ տարեթիվը: Ենթադրվում է, որ նա պետք է ծնված լինի շորջ 945 թվին: Նարեկացու հայրը եղել է հայտնի մատենագիր և հասարակական-եկեղեցական գործիչ Խոսրով Անձնացին: Նարեկացին ունեցել է երկու եղբար՝ Հովհաննեսը և Սահակը: Գրիգորը եղել է ընտանիքի կրտսերը: Նարեկացու մայրը եղել է Անանիա Նարեկացու եղբոր դուստրը: Հայտնի չէ Նարեկացու մոր անոնքը: Նա մահացել է երիտասարդ: Հայտնական է համարվում, որ Նարեկացին ծնվել է Վասպորականում, Ռշտոնյաց գավառի Նարեկ գյուղում: Հայտափ է, որ նա ուսանել է Նարեկավանքի դպրոցում վանքի հիմնադիր և առաջնորդ, ճշանալոր մատենագիր և փիլիսոփա Անանիա Նարեկացու մոտ, որը Նարեկացու մոր հորեղբարն էր: Նարեկացու ուսումնակիցն է եղել իր անդրանիկ եղբարը՝ Հովհաննես Նարեկացին: Ուստին ավարտելոց հետո Գրիգոր Նարեկացին ձեռնադրվել է նախ քահանա և ապա՝ վարդապետ: Գրիգորը տիրապետել է հունարենին: Նա ապրել և ստեղծագործել է Նարեկավանքում, գրադարձ է գրական գործունեությամբ և մանկավարժութամբ: Նարեկացու թվակիր առաջին գործը Երգ երգոցի մեկնությունն է՝ գրված 977 թվին Վասպորականի Գուրգեն Արծրունի թագավորի պատվերով, վերջինը Մատյան է, որն ավարտել է 1002 թվին: Գրիգոր Նարեկացին վախճանվել է 1003 թվին, հոկտեմբերի 7-ին: Նարեկացու հորը՝ Խոսրով Անձնացուն, ուսուցչին՝ Անանիա Նարեկացուն և հետոց իրեն՝ Գրիգորին մեղադրել կամ կասկածել են աղանդավորության մեջ: Այս հարցը, սակայն, առանձին քննության հյութ է: Ասենք միայն, որ Օրանցից և ոչ մեկն աղանդավոր չէր:

⁴² Մ. Զամշյան, Պատմութիւն Հայոց, հ. Բ, էջ 903:

⁴³ «Արարատ», 1918, Ա.—Գ, էջ 140:

Բ

ՆԱՐԵԿԱՑՈՒ ԱՂԱԽԴԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՂԾՎԱԾԸ

Նարեկացու դարաշրջանը միայն խաղաղության հայրուրամյակ չեր: Մրվել էին դասակարգային հակամարտությունները, նոր թափ ու ծավալ էր ստացել թոնդրակյան շարժումը: Այդ շարժումն ողղված էր ոչ միայն եկեղեցու, այլև ավատատիրական կարգերի հիմքերի դեմ: Չարժման անոնք ծագել է Թոնդրակ ավանի անունից: Թոնդրակը ապատամբների կենտրոնն էր, գտնվում էր Բարձր Հայրում, Տուրուբերանի հահանգի Ապահունիք գավառում:

Թոնդրակեցիները չեին ընդունում եկեղեցու խորհուրդները՝ մկրտություն, զոհաբերություն, հաղորդություն, ժխտում էին հոգու անմահությունը, համերձալ կյանքը, անարգում էին խաչը, մերժում եկեղեցական պատրիարքությունը՝ ընտանիքի հախապայմանը համարելով սիրո փոխադարձ գուցմունքը և, որ ամենակարևորն է, չեին ընդունում եկեղեցու դերը մարդու և Աստծու հաղորդակցման միջև: Մարդը կարող էր հաղորդվել Աստծուն անմիջականորեն, առանց միջնորդի: Նրանց գաղափարներն արտահայտում էին ազատ մտածողության, երևոյթների աննախապաշար ընկալման նոր տրամադրություններն ու գգացմունքները: Հայոց եկեղեցին անողոք պայքար էր մղում թոնդրակեցիների դեմ: Նա գգուում էր արմատախիլ ամել այդ աղանդը: Բավական էր եկեղեցու մասին, դավանանքի մասին քննադատական մի խոսք, և պատրաստ էր մեղադրանքը: Նարեկացուն կաւկածել են աղանդավորության մեջ: Հավանաբար այդ կասկածները հերքելու համար նա հանդես է եկել թոնդրակեցիների դեմ՝ Կճավա վանքի վանահորն ողղած իր հայտնի թղթով:

Սղանդավո՞ր էր արդյոք Գրիգոր Նարեկացին: Հարո՞ւմ էր արդյոք թոնդրակյան աղանդին: Համոզմունքո՞վ, թե՝ հարկադրաբար է պայքարել թոնդրակեցիների դեմ: Այս հարցերին պատասխանելուց առաջ, անհրաժեշտ է պարզել այն հարցը, թե ինչո՞ւ են Խոսրով Անձնացուն և Անահիա Նարեկացուն կասկածել աղանդավորության մեջ և հալածել: Առանց այսպիսի շրջանցման, անհնարին է թափանցել խնդրի էռթյան մեջ: Իսկ առանց այդ հարցերի լուսաբանման պարզապես թերի կիմներ Նարեկացու դիմանկարը:

Աքեղյանը գրում է, որ Նարեկացու «հայրը» Խոսրով Անձնացյաց եպիսկոպոսը, իր ծերության հասակում բանադրվում է իրեն ձեռնադրող Անահիա Սոլիացի կաթողիկոսից իբրև եերձվածող: Նրա ուսուցիչ Անահիա Նարեկացին, ինչպես իր Խոսրովանության Գրից երևում է, «մերձ ի մաս վիճակում, ոչ ինքնաբերաբար, այլ կատարելով կաթողիկոսի հրամանը՝ անձեւ է թոնդրակեցիներին», ամենայն հավանականությամբ այն պատճառով, որ Խոսրով եպիսկոպոսի և կաթողիկոսի միջև տեղի ունեցած վեճերից հետո՝ «կարող էր կասկած ծագել և Անահիա Նարեկացու ողղափառության մասին, քանի որ խնամիական կապեր կային սրա և Խոսրովի միջև և Անահիա Նարեկացուն էր աշակերտում Խոսրովի որդին՝ պատանի Գրիգորը»: Շատ հավանական է, որ նոյն կասկածն եղել է և Գրիգոր Նարեկացու մասին, քանի որ սա էլ գրած ունի թուղթ ընդդեմ թոնդրակեցի աղանդավորներից: Աքեղյանի կողմից շակերտված տողերը պատկանում են Գ. Տեր-Մկրտչյանին: Նրանք համակարծիք են, որ կարող էին Գրիգոր Նարեկացուն ևս կասկածել աղանդավորության մեջ: Ա. Ղանալանյանը, սակայն, գաղափարական ողղակի աղերս է տեսնում, որը, նրա կարծիքով,

«իրականում գոյություն է ունեցել թոներակեցիների և Նարեկացու միջև»:

Հարց է ծագում ինչո՞ւ է բանադրվել Խոսրով Անձնացին: Մի՞տե իսկապես հերձվածող էր: Անանիա Մոկացի կաթողիկոսի և Անձնացու տարածանությունները սկսվել են 953—54 թթ.: Կաթողիկոսը Խոսրովին ձեռնադրել էր եպիսկոպոս, տարիներ առաջ, վատահել Անձնացյաց գավառի եկեղեցական վիճակը: Խոսրովը կաթողիկոսի բնութագրմամբ եղել է «համեստ և գիտնաւոր և ալեօք ծերութեամբ զարգացեալ» անձնավորություն, Գրիգոր Նարեկացու գուսա արտահայտությամբ՝ «յոյժ հետևող պատոփրանցն Աստուծոյ», որի նոյնիսկ վարձկան խոզարածը լինելու արժանի չի համարել իրեն:

Դատանալով եպիսկոպոս, Խոսրովը տեսնում է, թե ինչպես է հայոց եկեղեցում, ժամանակագործյան մեջ, խախտվել շատ բան: Եկեղեցականները չեն հասկանում պատարագի խորհուրդը, աղոթքների հշանակությունը, ըստ հաճության կրծատում են արարողակարգը, չեն հետևում ավանդությներին: Հիշեցնելով հայոց եկեղեցու հայրերի ընդունած կանոնները, նա վկայակոչում է նաև հունական եկեղեցին, որ պահպանվում են այդ կանոնները: Բարձրինստիթյունների այս պահանջները բխում էին հայոց եկեղեցու շահերից: Եղիշե Դուրյանը Խոսրովի երկասիրությունները համարելով «եկեղեցական ընդարձակ հմտությամբ» և ընտիր ոճով գրված գործեր, իրավացիորեն գունում է, որ դրանք հիմք չեն տալիս հերձվածող համարելու նրան, այլ պատճառը փետրում է «մեզի անձանոթ շարժադիմներու» մեջ:

Մեզ է հասել Անանիա Մոկացու մեղադրականը: Կիրակոս Գանձակեցին պայպես է վերաշարադրել այն. «Ոչ է պարտ կիրակէ ասել օքն տէրունի, այլ կիրիակէ, զի հոռոմերէն է, —իբր թե պայպիսի բան է պահանջի Անձնացին, —ասէ. Անյնպէս և հասարակաց թողով, ասէր, զգէսս տղայոց և ոչ հատանել մինչև երկայնացի և պատ առցէ, զի վասն այնորիկ, ասէ կոչի պատանի. և ապա կտրել հրամայէր, զի վասն այնորիկ կոչի կտրիճ»:

Ես ընդգծեցի մի բանի բառ, ցոյց տալու համար, թե ինչպես է կաթողիկոսը փորձել վարկարելել Անձնացուն՝ վեճի եռթյունը փոխադրելով բառաքանական կակածելի դրոր: Պարզ է՝ սրա մեջ չէ հակամարտության մերանը: Բանաքաղելով Մոկացու թուղթը, Գանձակեցին հասնում է մեղադրանքի գլխավոր կետին. «Եւ ասէր. «Ոչ է պարտ եպիսկոպոսի ընծայաբեր լինել եպիսկոպոսապետի, այսինքն՝ կաթողիկոսի, զի աւելի օրինութիւն ոչ ունի, ասէ, բայց միայն զանուանակրոշթիւն»:

Սա լորջ մեղադրանք է: Անձնացին ոչ միայն ընծաներ չի մատուցել կաթողիկոսին, այլև խախտել է իրենց միջև եղած աստիճանակարգի ենթակայությունը: Նա հրամարել է այցելել կաթողիկոսին: «Հայոց եպիսկոպոսները, —գրում է Մաղաքիա Օրմանյանը, —պարտավոր էին լորաքանչյուր տարի կամ գոնե ստեպ-ստեպ կաթողիկոսին մոտ երթալ, թե իբր հապատակության հշանակ և թե իբր հարաբերությանց դյուրություն, և այս առժիվ իրենց պետք եղած միտոնն ալ ստանալ»: Օրմանյանը ճիշտ է նկատել, որ Խոսրովի հետ կապված տարածայնությունը կրոնական խնդիր չէր, այլ «պիտի միտինք կրոնական երևոյթին ներքև քաղաքական խնդիր մը տեղի ունեցած» ասելու:

Եվ իսկապես, Անձնացին երիտասարդ չէր, որ առանց լորջ պատճառի թշնամանը իր բարերար կաթողիկոսի հետ: Պատճառն այլ տեղ էր. պատամբության առաջին օրինակը տվել էր Հակոբ Սյունեցի եպիսկոպո-

սը: Նա սկսում է մեռն վերցնել ոչ թե հայոց կաթողիկոսից, այլ Աղվանքի Սահմակ կաթողիկոսից: Անանիա Մոկացին իր մոտ է կանչում Սահմակ կաթողիկոսին և Հակոբ Եպիսկոպոսին: Դա եղել է 949 թվին: Չեն գալիս, և Մոկացին ինքն է մեկնում Սյունիք: Հակոբը ներկայանում է կաթողիկոսին և «Մնալար յերկինս և առաջի քո» ասելով՝ զղում:

Այս Հակոբը Հովհաննես Դրասխանակերտցու եղբոր որդին էր, ըստ Ստեփանոս Օրբելյանի «այր բարձրահասակ և գեղեցկատեսիլ, հանճարեղ և իմաստուն, քաղցրաբարոյ և հեղամիտ, լի ամենայն առաջնութեամբ»: Օրբելյանը նրա ապատամբությունը կաթողիկոսից բացատրում է հոգեբանական շարժադիմներով. իբր լուրջ պատճառ չկար, այլ միայն «հպարտացաւ սակաւիկ մի»:

Անձնացին և Սյունեցին նամակագրական կապ են ունեցել: Մոկացուն ասել էին, որ Խոսրովին էլ է շեղել «թղթով ի ձեռչ, նաև հերձուածն և յոդեհն երէ քողաքորեալ ունի զՔաղկեդոնին»: Քաղկեդոնականության մեղադրանքը ժամանակի դավանաբանական փորձաքարն էր: Օրբելյանն ասում է, որ թեև «խոռվութիւն և պատերազմ մեծ զարթոցին ի մէջ եկեղեցւոյ», բայց Հակոբը դավանանքից շեղված չէր և քաղկեդոնիկ հնեւու պարագան համարում է զրպարտություն: Դրավացի է Մ. Մկրտչանը, որ Հակոբը «հաստատապես կարելի է ասել, որ թոնդրակեցի չէր»: Թոնդրակեցի և քաղկեդոնիկ չէր նաև Խոսրով Անձնացին:

Ո՞րն էր, որեւմն, այդ ապատամբության, ավելի ճիշտ անհնազանդության պատճառը:

Մոկացին պայքարում էր հայոց եկեղեցու միասնության համար: Նա կաթողիկոսարանը Վասպորականից տեղափոխեց Արգինա՝ Բագրատունիների գահին մոտ լինելու և նրանց օժանդակության վրա ավելի հուսալի հենվելու համար: Իր հերթին կաթողիկոսը պես է զրպափառ լիներ Բագրատունիներին, նապատեր նրանց հզրացմանը:

Սյունաց իշխանները ձգտում էին անջատվել Բագրատունիներից: Հակոբ Եպիսկոպոսն էլ ընդառաջում էր նրանց ցանկությանը: Նա մի քանի անգամ փորձեց շենքարկվել հայոց կաթողիկոսին: Գործակցում էր Աղվանից կաթողիկոսի հետ, թեև Աղվանից կաթողիկոսն ինքն էլ ենթակա էր հայոց կաթողիկոսին: Անջատական այս ձգտման մէջ էր իրական պատճառը: Այստեղ կարևոր քաղաքական շարժադիմն էր և ոչ թե կրոնական խնդիրը: Սա էր նաև իրական այն պատճառը, որ Անձնացուն դարձեց Հակոբ Սյունեցու համալստի:

Վասպորականն ուներ իր անկախ թագավորությունը: Հայոց կաթողիկոսարանը գտնվում էր նրա սահմաններում: Մոկացին նախընտրեց առողջ փոխադրել Ծիրակ: Դա չէր կարող հանձնի լինել Վասպորականի թագավորին և իշխաններին: Անձնացին, հետևելով Հակոբ Սյունեցու օրինակին, չէր այցելում կաթողիկոսին՝ ընդառաջելով Վասպորականի անջատական ձգտուններին: Պատահական չէ, որ Անձնա Մոկացուն հաշորդաց Վահան Սյունեցի կաթողիկոսը, որին զրկեցին առողից, ապատան գտավ Վասպորականում:

Եվ այսպես, Խոսրով Անձնացին հերձվածող չէր: Նրա դեմ հապածները սկսվել էին հայոց եկեղեցու մէջ խախտված կանոնները և արարողությունները վերականգնելու պահանջից, մի բան, որ չէր կարող հանձնելի լինել հոգևորականության մի սովոր մասին, ինչպես նաև անհնագնադրության այն քայլից, որ նա փորձել էր դուրս գալ կաթողիկոսի գերազանդության այն քայլից, որ նա փորձել էր դուրս գալ կաթողիկոսի գերա-

գոյն իշխանության իրավասությունից՝ կաթողիկոսի և եպիսկոպոսի տարբերությունը, իբր թէ, տևանելով սույ անվանակոչության մեջ: Նա քաղկեդոնական չէր, բայց բացահայտ համակրանք է տածել հունական եկեղեցու բարեկարգության և ոչ թէ հավատի հանգանակի նկատմամբ:

Սովորականության մեջ, ինչպես ասվեց, մեղադրվել է նաև Անանիա Նարեկացին: Մինչև այժմ այն կարծիքն էր տիրում, թէ այդ մեղադրանքը ևս հարուցել է Անանիա Մոկացին: Բանասեր Հրաչյա Թամրազյանը, ձեռագրական տվյալների համակողմանի քննությամբ, վերջերս պարզեց, որ նախ Անանիա Նարեկացու դավանանքի խոստվանության գիր է պահանջել ոչ թէ Անանիա Մոկացի, այլ Խաչիկ Արշարունի կաթողիկոսը (972—992) և, երկրորդ, որ «Գիր խոստվանութեան» բուղթը Անանիա Նարեկացին պետք է գրած լինի 980—987 թթ. միջև:

Անանիա Նարեկացին շատ ծանր է տարել Արշարունու կասկածը, մասնավանդ որ նրանք հայունակիցներ են, իրար ճանաչում են ուսման տարիներից և ահա, տարիներ անց, ծերության օրերին, երբ ինքը մահմարձ է, կաթողիկոս ընկերը նրանից պահանջում է դավանանքի խոստվանություն, կասկածում է նրա ողղափառությամբ: Անանիան գրել է դատանացած հոգով, դիմելով ոչ միայն կաթողիկոսին, այլև բոլոր նրանց, ովքեր կամնցել են իմանալ ճշմարտությունը նրա հավատի դավանանքի մասին: «...Ահաւասիկ ածեմ բոլորից լսելուց ի շայո ձեռնարկութեամբ իմոյ և գրով մատանց իմոց, մանաւանդ քեզ, իրաւու անիրաւութեամբ և ծանա՛կող ոչ ծանաթիս, սննդակի՛ց աւտարացեալ, և ի ծննդենէ տէր գոլով մինչև ի ծերութիւն՝ ծառայի անտեղեակ բարուց և հաւատոց», սրտաշարժ անկեղծությամբ հայտարարում է Անանիան և նզովում բոլոր հին ու նոր հերձվածողներին, այդ թվում և թոնդրակեցիներին:

Եվ այսպես, աղանդավոր չեր նաև Անանիա Նարեկացին: Բայց ի՞նչն էր հարուցել այդ կասկածը: Բացատրել Անձնացու հետ ունեցած խնամիական կապերով, համոզիչ չէ: Մ. Մկրյանը գտնում է, որ կասկածի համար հիմք կարող էր լինել այն, որ «նա հավանաբար միատիկ էր կամ ուներ միստիկական հակումներ», իսկ դա կարող էր «կաթողիկոսի կողմից հեշտությամբ որպես հնարավոր աղանդավորության արտահայտություն»: Մկրյանը միատիցիզմը մեկնարանում է որպես ավատասիրության դեմ ուղղված հեղափոխական պայքարի ձև, ելեկով Ֆ. Էնգելսի հայտնի դրույթից: Անանիայի միատիցիզմը, սակայն, բխում էր նրա բարեպաշտությունից և չուներ ոչ հականեկեցական և ոչ էլ, առավել ևս՝ հեղափոխական բնույթ: Նրա միատիցիզմը հանգում էր հոգեկան ապրումների ծայրահետ լարվածությամբ «Քրիստո զգենալուն»: Մարդու բարոյական ինքնակատարելագործման մեջ Անանիան մեծ տեղ էր տախու անհատի անձնական ձգտմանը՝ հոգու փրկության հասնելու հանապարհին: Ըստ նրա՝ մարդը կարող է մեղքերից մաքրվել և կատարելության հասնել ոչ թէ արտաքին բարքի ու պատվիրանների պահպանմամբ միայն, —դա քիչ էր, — այլ ներքին մարդու, հոգու նկարագրի վերափոխման շնորհիվ, աստվածանաւողության լոյսին անընդհատ ձգտելու և մոտենալու շնորհիվ: Անանիան մարդու հայացքն ուղղում է դեսի սեփական հոգին, շեշտում է սեփական համաձեռնության դերը մարդու բարոյական վարքագծի վերափոխման մեջ: Նա ձգտում է, որ աստվածապաշտությունը դառնա հոգեկան պահպան, աղոթքը լինի հոգականորեն հագեցած, բխի կենսափորձից, արցունքը մաքրի հոգին: Սա չեր հակասում քրիստոնեական ուսմունքին,

առավել ևս՝ չեր հակադրվում եկեղեցուն, բայց դուռ էր բացում աշխարհիկ մտածողության խորացման համար, մի քան, որ չեր կարող վրիածի հայոց եկեղեցու սպասավորների հոգեխոտյզ աշքից: Ավելի հեշտ էր Անանիային մեղադրել աղանդավորության մեջ, քան հետևել նրա պահանջներին: Հոգու փրկության հաճակու նպատակը Անանիան չի կապում բացառակես պատվիրանապահության հետ, այլ մեծ տեղ է տալիս անհատի հոգեկոր կյանքին, նրա ձգուումներին, նրա ներհայեցությանը: Անհատական այդ սկիզբը չեր կարող հաճելի լինել եկեղեցուն:

Վերադառնանք Գրիգոր Նարեկացուն: Խնչո՞ւ են նրան կասկածել աղանդավորության մեջ: Անշուշտ, այդ կասկածը կարող էր ծագել ժամանակին հայտնի այն իրողությունից, որ աղանդավորության մեջ մեղադրվել է նրա հայրը՝ Անձնացին, ինչպես նաև ուսուցիչը՝ Անանիա Նարեկացին: Բայց ինչպես տեսանք, աղանդավոր, առավել ևս՝ թոնդրակեցի չէին ոչ Անձնացին և ոչ էլ Անանիան: Նրանք անքափի էին իրենց դավանանքի մեջ: Անձնացին ձգտում էր բարեփոխություններ մոցնել հայոց եկեղեցու մեջ, վերականգնել խախտված կանոնները և, ընդառաջելով Վասպորականի անշատական ձգտումներին, հակադրվեց կաթողիկոսին: Անանիա Նարեկացին ձգտում էր կրոնական զգացմունքը դարձնել ներքին պահանջ, հոգու փրկության և բարոյական կատարելազործման մեջ մեծ տեղ տալով անհատի հախաձեռնությանը: Նրանք ուզում էին նորություն ու թարմություն մոցնել ներեկեղեցական կյանքում ժամանակի ոգու համաձայն:

Գրիգոր Նարեկացին մտածող էր և բանաստեղծ: Ավելի հեշտ էր նրան կասկածել աղանդավորության մեջ, քան ողջակի մեղադրանք հարուցել նրա դեմ: Հայսմավորքի այն վկայությունը, թե «Եւ զի շան և փոյթ էր սրբոն վասն միաբանութեան եկեղեցեաց, զի զերծեալ և անփոյթ արարեալ կարգս եկեղեցոց սրբոց ի ծովից և ի մարմնասէր առաջնորդաց կամէր հաստատել և վերատին նորոգել»,—նետու չէ պատմական ճշմարտությունից: Նարեկացին, որեմն, շանք չի խնայել եկեղեցիների միաբանության, նրանց խախտված կարգելու վերատին նորոգելու համար:

Եկեղեցիների միաբանության խնդիրն ավելի խոր իմաստ ունի, քան կարելի է կարծել առաջին հայացքից: Դա, ըստ իս, վերաբերում էր ոչ միայն հայոց ներեկեղեցական հակասություններին, այլև հայ, հուն, վրացի, լատին, աղվան և, ստհանարակ, քրիստոնեական եկեղեցիների միաբանությանը: Այս միտքն ինձ հուշում է Ներսես Լամբրոնացու ատենաբանության այն հատվածը, որը նա եկեղեցիների միության կողմնակից հին վարդապետների շարքում հիշատակում է նաև Նարեկացուն. «յորոց մի էր և ինն աստուածանորի և յորունց գերազանց» Գրիգոր Նարեկացին: Եկեղեցիների միաբանության մեջ Նարեկացին տեսնում էր քրիստոնեական զաղափարախոսության հիմքերի անսասանության երաշխիքը: «Մի քրիստոնեայ անուանիմք, և ի մի շաղաց վերայ հետևիմք, և յիրեաց ճանապարհակցութենէ խելագարեալ զարդուիմք», գրում է Լամբրոնացին: Ըստ նրա՝ սպասելու է մտածել նաև Գրիգոր Նարեկացին: Նարեկացու լայնախությունը, սակայն, ժամանակին կարող էր որպես բարկերունականություն: Հայսմավորքի այն վկայությունը, թե բիրտ և անկիրթ մարդիկ «համբաւէին զնա ծայթ», այսպես էին արհամարհներով կոչում քաղկեդոնին հայերին,—Նարեկացու հակառակորդների համար համարժեք էր դավանափոխության: Մինչդեռ Նարեկացին ոչ աղանդավոր էր և ոչ էլ թոնդրակեցիների համակիր:

Նարեկացին դատապարտում է թոնդրակյան շարժումը եկեղեցու դիրքերից: Նա չի բաժանում նրանց հայցքները: Նարեկացին ասում է, որ նրանք չեն ընդունում ձևանադրությունը, «զոր առաքեալքն ի Քրիստու ընկալան» որ արանք արծանի են արգահատանքի ոչ միայն եկեղեցական-ների կողմից, այլև հեթանոսների, որովհետև մարդապաշտ են և ոչ թե աստվածապաշտ: «ոչ միայն եկեղեցականաց, այլև հեթանոսաց են անգուն-ներից»: Թոնդրակեցիները իրենց աղանդապետ Սմբատ Զարեհավանցուն Քրիստու էին կոչում: Ոչ թե աստվածացնում էին նրան, այլ, ընդհակառա-կը, Քրիստոսին ևս համարում էին նրան հավասար երկրածին: Նարեկացու-կը, Քրիստոսին ևս համարում էին նրան հավասար երկրածին:

«Նարեկացին համարում է «մարդապաշտ ուրացութիւն»: Նարե-կացին անսորդ ասեղությամբ է խոսում թոնդրակեցիների մասին: Բայց մտածել, թե իր պայքարի մեջ Նարեկացին եկեղեցու շահե-րից, —կիմեր սիստ և միակողմանի: Նարեկացին հանդես է գալիս հայ ժո-ղովորդի համագոյն շահերի դիրքից: Պատմական զարգացման ընթացքը պահանջում էր ստեղծել կենտրոնացված ուժեղ պետություն: Մինչդեռ Հա-յաստանը տրոհվում էր կենտրոնախույս ուժերի և միջիշխանական ու թա-գալորական պառակտիշ հակամարտություններից: Թոնդրակյան շարժումը պայքար էր աշխատավորական զանգվածների և իշխող դասերի միջև: Որ-քան էլ այդ շարժումը նշանավորեր «ժողովրդական լայն զանգվածների ինքնագիտակցության բարձր մակարդակը», ինչպես գրում է Բ. Առա-քելյանը, իրականում խորացնում էր երկրի հասարակական-քաղաքական ճգնաժամ: Իրեն քրիստոնեական հումանիզմի գաղափարախոս՝ Նարե-կացին չէր կարող հանդուրմել ոչ մի ապատամբություն, եղբայրների միջն որևէ թշնամություն, աղանդավորական որևէ պայքար: Իր պայքարի մեջ Նարեկացին եկեղեց էր ինչպես հայոց եկեղեցու, այնպես էլ հայ ժողովրդի միասնության շահերից: Բայց Նարեկացին չէր լինի խկապես մեծ բանա-տեղ, եթե նրա ստեղծագործության մեջ շանդրադանար իր դարի հիմնա-կան հակամարտությունը: Հենց այն հանգամանքը, որ բանաստեղն իրեն է վերագրում աստվածամարտ մտքեր, իրեն համարում ապատամ ու աստ-վածութաց, —ինչն դրանով էլ նա արտահայտում է իր դարի ըմբռու հոգի-ների դժգոհությունը իրականությունից: Նարեկացին թոնդրակյան չէր: Բայց նրա ստեղծագործության մեջ, անողջակի, կա այդ շարժման գեղարվես-տական արձագանքը: Միթե Տոլսոտյը չէր ուսական հեղափոխության հայելին առանց հեղափոխական լինելու:


Կասկածը կարող էր ծագել նաև ներեկեղեցական բարեփոխություն-ների պահանջից: Նարեկացին ձգտում էր թարմացնել ժամակարգու-թյունը, արարողությունը դարձնել հարուստ ու հետաքրքիր: Նա, ըստ երե-վոյթին, աշխատում էր կենսագործել Սնանիա Նարեկացու պահանջը. ա-ղոյթը դարձնել Աստծո հետ հաղորդակցման խոհ, զգացմունք ու տրամա-դրություն: Հիմ շարականները բավական չեն: Նրանց վերացական ու սա-կալվահոյզ պատկերներին Նարեկացին հակադրեց բնության կենտանի շնչով համակած ու բնարական շերմությամբ տոգորված իր երգերը: Այդ երգերը «նոր երևոյթ լինելով հոգեսոր պաշտօնական գրականության բնա-գալապում, —ինչպես գրում է Աս. Մնացականյանը, —իրենց թեմաներով և այլ արժանիքներով մի աստիճան բարձր էին շարականային երգերի մա-կարդակից»: Գեղարվեստական այդ նոր որակը, որ նշանավորույթ էր

բանաստեղծության աշխարհականացման նոր սկիզբ, չեր կարող ընդունվել առանց դիմադրության:

Եվ, վերջապես, կասկածը կարող էր ծագել Նարեկացու միստիցիզմից: Սյու միստիցիզմը չուներ ոչ հականելեցական և ոչ էլ, առավել ևս՝ հեղափոխական բնույթ: Դա բխում էր Նարեկացու կրոնական զգացմոնքներից և նորպատճական աշխարհայեցությունից: Նարեկացու համար եկեղեցին Քրիստոսի մարությունը էր, ինըը՝ Քրիստոսը, նրա գլուխը: Նրանք պաշտելի էին հավասարապես: Սակայն ինչպես Անանիա Նարեկացուն, այնպես էլ Գրիգոր Նարեկացուն մտահոգում էր այն վիճակը, որ հավատը դարձել էր ոչ թե սրտի զգացմունք, ինզու աշխարհ, այլ ծես, անհաղորդ արարողություն: Կրոնաբարոյական իդեալը չեր գրավում մարդկանց: Անհրաժեշտ էր անձնականացնել կրոնական զգացմոնքը, խորացնել մեղքի գիտակցման, զղման, ապաշավության ապրումները: Սա ներքին մարդու բարոյական ինքնակատարելագործման նոյն պահանջն էր, որ Անանիա Նարեկացուց փոխանցվեց Գրիգոր Նարեկացուն: Անհատի և Աստծու միջն հաղորդակցման անմիջական, անձնական կապի պահանջը, Գրիգոր Նարեկացու հակառակորդները, ինարկե, կարող էին աղերսել աղանդավորության հետ:

Եվ այսպես, Գրիգոր Նարեկացուն կասկածել են աղանդավորության մեջ, քանի որ ան՝ 1-ին, պաշտպանել է քրիստոնեական ընդհանրական եկեղեցու միաբանության գաղափարը, 2-րդ, աշխատել է բարեփոխություններ մոցնել հայոց եկեղեցու ներքին կարգերի մեջ և, 3-րդ, նրա ստեղծագործության մեջ արտահայտություն են գտել կյանքի, մարդու և բնության մասին նոր գաղափարներ ու զգացմունքներ:





ԳՏՆՎԵԼ Է... 70 ՏԱՐԻ ԱՆՑ

Հապա չես ասի՝ Դավիթը կրկին
Հոր վանքը շնան, իշխան է դատել...
Հովհ. Թումանյան

Զատկական տոներին գնացել էինք Հոկտեմբերյանի շրջանի Արազափ գյուղ բարեկամներից մեկի մահվան 40-ը ճշելու: Երբ գերեզմանատան արարողությունից հետո տանը ողորմաթափ սեղանի շորջն էինք նատած, խոսք բացվեց այն մասին, որ մենք շատ ենք հետացել (ոչ մեր կամքով) մեր քրիստոնեական հավատից: Բայց և պետք է վերադառնալ մեր արմատներին: Հարկավոր է 1930-ական թվականների սխալները շտկել: Վերականգնել եկեղեցիները, վանքերը, տաճարները, ազգային սովորություններն ու ծեսերը: Ահա այս պահին էր, որ այդ հանգույցայի եղբայրը՝ Սահմանադրության ժողովը կը կարող էր առաջարկել այս ականջներին, կրկնել տվեցինք նրա հայտարարությունը:

Այդ արարողությունից հետո եկանք Սահմանադր Երևանի տուն: Ասվածը ճշմարտություն էր: Մենք համոզվեցինք կնիքը տեսնելով, շշափելով և գրվածը կարդալով: Պարզ ու որոշակի փորագրված է. «Կարմիր-աղբի ԳԵՂՁ* ՍԲ. ԱՌԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՅ» բառերը, իսկ շրջանակածն գրվածի մեջտեղում խաչակիր երկգմբեթանի եկեղեցու հարթաքանդակ: Կնիքը բրոնզյա ձողածն է, 30 մմ շրջագծով, յոթ ամ բարձրությամբ՝ բրոնզակի հետ միասին: Բռնակի վերևի հարթ մասում ոռուերեն մանր տառերով գրված է երկու բառ, որոնք բութ գործիքի հարվածից խաթարվել են և չեն կարդացվում: Տարեթիվ չկա գրված: Աշնուամենայնիվ զատկական տոնի զուգադիպությամբ գտնված կնիքը շատ խորհրդածությունների տեղիք է տալիս մեր Շամշադինի շրջանի Վերին Կարմիրաղբյուր գյուղի, եկեղեցու և այլ հարցերի շորջը:

Սահմանը պատմեց, որ մի քանի տարի առաջ Երևանում իր բարեկամի տանը տեսել է այդ, հետաքրքրվել, թե ինչ բան է և համոզվելով, որ դա արժեքավոր իր է, տարել է իր տուն այն նապատակով, որ երբէ ինքը կգնա Վերին Կարմիրաղբյուր և կհանձնի գյուղի թանգարանին:

Հիմա ինչպես է մեր քահանայի, կամ ավելի ճիշտ՝ եկեղեցու կնիքը նայտնվել Երևանում: Տեր-Համբարձում Ալավերդու Պողոսյանի աղջիկ Նու-

բարը (Խանում) ամուսնացած էր Զորաթան գյուղում Ունան Քալանթար-խնի հետ: Ինչ որ ժամանակ կնիքը տարվել է հրանց տուն: Այստեղից հրա ծոռը՝ Հովհաննեար, տարել է Երևան: Սրանց տնից էլ վերցրել է Սա-հասար Կարապետյանը: Վերջինս Հովհաննեափ մորաքրոշ ամուսինն է: Ահա այսքան ճանապարհ է անցել գյուղի եկեղեցու կնիքը 70 տարվա ընթացքում:

Սրանով չեն ավարտվում մեր խորհրդածությունները, բանի որ այն կապված է մեր գյուղի և եկեղեցուն սպասարկող քահանաների հետ:

Ըստ Մ. Բարիտուդարյանի «Արցախ» (Բաքու, 1895 թ.) գրքի, գյուղի եկեղեցին կառուցվել է 1702 թ. (մեկ այլ աղբյուրի վկայությամբ 1602 թ.):



Սակայն թաթար-մոնղոլական, պարսկական և այլ ցեղերի հարձակումների պատճառով գյուղի բնակիչները լքել են և ապրել այլ վայրերում, բայց միշտ ունեցել են իրենց հավատի տոնը և քարոզիչը:

Ներկայիս օդանավակայանի դիմաց Տավուշ գետի աջ ափին դեռ այսօր էլ կա հիմ գերեզմանոցը, գյուղատեղի և եկեղեցու ամերակները: Այստեղ ապրելու ժամանակ գյուղի հոգևոր հովիվն է եղել Տեր-Մովսես Գրիգորի Մելլանը: Սակայն պատեղ ևս հրանք ապահով չէին: Քանի որ հարևան քոչվոր ցեղերը հաճախ հարձակվում էին, կողոպտում ու թալանում, հարս ու աղջիկ առևանգում: Նորանք ստիպված նոր բնակավայր են որոշում: Մի մասը գնում է ներկայիս Ներքին Կարմիրաղբյուրի տարածքը, որը նոյնական հիմ բնակավայր էր, մյուս մասը մի քանի վայր տեղափոխվելուց հետո վերջապես 1860 թ. կրկին հաստատվում են իրենց նախնիների բնակավայրում: Գյուղացիների և հատկապես Հակոբ Տեր-Մովսեսի Մելլանի շանքերով եկեղեցու ավերակները վերականգնվում են: 1873 թ. այստեղ է հանգրվանում նաև քահանա Կարապետ Ավագի Միթթարյանի գերդաստանը: Տեր-Կարապետը շատ շնորհավի մարդ էր և քանի որ կառուվարության կողմից արտոնություններ ուներ որպես հոգևորականի, ամրապնդում է գյուղի ասհմանները, ամեն տեղ իրենց համար հողամասեր ու այգիներ հիմնելով: Նա ձեռնամուխ է ինուս նաև ջրաղացներ կառուցելուն: Նորաշեն գյուղի մոտ գետակի վրա հիմնում է զույգ ջրաղաց: Նորաշենցիները շինուորթելով հարձակվում են հրա վրա և ծեծում: Մի քանի ժամանակ հիմվանդ պատկերուց հետո Տեր-Կարապետը 1888 թ. մահանում է և քահանա է ձեռնամրպում Տեր-Համբարձում Պողոսյանը: Նա երկար ժամանակ զուգահեռ ծառացել է Վ. Կարմիրաղբյուր և Կրզեն գյուղերի եկեղեցիներում:


Տեր-Համբարձում հարուստ գրադարան ուներ, որ հոգևոր գրքերից ու ավետարաններից բացի կային նաև դասականների՝ Ռ. Պատկանյանի,

բանցիներով դրանք 1940—1943 թթ. կարդում էինք: Դա մի այնպիսի գրականություն էր, որ այն ժամանակներում չէր ճարվում կամ խորհրդային օրենքներով արգելված էին՝ «նացիոնալիստականի» պիտակով: Նրա տակը կային նաև հնդական արխիվային հյութեր, պարբերականներ հայերն ու ռուսերեն, քանի որ նրա մեծ տղան՝ Հովհանն Պողոսյանը, պրոֆեսիոնալ հեղափոխական էր, կապված Ռուսաստանի ու Եվրոպական երկրների հետ: Եվ նրա ձեռքով հարստացել էին նաև քահանա հոր գրադարանը: Հիմա մեզ մնում է միայն ափսոսալ, որ այդ հարուստ գրադարանը նրա մահից հետո ոչնչացվեց անտեր մնալու պատճառով:

Ինչու, Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո եկեղեցու գործունեությունը դադարեցվել է, իսկ 1931 թ. մի քանի վայ կոմունիստների դրդմամբ՝ ավերվել: Տասնյակ ծխամատյաններ, գրքեր ու եկեղեցական այլ հյութեր հին դպրոցի առաջ կուտակվել ու վառվել են:

Բայց ահա 70 տարի անց երկար դեգերուններից հետո գտնվել է զյուղի եկեղեցու կմիջը և առաջիկայում իր տեղը կգտնի Տեր-Կարապետի եղբայր՝ Պողոսի թոռ Ս. Միխարյանի շահքերով ատեղծված, արդեն 30 տարի գոյություն ունեցող գյուղի թանգարանում:

ԲԱԼԱԲԵԿ ՄԵԼՅԱՆ



ՀՈՎՃԱՆՆԵՍ ԹԱՔՈՒԿՅԱՆ

ԵՐԿԱՔԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՉԱԳԱՆՔՆԵՐԸ ՀԱՅ ՎԱՂ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Մարդկության պատմության ընթացքը քննելիս հանդիպում ենք ինչպես բնածին, այնպէս էլ մարդկային մտքի ու ձեռքի արգասիք հանդիսացող բազմաթիվ երևոյթների, որոնք ժամանակի ընթացքում ստացել են պաշտամունքային արժեք: Եվ յուրաքանչյուր ժամանակը պարագայում ի հայտ է գալիս տվյալ պաշտամունքային առարկայի կամ երևոյթի պատմացիալական խոր արմատները, տնտեսական հիմքն ու անհրաժեշտությունը:

Վաղնջական ժամանակներում անհիմանական ու տոտեմիստական պատկերացումներն, անկասկած, պայմանավորված էին անհամարդու բրնությունից ունեցած աներկրա կախվածությամբ: Կրակի, ջրի, քարի պաշտամունքները ևս հիշյալ տարերքների մկանում մարդու անզորության դրսորումներն էին:

Ծայտ հաճախ պաշտամունքային նշանակություն էին ձեռք բերում նաև մարդկային աշխատանքի արգասիքները, որոնք այս կամ այն կերպ կապվում էին բնության առավել խորհրդավոր ու անբացարելի երևոյթների հետ:

Այս պարագայում, անշուշտ, առաջին շարքի վրա է մետաղների պաշտամունքը: Ինչպես իրավագիրեն նշում է Խ. Սամուելյանը «մետաղը դարձավ այն հզոր ուժը, որը նեղափողեց մարդկության պատմությունը, հիմնովին կատարելագործեց արտադրության միջոցները, հումկու թափ հաղորդեց հասարակական ձևերի զարգացմանը, խոր ակոսներ փորեց սոցիալական շերտավորությունների մեջ»¹: Մետաղանանությունն ու մետաղաձուլությունը, որի աշխատանքային գործերթացներն անմիջականորեն կապվում էին չորս տարերքներից երկուսի հետ (հող (ընդերք) և կրակ) անպարմանորեն բարեկար հիմք էին ստեղծում ծխա-հմայական և պաշտամունքային մտածողության ձևավորման համար: Սակայն բոլոր արդյունահանվող ու ձոլվող մետաղներից (ոսկի, արծաթ, բրոնզ, պղինձ, երկար) առավել մեծ պաշտամունքային նշանակություն է ունեցել երկաթը: Երկաթաձուլության տևելու մասին աշխատանքային պահանջանակը կազմում է մատուցության մեջ՝ ուղարկելու համար:

Աղողիան լինելով առավել բարդ և վարպետություն պահանջող, իսկ ինքը՝ երկաթը² առավել ամուր և դիմացկուն մնացյալ մետաղներից, ինքը բարստինքյան պիտի հարգանք ու գնահատանք ներշնչեր հիշյալ մետաղն օգտագործողներին։ Պատահական չեր, որ «երկաթագործ դարրինները համարվում էին խորհրդավոր ուժ, մոգական ընդունակություն ունեցող մարդիկ։ Սրանք ոչ միայն շիկացած երկաթից մուրճի ու սալի միջոցով կոփում էին զանազան զենքեր, որոնք իրենց ամրությամբ և հատու ասյրով գերազանցում էին նախորդ բոլոր զենքերն ու գործիքները, այն նոյն մուրճի ու սալի միջոցով կախարդական ազդեցություն կարող էին ունենալ մարդկանց կյանքի զանական երևույթների վրա։ Այդ հիման վրա դարրիններին էր վերագրվում նաև բժշկական ընդունակություններ»³։

Դարրենությունը, որպես երկաթի մշակման հետ կապված արհեստ Հայաստանում երևան է գալիս մոտավորապես երրորդ հազարամյակի 2-րդ կեսից (Ա. Ք.)⁴։

Այս շրջանից էլ հայունի է նաև դարրենապաշտությունն ու երկաթապաշտությունն ոչ միայն Հայաստանում, այլև ողջ արևելքում։ Գիտնականներից ունակը (Ժ Մորգան, Տ. Միքարդ և այլք)⁵ գտնում էն, որ երկաթի մշակման և ընթերապես մետաղաձուլության կենտրոնը եղել է Կովկասը։

Եգիպտական գրավոր հուշարձաններում երկաթի հիշատակությունը հանդիպում է Ա. Ք. 13-րդ դարում⁶։

Ասորական Սարգոս երկրորդի (722—705 թթ. Ա. Ք.) պահեստներում հնագետները գտել են 160 հազար կգ երկաթ, որ ձեռք էր բերվել հայկական Արարատյան թագավորության (Ուրարտու) վրա կատարած արշավանքի ժամանակ⁷։

3-րդ, 2-րդ հազարամյակներում (Ա. Ք.) ասորեստանցի վաճառականները երկաթը գնահատում էին արծաթից 40 անգամ, իսկ ուկուց 8 անգամ թանձն⁸։ Ինչպես վկայում է Թուրանիամուն փարավոնի դամբարանը պեղող հնագետն Հ. Կարտերը, արքայի մումիան «ավելելիս» նրան հանդիպած բազմաթիվ հնայիններից մեկը «...երկաթից էր։ Հնայիլը պատկանում էր Եգիպտոսի ամենավաղ շրջանի երկաթե առարկաների թվին, և... պետք է նկատել, որ ուկով լեփինցուն դամբարանում հենց այս համեստ երկաթը ամենաարժեքավորն էր մշակույթի պատմության մասնագետի տեսանկյունից»⁹։ Հիշենք, որ Թուրանիամունի թագավորությունը գիտնականները նշում են մոտավորապես 1350-ական թվ. Ա. Ք.։

Հեթիթական Անիտյա թագավորին նվեր էին տվել երկաթե գահ, իսկ հեթիթական բնագիրները հիշատակություններ են պահում երկաթե սրբազն օջախի մասին¹⁰։

Հայտ հին հեթական ավանդության երկաթը դժբախտության, ստրկության, բայց և դիմացկունության և վճռականության խորհրդանշ էր¹¹։

Հայաստանում երկաթի ու դարրինների պաշտամունքը, թերևս, ամենաուժեղն է եղել Վերոնիշյալ բոլոր աշխարհագրական գոտիններից։ Այս ոչ միայն երկար է պահպանվել ժողովրդական մտածողության, բանահյուսության և հավատալիքների մեջ, այլև անցնելով վաղ քրիստոնեությանը ամրապնդվել պաշտօնապես, որոշ վերապրոկներ դրաւորելով ընդհուպ մինչև 20-րդ դար։ Սրա գլխավոր պատճառն, անտարակույս, այն է, որ, ինչպես ավելց, երկաթագործության (և մետաղաձուլության ընդհանրապես) օրրանը եղել է Կովկասը և, ի մասնավորի, ու հիմնականում Հայկական լեռ-

աշխարհը: Դրա անվիճելի ապացույցները բերում են բազմաթիվ ուսումնասիրողներ:

Երկաթը նախապես հայտնաբերվելով երկնաքարերի մեջ, ի սկզբանն դիտվել է որպես երկնային մետաղ և կավագել երկնքի մետ: Այստեղից էլ ըստ որոշ գիտնականների, **երկ-ինք=երկ-աթ=երկ-նել=երկն=երկոնք** և այլն¹²: Ն. Մառը գտնում է, որ, իբր երկաթը բարի արմատը հարեթական է՝ RKN|RKD և այդ արմատից են գոյացել նաև հայկական երկինք=erk-in, որ բառացի հշանակում է ԵՐԿԱԹ և երկիր=erk-ir, որ նույնպես ԵՐԿԱԹԻ հշանակություն ունի¹³:

Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան սահմաններում բնակվող խալիք ցեղի անոնց հին հովները ճանաչում են երկաթի լավագույն դարրենած տեսակը (պղղատը), որը հենց կոչվում էր ԽԱԼԻՊ, իսկ մի այլ խալիքնի երկաթագործ ցեղի՝ մոսխների անվանումի տառերի դրափոխությունից առաջացած «ՍՈՒԵԽՆԻ» անունը վրացերենում հայ է հշանակում¹⁴:

Ստրաբոնի վկայությամբ խալիքները ապրում էին Քոու և Արաքս գետերի վերին մասերում, ալսինքն Հայկական լեռնաշխարհի գրեթե կենտրոնական մարզերում: Ումանք ենթադրում են, որ խալիքները խալդական ծագում ունեն, իսկ հնագիտական տվյալներով հաստատված է, որ հենց խալդական ժողովորդների մշակույթի մեջ էր երկաթագործությունը զգալի տեղ գրավում և որոշիչ դեր խաղում հրանց զարգացման գործում¹⁵:

Հայոց գերմանացի հնագագտն Յ. Կարստի կարծիքի, հայկական ԵՐԿԱԹ բառը հին հայ ժողովրդական ստուգաբանությամբ պարունակում է նաև միտիկական հշանակություն: «Երկաթագիր» բառը նաև ոչ միայն կապում է լոկ երկաթե սրածայր ձողիկով գրեթու գործընթացի հետ, այլև այն համարում որպես վաղնջական տերմին հին մեմենական հշանագրերի համար: Մի բան, որ հետո փոխանցվել է Աստվածաշնչի հայկական թարգմանության և Մեսոպոլիան գրերին իրու սրբագործված հշանագրանել:

Այնուհետև ԵՐԿԱԹ բարի որոշ բարրառներում հնչող ՕՐԿԱԹ ձևը նաև ստուգաբանորեն փորձում է համեմատել հին հովնական համահնչուն մի բառով հետ, որ հշանակում է ԿՈՐՆԱԿԱՆ ԾԵՍ ԿԱՍՏՐՈՂ, ՄԻՍԻԿ, ԽՈՒ-ՀՈՐԴԱՎՈՐ ԱՍՏՎԱԾՈՅԻՆ ՊԱՇՏՈՆ, ՄԻՍԵՐԻԱ, ԳԱՂՏՆԻՔ: Այս բառերի սեմանտիկ բովանդակությունը բնորոշում է դադրնության խորհրդավորությունը¹⁶:

Դարբնության, երկաթի, պղղատի հետ կապված հայ ժողովրդական հավատալիքները բազմաբնույթ են: Դրանք հանդիպում են Հայաստանի ազգագրական բոլոր գոտիներում առանց բացառության և շատ կենսունակ են ցայսօր:

Դարբինների պաշտամունքի ամենաբազմազան փաստերի գրառումներ ունեն անցյալ դարի հայկական ամենատարբեր շրջաններն ուսումնասիրած ազգագրագետներ:

Դարբինը համարվել է ծխահմայական գործողութայն ամենազոր մասնակից իր մորճով ու սպով, որը հնագանդեցնում է կրակը և մետաղից իրեր պատրաստում՝ դարձալ կրակի օժանդակությամբ: Բայց կրակը թափվում էր երկնքից (կայծակ, շանթ), կամ ելեռում երկրի խորքից (հրաբուխ) և իր հետ բերում ավեր ու չարիք: Այն բերում էր նաև երկաթ (Երկնաքարեր) կամ լավագ: Հետևաբար կրակ ու երկաթ հնագանդեցնող դարբինը շանթի ու կը բարձր աստվածի հետ կապված մի էակ է, որը գտնելով կրակը հմայելու գաղտ-

նիքը: Դարրիմեների ֆիզիկական ուժի ներշնչած պատկառանքը ևս նվազ դեր չի խաղացել նրանց իդեալականացնելու գործում:

Դարրիմեների պաշտամունքն ապացուցող փաստերից Արտավագի առասպեկտմ հիշվող դարրիմեների սալին երեք անգամ խթելու գործողությունը, որի ժամանակ «ի ձայնէ կոանարկութեան դարրեաց զօրանան, ասէն, կապանքն (Արտավագդայ)»¹⁷: Մ. Աբեղյանը նշում է, որ Արտավագդին շղթայող բազքերը հիշեցնում են գերմանական ելքերին, ու թեև դրանք դարրիմեներ չեն, սակայն «արդյոք բազքերի այդ դարրենելու մի հշանակը չե՞ն կատարել մեր դարրիմեները կոանը սալին բախելով»¹⁸: Հետաքրքիր է, որ Արխագիայում դարրիմեները համարվել են Ծաշվայի (Արխագական դիցարանի երկրորդ կարևոր չաստվածի) քրմերը: Այս առումով Մ. Աբեղյանի կարծիքը բնական ու համոզիչ է երևում և բերում է այն խորհրդածությանը, թե՝ ո՞ւմ քրմերը կարող են լինել մեր դարրիմեները: Արդյո՞ք Վահագնի, թե՝ մի այլ չաստվածի, որի «անունը մոռացված է, իսկ նրա գործակից բազքերինը պահված մինչև այսօրվան օրս»¹⁹, որը և (բացառված չէ այս տարրերակը նոյնապես) իր ֆունկցիաների շնորհիվ նոյնացել է Վահագնին, տալով նրան իր հատկությունների մի մասը:

Դարրիմեների պաշտամունքը արձագանք է նաև Դարրեաց բարը Անձնաց գավառում, որի մասին վկայվում է, թե «կուանաձայն դարրեաց ահաւոր հրաշիր և զարհուրանօք գործէին»²⁰:

Դարրիմեների և երկաթի պաշտամունքը ամենասերտ աղերսներն ունեն իրար: Սովորաբար երկաթը ժողովրդական հավատալիքային համակարգում ունի երեք դրսեւում ծիսա-հմայական, պահպանիչ-չարխափան և բուժիչ:

Հիմնականում այս ֆունկցիաներն ունեին դարրեած երկաթն ու երկաթի իրը: Գեմատիտից պատրաստված հնայինները, որ կիրառվում էին հին արևելքում (Եգիպտոս, Միջագետը և այլն) Հայաստանում համարյա տարածված չեն եղել:

Երկաթի ծիսա-հմայական գործողություններից հիշատակելի են օրինակ հետևյալները. իրը կարելի էր բազքին գերի քոնել, եթե վրան ասեղ խրպէր²¹, կարկուտի, ուժեղ անձրսի, կայծակի ժամանակ խաչերկաթը կամ մի այլ երկաթ առարկա գցում էին դրանք (Բողանքն, Վաճ, Զավախը, Զմյուռնա և այլն)²²: Հավատում էին, որ եթե երբեւ երկաթի վրա չուր լցնեն և մեկին անհծես՝ անմիջապես կկառարվի²³: Պասկելուց առաջ փեսային լողացնում էին ու տակը մի թուր դնում, որպեսզի շարքերը (բազքի՞որ) շվենասեն նըրան²⁴: Հովհան Մանեակունին այսպիսի տող ունի «Դյոթք կոչեն գդևսն, յաղ, երկաթ, ի չուր, ի նարօտս»²⁵:

Կայծակը ժողովրդի կողմից ընկալվել է իրեն ԵՐԿԱԹԵ ՁԵՆՔ, կամ ԵՐԿԱԹԵ ԾԻՊՈՏ, որ հրեշտակները նետում են շարքերի վրա: Ըստ այդմ շիկացած երկաթի իմաստ ունի և շանթը, որ հաշնակում է «ոչ միայն կայծակ, այլև երկնքից թափվող կրակ ու երկաթ, ապա՝ շիկացած երկաթ, ինչպես նաև՝ խաչերկաթ»: Այսպիսով ամպրոպային աատծու գենքերը բարերն են՝ հրեղեն փացուն բարերը, երկաթը՝ հրեղեն շիկացած երկաթը»²⁶ (ընդգծումն իմն է—Հ. Թ.):

Այս բացատրության հաստատումն է նաև այն հավատալիքը, որ տարրապի ժամանակ մի ձեռորով գլխի վրա բար են պահել, մյուսով աստամերի արանքը՝ ասեղ և կրկնել «Քարագլուխ, երկաթակենիք»²⁷: Այս երկու բարը հավանաբար հնագույն հմայական-պահպանիչ աղոթքի մնացորդ է: Այդ

աղոթքները որպես կանոն եղել են կարճ և պարունակել են հիմնական բառխորհրդանիշերը²⁸: Սովորության հնության վկայությունը ապացուցվում է համապատասխան:

Պահպանական և բուժական ֆունկցիաները հանդիս են գալիս հաճախ միախառնված: Վերը նշված հավատալիքը զուտ պահպանական է: Կան ուրիշները ևս: Օրինակ, հանրահայտ է երկարը որպես դեերի դեմ պահպանական միջոց դիտելու հանգամանքը: Պողպատե ապարանջաններ կամ մատանիներ են կրել, երբ հարկ է եղել ամայի վայրերում մենակ մնալ, պաշտպանվելու համար դեերից ու քաջերից, քանզի չար ոգիները առև ցերեկներն էին հայտնվում, երբ մարդ մենակ էր լինում: Երկարը պահպանակ էր նորածին երեխա ունեցող կանաց՝ ընդդեմ ալքերի, սատանաների ու դեվերի: Նոյնիսկ այսօր երեխայի բարձի տակ դրվող դանակները, նորապահների և ֆիզիկական թռվակար ամոլների անկողինու տակ բաց մկրատ դնելը երկարի պաշտամունքի վերապրությների ակնհայտ ապացուցներ են:

Չափ ավելի լայն ու հետաքրքիր է բուժական կիրառությունը²⁹: Այստեղ ավելի շատ ենք հանդիպում տարբեների, որոնք դրսուրվում են ոչ միայն գործողությունների, իրավիճակների, այլ առև խոսքի որոշակի միավորների (աղոթքային բանաձև, անոն և ալլ), ընդգծված լուսիններ (խոսքի բացակայություն): Կամ ժամանակի պահի սրբացման մեջ:

Երկարի որպես բուժիչ միջոց կիրառելը խորը արմատներ ունի: Քրիստոնեությունը տարածվելով Հայաստանում երկարի ու դարբնության նկատմամբ եղած ժողովրդական հավատափիքները չկարողանալով վերացնել ներմուծեց իր «զինանոցը»: Այսպես, օրինակ, «բուժում» կատարելիս երկարեղեն օգտագործելու ժամանակ ասվել են աղոթքներ, որոնց հախաքրիստոնեական լինելն ակներս է, և դրանց մեջ եղած և Տիրամոր ու Հիսուս Քրիստոսի կամ որևէ սրբի անվան հիշատակումը զուտ նորամուծություն է՝ արված 301 թվականից հետո: Առա մի քանիսն այդ աղոթքներից.

«...Գնա մտիր տուրը Սիմեոնին,
Սո երկթե ծնջիլ, պոպտե բալնիք,
Դիր գողն ի ոտին, գելն ի բերան
Եվ ամնայն ջանավարին,
Որ ժոու կգան մեջ գիշերին»³⁰:

Ծննդկանի հմայական աղոթքում դիմում են և .Տիրամորը նրանից ստանալով պատասխան.

«...—Կերպամ տուն հիվընդին,
Էրթիկը ծննդկանին:
Ժնճիլ ցկեմ վրա պատին,
Բրիշ (կամ բալնիք) ցկեմ բորի բարձին,
Օր ամնայն չար խափանին,
Օր չմարի սիրտը փորին,
Օր չկլորի լեզուն բերնին»³¹:

Տիրամոր (կամ մեծ մոր) ուղղված նախաքրիստոնեական աղոթքները նվիրված են եղել Անանիտ շատավածություն, որոնցից շատերն ուղղակիությունը անցել են Մարիամ Աստվածածնին՝ տոների ու սրբատեղիների հետ

միասին³²: Անահիտի առնչությունները երկաթի հետ մեզ բերում են մի այլ, խիստ ոշագրավ փոխանչական շարքի՝ Վահագն շատվածի հետ: Հայունի է, որ Վահագնը հայ հին դիցարանում Արևի, Կրակի և Ռազմի շատվածն էր: Նա Արամազդի ուստրել էր դիտվում³³, իսկ Անահիտը՝ Արամազդի դուստրը, որոշ սկզբաղյուրներով՝ հան կիբը: Տրդատի հրովարտուսկում, օրինակ, որը հշում է Ագարանգեղութ, այսպիսի տողեր են եղել. «Լիութին պարարտութեան յարոյն Արամազդայ խնամակալութին յԱնահիտ տիկնուշէ, և քաջութին հասցէ ձեզ և քաշէն Վահագնէ ամենայն հայոց աշխարհին»³⁴: Անահիտի ու Վահագնի անվանումների միասին հիշատակելը եղակի երևոյթ չէ, և այս հաճախականությունը վկայություն է հան հրանց ֆունկցիաների առնչության:

Անահիտը պտղաբերության, մայրության, առատության, տղամարդկային արգասավորության շատվածունի լինելու հետ մեկնեղ ունի հան ուազմի հովանավոր շատվածի հատկություններ³⁵: Կ. Մելիք-Փաշայանը գտնում է, որ Վահագնի պաշտամունքը ավելի ուշ է ձևավորվել և ուզմի շատվածի ֆունկցիաները հրան են անցել Անահիտից: Եթե հիշենք Մ. Արենյանի վարկածը, ըստ որի Վահագնին են անցել «քաշքարի դասը», որոնք ուղեկցել են հրանից առաջ եղած որևէ այլ շատվածի, ապա այս կարծիքը խիստ հետաքրքրական է դառնում: Ուշագրավ է, որ Անձնաց գավառի մեր արդեն նշան Դարրենաց քարում եղել է Անահիտական մեհյան, որին վերագրվել է բուժման հատկություններ, և որի տեղում քրիստոնեական շրջանում ա. Մարիամ Աստվածածնին նվիրված վանք է կառուցվել՝ Հոգեաց վանք անունով: Դարրենաց քարում «քժկության գործը անցել է դարրեններին (ընդգծումն իմն է—Հ. Թ.), որոնք կրակի օգնությամբ, իբր թռ կարողանում էին բուժել մի քանի հիվանդություններ»³⁶:

Այս վայրի Անահիտական մեհյանի քրմերը կոչվել են դարբին, «քանօի ահագին աղմուկ էին հանում իրենց կունահարությամբ և վառ պահում լեռնան պաշտամունքը բնակիչների մեջ»³⁷: Հոգեաց վանքում բուժվում էր լուսնոտությունը³⁸, մի հիվանդություն, որն անշոշո, կապված էր մագնիսականության, լուսնի մագնիսական դաշտի և այլ հման երևոյթների հետ: Լուսնոտությունը (սոռնամբուլիստ) լինում է երկու տեսակ՝ նյարդային, որը հանդիպում է միայն մանուկների մոտ, և նոպայական, բռնկումային, (պարօսազմալին), որը ընկնավորության արդյունք է (Եպիլեպսիա)³⁹: Ընկնավորներին ժողովուրդը «տիրամոր հիվանդ», «տիրամոր զարկած» է կոչել, և հման հիվանդների բուժման համար գործածել են հան դարբնի պատրաստած մետաղյա իրեր ու հմայիլներ՝ կախելով հիվանդների վրա կամ բարձի տակ դնելով:

Բուժական ֆունկցիաները քննելիս քրիստոնեականի ու հայաքրիստոնեականի փոխառությունը երևում է հան Վահան տարածված հետևյալ հավատաշիքում «ծննդկանի բարձի վրա ԱՍԵՂՆԵՐ, և ՆԱՐԵԿ, բարձի տակ ԵՐԿԱԹԵ կրակ խառնելու ԶՈՂ ՄԸԼ (Չիշ) (կը նենին), որ չար ոգին ծննդկանի շիգարը չտաներ»⁴⁰ (ընդգծումներն իմն են—Հ. Թ.):

Ս. Նարեկի և երկաթյա «պահպանիչ» իրերի համագործակցությունը տարածված էր բազմաթիվ վայրերում: Ս. Նարեկի փոխարեն դնում էին Ս. Գիրք, սրբերի մասունքներ և այլն: Սակայն ամենուր երկաթյա իրերի գոյությունը պարտադիր հայապահման էր: Ծառ հետաքրքրի է այս առումով հան հետևյալ հավատապիքը: Մթության մեջ որևէ ամանից, կամ հատկապես առվից կամ գետից չոր խմելիս շարքերի հարվածից խուսափելու համար

«իմելիս ջրի մեջ պետք է դնել ԵՌԱԾԵՂԲ ԴԱՆԱԿ կամ մի կտոր ԵՌՎԱԹ»⁴¹ (ընդգծ. իմն է—Հ. Թ.):

Հմայական աղոթքներից մեկում հանդիպում ենք այսպիսի տողերի.

«Մեր տուն տիրոց տուն է,
Պատերն հըմեն երկար է,
Սներ հըմեն պողպատ է,
Քրիստոն (կամ մեկ որիշը) դռան պահապան է,

Ա քա Մարիամ, հոտ ի՞նչ կէնես,
Իրեք պոտ դանակմ ունին,
Մեկը՝ սուս սատանին,
Մեկը՝ գել գազանին,
Մեկն ա չար խափանին»⁴² (ընդգծ. իմն են—Հ. Թ.):

Այս երկու օրինակներում ընդհանուր են երկարի, եռաշեղը (իրեք պոտ) դանակի հիշատակությունները: Հավատալիքում քրիստոնեական սրբի անդաման հիշատակություն չկա, մինչդեռ հմայական աղոթքում հիշվում են Քրիստոս ու Մարիամ Աստվածածինը: Աղոթքների տարրերակներում Քրիստոսի անդամն երեսն փոխարինել է որևէ սրբի անոն: Այս պահը կարևոր է, քանի ակնհայտորեն ապացուցում է այս երևոյթի բազմատվածությունից անցած լինելը: Ըստ անհրաժեշտության, կամ ըստ պաշտամունքի վայրի աղոթքի մեջ հիշատակվել է երրոշակի չափաված, երևոյթ, որն հետո փոխանցվել է քրիստոնեական շրջանին:

Ինչ վերաբերյում է եռաշեղը դանակին, ապա սա, թերևս քրիստոնեական շրջանի հավելում է՝ Սուրբ Երրորդության հետ կապվող, որովհետև հարաբերություն եթե այն եղած լիներ, ապա երկարի կտորների համար նույնական որոշակի թվաքանակ պիտի հիշատակվեր:

Երկարի պահպանի հատկություններն ավելի ուժեղ են համարվել, եթե «նրանք գործադրվում են կամ պատրաստվում ուրբաթ կամ ստանձնակես Ավագ Ուրբաթ օրը: Ապարանջաններ ու մատանիներ են գնում այնպիսի պողպատից, որին դարբինն Ավագ Ուրբաթ օրը մուրճով մի քանի անգամ պահպատից, ինչ դարբինն Ավագ Ուրբաթ օրը մուրճով մի քանի անգամ հարկածել է»⁴³: Պահպանական այսպիսի միջոցները կոչվել են ԱՐՈՒՐՔ, հարկածել շիմում է միայն ուրբաթ օրերին: Այստեղից է ՈՒՐԲԱԹԱ-ՌՈՒՐՔ անվանումը: Հետաքրքիր է, որ դարբինն աշխատելիս պետք է արթնանար վաղ առավոտյան և գործը սկսեր ու ավարտեր անխոս: Դարբնի այս լուակյացությունը այնքան ազդեցիկ է եղել, որ դանից սկիզբ է առել ՈՒՐԲԱԹԱԼԽՈՍ բառը⁴⁴: Մ. Արենյանը կարծում է, որ ուրբաթը թերևս նը-ՈՒՐԲԱԹԱԼԽՈՍ բառը:

«Արենյանը Հայաստանում մեծագույն սրբություններ են դիտվել երկարէ ուրբաթարիքները համարվել են ազդեցիկ հմայիլներ: Ըստ գերմանական հավատալիքների կազմակի խորհրդանշերն ավելի ազդեցիկ են դիտվել հինգշաբթի և Դուսար չափավածին նվիրված տոն օրերին»⁴⁵:

Ի վերջո քրիստոնեական շրջանում երկարի պաշտամունքի վերապուկներից կարելի է հիշատակել ևս երկուսը:

Դարերով Հայաստանում մեծագույն սրբություններ են դիտվել երկարէ Ս. Գեղարդը և Աշոտ Երկար թագավորի երկարէ խաչը: Առաջինը անմիտ Գեղարդը և Աշոտ Երկարը ուրբաթարիքները համարվել են ազդեցիկ հմայիլներ: Ըստ գերմանական հավատալիքների կազմակի խորհրդանշերն ավելի ազդեցիկ են դիտվել հինգշաբթի և Դուսար չափավածին նվիրված տոն օրերին»⁴⁶:

պաշտամունքային ծագման այլ խորը արմատներ: Բանն այն է, որ նիզակի (գեղարդի) պաշտամունքը եղել է ինչպես հին հայերի այնպես էլ շրջակա (գեղարդի) պաշտամունքը եղել է մեջ: Մուսասիրի տաճարի մուտքի երկու կողմում այլ ժողովորդների մեջ: Մուսասիրի տաճարի մուտքի երկու կողմում կանգնեցված են եղել 2 երկարաձող նիզակներ «որպես կրոնական-սրբազն նշանակություն տեսքող առարկաներ»⁴⁶: Հոռմեացիները հանդիսավոր կերպով նիզակ էին մատուցում հերոս ուազմիկին, կամ ավելի բարձր դաս փոխադրված ազատ քաղաքացուն, իսկ պատերազմում պարտվածներին ու գերիներին անցկացնում էին զոյտ խոնարհեցրած նիզակների տակով: Ազատ ծնված զինվորի գերեզմանում նիզակ էին դնում: Նիզակով գուշակություններ են կատարել:

Ս. Գեղարդի, որպես նիզակապաշտության և երկաթապաշտության միաձուման օրինակը կարևոր է, որովհետև սա արդեն ապացուցում է և խորհրդանշական (սիմվոլիկ), և հմայական (միտուիկ) հավատալիքների միաձումը:

Ս. Գեղարդը ունի բացառիկ պաշտամունքային արժեք: Նրա անվամբ է վերանվանվել Այրիվանքը: Վերջինս լինելով Հայաստանի ամենաանառիկ վանքային համալիրներից մեկը հանդրվան է եղել ոչ միայն և Գեղարդի, այլև բազմաթիվ ուրիշ (նյոթական արժեքի տեսանկյունից առավել թանկարժեք) սրբությունների: Զնայած դրան Ս. Գեղարդն իր պաշտամունքային անկրկնելի արժեքի շնորհիվ «համարվել է Այրիվանքի ամենաարժեքավոր գանձը, և... երկաթը Գեղարդն արժանացել է արծաթագործության... հոյակապ պահարան-զարդի»⁴⁷:

Աշոտ Երկաթի անվանումն իսկ արդեն խորհիւ տեղիք է տալիս: Մինչև այժմ Էջմիածնի Մայր Տաճարի թանգարանում դրված Աշոտին վերագրվող երկաթե խաչը (որը ժողովրդին հայտնի է «Սևանի և Նշան» անվամբ, քանզի երկար ժամանակ պահվել է Սևանի վանքում), դեպի իրեն է բերում բազմաթիվ ուխտավորների: Հարյուր-հազարավոր ուկե, արծաթե, բրոնզե և այլատեսակ խաչեր ժողովրդի աշքում այն զորությունը շտնեն ինչ այս երկաթե խաչը: Ի դեպ, նոյնիսկ ոչ մասնագետ աշքի համար ակներն է այս խաչի հնագույն շրջամին պատկանելու հանգամանքը: Նման կարծիք է հայունում նաև արվեստարան Մ. Ղազարյանը⁴⁸:

Երկաթը դարեր ու դարեր օգտագործվելով մարդկային կենցաղի ամենաարազմազան ոլորտներում իր անհրաժեշտության և օգտակարության հետևանքով ձեռք է բերել պաշտամության բացառիկ արժեք, որը խորը արմատներ ունենալով ժողովրդական հավատալիքների զինանցում ոչ միայն չի անհետացել, այլև փոխանցվելով քիչոտնեական շրջանին մտել է այս կրոնի մեջ, իր արձագանքներն ու վերապրուկները դրսկորել ընդհուպ մինչև մեր ժամանակները, տեղի տալով բազմաթիվ հոր հավատալիքների և արարողությունների:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ


- Խ. Սամուելյան—Հին Հայաստանի կոլտուրան, 2-րդ հ., Եր.—1941 թ., էջ 11:
- Երկաթ ասելով պատմետն մեր հետինակային բնագրում (ոչ մեջբերումներում) Ակատի ենք ունենում նաև պրոպատր:
- Խ. Սամուելյան—նշվ. աշխ., էջ 276:
- Է. Խանջաղյան—Հայկական լուսաշաբաթի մշակույթը Յ-րդ հազարամյակում. Եր.—1967 թ., էջ 59.

5. **Խ. Սամուելյան**—նշվ. աշխ.՝ էջ 12—13.
6. Անդ.՝ էջ 12.
7. Անդ.՝ էջ 14.
8. **Վյա. Յ. Իվանով**—История славянских и балканских названий металлов. М., 1983 г., стр. 91 (տես նաև էջ 40—45).
9. **Կերպամ**—Աստվածներ, դամբարաններ, գիտնականներ. Եր. 1971 թ., էջ 215.
10. Միфы народов мира. М., 1982 թ., т. 2, стр. 146—147.
11. Անդ.՝ էջ 147, 3-րդ պունձակ.
12. **Խ. Սամուելյան**—նշվ. աշխ., էջ 45.
13. **Н. Марр**—Яфетические элементы в языках Армении. «Известия Ак. Наук», СПб., 1911 թ. Թիվ Ն. Սասի լեզվաբանական հայացքները քննադատության չեն դիմանում, կարևորը, սակայն մեզ համար երկարի հետ կապված մեկնություններն են.
14. **Խ. Սամուելյան**—նշվ. աշխ.—էջ 276—278, նաև՝ Behlen H.—Der pflug und pflügen. 1904 թ.
15. **Խ. Սամուելյան**—նույնը.
16. Անդ.
17. **Մովսես Խորենացի**—Պատմ. հայոց, Թիֆլիս—1913 թ., էջ 190.
18. **Մ. Աքեղլյան**—Երկեր, Ա. և. Եր. 1966 թ., էջ 156.
19. Անդ.
20. **Խ. Սամուելյան**—նշվ. աշխ., էջ 327, նաև՝ Դ. Ալիշան—Հին հայատը., Վեճ. 1895 թ., էջ 43.
21. **Մ Աքեղլյան**—Երկեր, Է. և., էջ 78: Հետաքրքիր է, որ քաջը և երկարե ասեղը (մահաքը) դարձալ միասին են հանդես գալիս այս հավատապիրում:
22. Հայ ազգագրություն և բանահյուսություն—պր. 2, Եր. 1970 թ., էջ 195, նաև՝ պր. 3, Եր. 1972 թ., էջ 64.
23. **Արտակ արքեպ.** **Մանուկյան**—Զորք կրոնական ծիսակատարության մեջ—Թեհրան, 1973 թ., էջ 38.
24. Հայ ազգագր. և բանահյուս.—պր. 3, էջ 26.
25. S. Ցովհաններ Մանդակունոյ Հայոց հայրապետին ճառք—Վեճ. 1836 թ., էջ 186.
26. **Մ. Աքեղլյան**—Է. և., էջ 74.
27. Անդ. էջ 75.
28. Հմտո. «Հար աշք՝ շար փշին» Երիցո կրկնվող բանաձեր, «Սասան ծոեր» վեպում տարածված «Հաց ո գինին՝ Տեր Կենդանին» աղոթքային բանաձևում: Հայանարար մանագույն այս համառուս աղոթքների վերականցնումը շատագովվում էր քրիստոնեական ծևալության շրջանում ևս՝ ի տարբերություն երևական երկարացունց աղոթքների, փառաբանական ձևների և պլի: Սրա լավագույն վկայությունը Ս. Ավետարանում եղած միշտակությունն է Հյուսոս Քրիստոսի աղոթք սովորեցնելու մասին, եթե ասում էր՝ «Եւ յոթման կացէք լաշօս, մի շատախօս լինիք իբրև զիեթանոսա» (Մատթ. Զ. 7). Եվ հենց քրիստոնեական ամենանիմնական աղոթքը՝ «Հայր Մերը» (Տերունական Աղոթքը) ընթամենք տաս պարբերություն (բան) ունի (տես՝ «Եղմիածին» ամսագիր, 1987 թ., թ.-Ժ, էջ 47).
29. Անշուշտ խիստ պայմանական են վերը նշված բաժանումները, ո դրանք, անկարած, փոխվագակցված են: Պարզապես տվյալ գործողության, խորապես բանաձեկի կամ իրավիճակի մեջ գերիշխող կիրառական կողմն է առաջնային է դիտվում:
30. **S. Նավասարդյանց**—Հայ ժողովրդական մերիամներ, VI գ., Թիֆլիս, 1890 թ., էջ 147.
31. **Մ. Աքեղլյան**—Է. և., էջ 98
32. **Կ. Մելիք-Փաշայան**—Անահիտ դիցունու պաշտամունք, Եր. 1963 թ., էջ 138—155.
33. Անդ. էջ 26.
34. Ագաթամելուայ Պատմություն Հայոց, Տիֆլիս—1909 թ., էջ 31.
35. **Կ. Մելիք-Փաշայան**—նշվ. աշխ., էջ 62—63.
36. Անդ., էջ 58.
37. Անդ., 108—109.
38. Անդ., էջ 140.
39. Բոլիայա Մեդիցինսկայա Էնցիկլոպեդիա—т. 23, стр. 511 кол. 1515.
40. Հայ ազգագր. և բանահյուս., պր. 1, էջ 195.
41. **Մ. Աքեղլյան**, Է. և., էջ 33.
42. Անդ., էջ 35.

43. Անդ., էջ 75.

44. Անդ.

Ուրբաթ օրվա հմայական հշանակության բննորյունը դուրս է մեր հարցի շրջանակ-ներից և կարու այլ ուսումնակիրության։ Այն, որ ուրբաթը մեծ տեղ է գրավել հմայական գործողությունների շարքում, ունի բազմաթիվ ապագույցներ։ Օր, իրեն հայտնիական մի հմայական գիրք կոչվել է Ուրբաթագիրք, նրա հետևողմերը՝ ուրբաթատեսք կամ ուրբաթալեզր (Մ. Աբելյան—Անդ.): Ցարդ սուրճի մրուրով կամ խաղաթյուղով գուշակություններ ամողները ուրբաթ համարում են այն օրը, երբ գուշակությունն ամենամիշտն է։ Հավատալիք կա, որ ուրբաթ գիշերվա երազն անպայման կատարվում է և այլն։

46. **Խ. Սամոնելյան—Աշվ. աշխ., էջ 65.**47. **Ս. Գևորգյան—Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության, Եր., 1981 թ., էջ 143.**48. **Մ. Ղազարյան—Լշմիածնի հարստությունները—«Էջմիածին» ամս., 1987 թ., Թ—Ծ, էջ 62:**



Ց Ա Ն Կ

«ԷՇՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐՈՒՄ 1991 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ

Ա. ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Վարդանանց ներուամարտի 1540-ամյակի առթիվ, Ա—Բ—Գ 25:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Հայաստանի ազատ ու ինքնիշխան պետության հոչակման առթիվ, Ա—Բ—Գ 28:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Հայաստանաց Առաքելական Եկեղեցու նորահատառ կանոնադրության մասին, Ա—Բ—Գ 31:

Վեհափառ Վազգեն Ա Հայրապետի Խոր տարուայ պատգամը Երևանի նեռուատացոյցից, Ա—Բ—Գ 12:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նեռագիրը ԽՍՀՄ արեգիդենտ մեծամարդ Մ. Ա. Գորբաչյուն, Ա—Բ—Գ 14:

Ամանորի և Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիհար և Կարողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի և բոլոր Եկեղեցիների հոգևոր պետերի միջև փոխանակված ողջուկն նեռագրեր ու գրությունները, Ա—Բ—Գ 15:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի զատկական շնորհավորական նեռագիրը՝ ողջոված բոլոր Եկեղեցիների հոգևոր պետերին, Ա—Բ—Գ 17:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական գիրը Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ՝ ողջոված Հայաստանաց Եկեղեցու նվիրապետական երեք Արքունիքին, թեմակալ բոլոր առաջնորդներին և նկատական համազերին, Ա—Բ—Գ 19:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի զատկական շնորհավորական նեռագիրը՝ ողջոված Հայաստանաց Եկեղեցու նվիրապետական երեք Արքունիքին, թեմակալ բոլոր առաջնորդներին և նկատական համազերին, Ա—Բ—Գ 20:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նարցագրովը Մոնթէալի «Պայքար» օրաթերթի թղթակիցի հետ, Ա—Բ—Գ 21:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նամակը Սյունիաց թեմի առաջնորդ գերշ. Տ. Աստիկի եպս. Արհատակեացանիմ՝ դեսի Տաթի ուստագնացության և Սյունիաց թեմում գիտաժողով անցկացնելու առթիվ, Ա—Բ—Գ 65:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարիգաւատան խոսքը Ս. Էջմիածնի Մայր տաճարում ուղղված Մեծի Տաճի Կիլիկին Գարեգին Բ Կաթողիկոսին, Դ—Ե—Զ 8:

Մածի Տաճի Կիլիկին Գարեգին Բ Կաթողիկոսի խոսքը Ս. Էջմիածնի Մայր տաճարում, Մայր Արքուն Ս. Էջմիածնի այցելության առթիվ, Դ—Ե—Զ 10:

Ամերիկայի հայոց արևելյան թեմի առաջնորդական նամակը Նորին Սուրբ Օծություն Տ. Տ.

Վազգեն Ա. Կաթողիկոսին Ամենայն Հայոց՝ Նյու Յորքում Հայ Սովորելական Սուրբ Եկեղեցու առաջին Խորհրդակցական համագումարը անցկացնելու առթիվ, Դ—Ե—Զ 20: Երրությանի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոն արքեպիսկոպոս Մանուկյանի Երրությանի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոն արքեպիսկոպոս Մանուկյանի խոսքը Ս. Էջմիածնի Մայր տաճարում, Դ—Ե—Զ 22:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի խոսքը Ս. Էջմիածնի Մայր տաճարում Թուրքին հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Գաղանցյանի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի այցելության առթիվ, Դ—Ե—Զ 26:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի խոսքը Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի ամափերջի հանդիսավորակը, Դ—Ե—Զ 33:

Հայկական Իմաստափրական Ընկերության նախագահ, իմաստափրական գիտությունների դոկտոր Գևորգ Երուժանի ուղերձ՝ ուղղված Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ նրան Հայկական Իմաստափրական Ընկերության թիվ մեկ պատվիրությամբ ընտրելու առթիվ, Է—Ը 3:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի շնորհավորական հեռոագիրը մեծահարգ տիար Լուս Տեղ-Պետրոսյանին՝ Հայաստանի Հանրապետության նախագահ ընտրվելու առթիվ, Թ—Ը 3:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կոչը հայ ժողովրդին՝ սեպտեմբերի 21-ին Հայաստանի ամելիամության օգինին քվնարկելու համար, Թ—Ը 4:

Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա.-ի օրինութեան խոսքը Հայաստանի Խորհրդարանում, Թ—Ը 5:

Տ. Տ. Վազգեն Ա. Վեհափառ Հայրապետի խոսքը Երևանի հեռուստացուցից, Թ—Ը 6:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա.-ի խոսքը միունօրինութեան առթի, Թ—Ը 16:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի խոսքը հոգևոր ճեմարանի նոր տսումնական տարվա առթիվ, Ժ—Ը 35:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրինության և բարեմաթյանքի խոսքը Հայաստանի Հանրապետության խորհրդարանում ուղղված Հայաստանի Հանրապետության նորընտիր նախագահ Լուս Տեղ-Պետրոսյանին, ԺԱ—Ը 3:

Կանոնադրություն Հայաստանի Հանրապետության և ներքին Սփյուռքի տարածքի վրա գործող Հայաստանաց Առաքելական Սուրբ Եկեղեցու, ԺԱ—Ը 8:

Բ. ՎԵՀԱՓԱՍՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈՉԵՐԻ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի Սուրբ Ծննդեան քարոզը Մայր տաճարում, Ա—Բ—Գ 3:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա. Հայրապետի գատկական քարոզը Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում, Ա—Բ—Գ 6:

Վեհափառ Հայրապետի քարոզը Մայր տաճարում՝ Հայաստանի Հանրապետության անկախության տարեդարձի առթիվ, Դ—Ե—Զ 3:

Գ. ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Հաղորդագրություն (Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վերահաստատված Գերագույն Հոգևոր Խորհրդի կազմի մասին), Ա—Բ—Գ 33:

Դ. ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Քրիստոս ծնավ... Եվ եղավ լուս, Ա—Բ—Գ 9:

Ի պայծառություն Մայր Եկեղեցու, ԺԱ—Ը 5:

Ե. ՄԱՅՐ ԱԹՈՒԹՈՒՄ

Ամանորյա Բանդիստրյուններ Մայր Աթոռում, Ա—Բ—Գ 34:

Սուրբ Ծննդյան հանդիստրյուններ Մայր Աթոռում, Ա—Բ—Գ 40:

Սուրբ Հարության տոնը Մայր Աթոռում, Ա—Բ—Գ 45:

ԷԴՎԱՐԴ ՄՐԿ ՄԻՐԶԱՆՅԱՆՑԱՆ—Սրբոց Վարդանանց տոնակատարությունը և Վեհափառ

ԷԴՎԱՐԴ ՄՐԿ ՄԻՐԶԱՆՅԱՆՑԱՆ—Սրբոց Վարդանանց տոնակատարությունը և Վեհափառ

Մասնավոր վարդապետական իշխանության շրու աստիճանների տվյալներուն Օշականում,

Ա—Բ—Գ 53:

ՄԽԱՂՈՐԱԿԱՆՆԵՐԻ Բանդիփառում Վեհափառում, Ա—Բ—Գ 56:

Եկեղեցական բնակչության տոնը Մայր Աթոռում, Ա—Բ—Գ 38, ԺԱ.՝ԺԲ 28:

Եկեղեցական բնակչության տոնը Մայր Աթոռում, Ա—Բ—Գ 47:

Հայոքապետի անվանակոչության տարեդարձը Մայր Աթոռում, Ա—Բ—Գ 47:

Մասնավոր վարդապետական իշխանության շրու աստիճանների տվյալներուն Օշականում,

Ա—Բ—Գ 53:

ԷԴՎԱՐԴ ՄՐԿ ՄԻՐԶԱՆՅԱՆՑԱՆ—Մէծի Տան Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոս Մայր

ԷԴՎԱՐԴ ՄՐԿ ՄԻՐԶԱՆՅԱՆՑԱՆ—Մէծի Տան Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոս Մայր

Սրբություն, Դ—Ե—Զ 6:

Սրբություն, Դ—Ե—Զ 6:

Սրբություն, Դ—Ե—Զ 21:

Մայր Սրբություն, Դ—Ե—Զ 21:

Թուրքիա հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգում արքեպիսկոպոս Մասուլյանը

Թուրքիա հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Գազանջանի

այցելությունը Մայր Սրբություն, Դ—Ե—Զ 25:

Մնձ Եղենմի տարեկից Մայր Աթոռում, Դ—Ե—Զ 31:

Քահանայական ձեռնադրություն Ս. Գայանե Վանքում, Դ—Ե—Զ 45:

Քահանայական ձեռնադրություն Ս. Գայանե Վանքում, Դ—Ե—Զ 49:

Քահանայական նմաստափառական ՀԱՅԿԵՐՈՒԹՅԱՆ անդամների այցելությունը Մայր Սրբություն, Ս. Էջ-

Հայկական նմաստափառական ՀԱՅԿԵՐՈՒԹՅԱՆ անդամների այցելությունը Մայր Սրբություն, Ս. Էջ-

Հայկական ծննդյան 88-րդ տարեարձի առջիկ, Ժ—Ժ 20:

Սարկավագական ձեռնադրություն Մայր Աթոռում, Ժ—Ժ 26:

Սարկավագական ձեռնադրություն Մայր Աթոռում, Ժ—Ժ 26:

ուում, 18 դեկտեմբեր 1991 թ., ԺԱ.՝ԺԲ 26:

Զ. ՀՈԳԵՎՈՐ ԺԵՄԱՐԱՆՈՒՄ

Ավարտանության պաշտպանություն հոգևոր ճեմարանում, Ա—Բ—Գ 54:

Ավարտանության պաշտպանություն հոգևոր ճեմարանի 1990—1991 ուսումնական տարվա վակում հանդեսը,

Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի 1990—1991 ուսումնական տարվա վակում հանդեսը,

Դ—Ե—Զ 33:

Հոգևոր ճեմարանի վերաբացման հանդիստրյունը, Ժ—Ժ 33:

Է. ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

S. Ծանչ արքեպիսկոպոս Աճեմենանի քարոզը Ս. Էջմիածնի Մայր տաճարում, Ծրագալուցի ս. պատարագին, Ա—Բ—Գ 69:

S. Ներսէս արքեպիսկոպոս Պողապալյանի քարոզը՝ խոպած Ծաղկագարդի տոնին, Ա—Բ—Գ 73:

S. Խածակ եպիսկոպոս Պարսամենանի քարոզը Ս. Էջմիածնի Մայր տաճարում, Ա—Բ—Գ 76:

Մէծի Տան Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոսի քարոզը Ս. Էջմիածնի Մայր տաճարում, Դ—Ե—Զ 11:

Թուրքիա հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Գազանջանի քարոզը Ս. Էջմիածնի Մայր տաճարում, Դ—Ե—Զ 27:

Քահանայական առջիկ, Է—Ը 24:

S. Ներսէս արքեպիսկոպոս Պողապալյանի քարոզը Մայր տաճարում՝ քահանայական ձեռ-

Տ. Ներսես արքեպիսկոպոս Պողապայանի քարոզը Մայր տաճարում՝ ապրկավագական ձեռնադրության առթիվ, Թ—Ժ 27:

Ը. ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Երուսաղէմի Պատրիարքը համաշխարհային կոչ կ'ընէ Ղարաբաղի հայութեան անվտանգութեան համար, Թ—Ժ 42:

ՎՈԼՈԴԻՑՍ ԱԲՐԱՀԱՄՑԱՆ—Լորեր Երուսաղէմի հայոց Պատրիարքական Աթոռից, Թ—Ժ 43:

ՄԱԿԱՐ ԱԲԴ. ՑՈՎՀԱՆՆԵՍԵԽԱՆ—«Զօրինների արարողութիւն Սրբալոյս Նոր Միստոնի բրնձան ափողով իրաբանաց թէմէն ներս», Թ—Ժ 47:

ՎՈԼՈԴԻՑՍ ԱԲՐԱՀԱՄՑԱՆ—Լորեր Կանադայի հայոց թէմից, Թ—Ժ 50:

Լորեր Գուգարքի թէմից, ԺԱ—ԺԲ 31:

Հարցազրոյց Թօրոնութիւն «Կրօնաւէր Տիկնանց Համախմբումի» ներկայացուցիչ տիկին Զուարք Պոյաճեանի նետ, ԺԱ—ԺԲ 32:

Թ. ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ՊԱՐԳԵՎ ՇԱՀԱՅՑՅԱՆ—Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի 7-րդ համագումարը, Ա—Բ—Գ 88:

Ժ. ԳՐԱԿԱՆ

ԱԼԵՖԻՔ ԻՍՍՀԱԿԵԱՆ—Բեկուննեմի այրի Սուրբ Մանկիկը, Ա—Բ—Գ 82:
ՏԱՄՈՒՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ—Էջմիածին, Թ—Ժ 40:

ԺԱ. ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԲԳԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ—Հայ-ուստական եկեղեցական հարաբերությունների պատմության շորջ, Է—Բ 49:

ԱԶԱԽԱՆՈՒԹԵԱՆ ԶԱՐԵԶ ԵՊՍ.—Ծշմարտութիւնը Ենովայի Վկաներուն մասին, Դ—Ե—Զ 58:
— Ենովայի Վկաներու սուս վկայութիւնները, ԺԱ—ԺԲ 34:

ԱԹԱՅԱՆ Ա. Ա.—Կոմիտասը մշակել էր արդյոք «Հրեշտակալին»-ը թէ ոչ, Դ—Ե—Զ 86:
ԱԶԱՎԱՅՑՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ՎՐԴ.—Պետրոս արքակիսկոպոս Բերդումյան, Է—Ը 33:

ԲԱՂԱԱՍԱՐՅԱՆ ԾՆՈՐՀՔ ԱԲԵՂԱՆ—Հայ Եկեղեցին իր առաքելության նոր ճամապարհներ, Ա—Բ—Գ 79:

ԴԱՄԲԻՆՅԱՆ ՍԵՒԽԱՆ—Հովհաննես արքեպիսկոպոս Ծինարար, Ա—Բ—Գ 119:

ԹՄՔՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ—Երկարի պաշտամունքային հշանակության արձագանքները հայ վայ քրիստոնեության շրջանում, ԺԱ—ԺԲ 75:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Լ.—Հովհանն Ուկերեսինի քարգանությունների բառապաշարի մի քանի առանձնահատկություններ, Դ—Ե—Զ 94:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՆԱՄԹԱՆ ԱԲԵՂԱՆ—Փիլիստիայության մկանում քրիստոնյաների դիրքորոշման հարցը Բ—Գ դարերի քրիստոնեական գրականության մեջ, ԺԱ—ԺԲ 48:

ՂԱԶԱՐՅԱՆ ՄԱՆՅԱՆ—Երկու դիմանմար, Ա—Բ—Գ 124:

ՂԱԶԱՐՈՍՅԱՆ ԱՐՓԵՆԻԿ—Մաշտոց Եղվարդեցի կարողիկոս, Ա—Բ—Գ 109:

ՂԱԶԻՆՅԱՆ ԱՐԾԱԼՈՒՑ—Հավատափն և հավանականը Գրիգոր Նարեկացու կյանքի մասին, ԺԱ—ԺԲ 56:

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ Ա. Ա.—Մովսես Խորենացու պատմագրի խորագիրը և ավարտման թվականը, Թ—Ժ 85:

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԿՄԵՐԵՆ—Կոշավանքը VII—XIV դդ., Ա—Բ—Գ 95: —Հայոց պատմության բախտորոշ 1441 թվականը, Է—Ը 5:

Ի ԹԵՂԱՆ ԲԱԼԱԲԵԿ—Գունվել Է... 70 տարի անց, ԺԱ—ԺԲ 72:
ՄԽԱՆՑԱՆ ՍԻՓԱՆ ՔՀՆ. (ԱՄԲ) —Պևորու Սուպեհալ, Դ—Ե—Զ 71:
ՍՈՒՐԱԴՅԱՆ Կ. Մ.—Գրիգոր Նյուսացու «Յաղագ երգոց»-ը Նարեկացու աղբյուր,
Դ—Ե—Զ 78:

ՆԵՐՍԵՍՅԱՆ ԴՈԿՏ. Տ. ՆԵՐՍԵՍ ՔՀՆ.—Տիեզերական ժողովների և ուժինակությունն ու
անվասպականությունը, Թ—Ժ 55:

ՍՍՀԱԿՅԱՆ ԿԱՐԻՆԵ—Եկեղեցական տոների ժողովրդական ավանդույթը Կումայրիում,
Ա—Բ—Գ 87:

ՍԻՄՈՆՅԱՆ-ԳԱԲՈՒՃՅԱՆ ՔՆՍՐԻԿ—Հորս հուշերից, Թ—Ժ 52:
ՔՅՈՒՆԵՅԱՆ Հ. Հ.—«Վկայութիւնք ի պէտս քարոզութեանց», Ա—Բ—Գ 137, Թ—Ժ 69:
Հայ միջնադարյան կերպարվեստի աստվածաբնության շուրջ, Է—Ը 66: — Ընթեր-
ցումներ նախնյաց մատենագրություններ, Թ—Ժ 75:

ԺԲ. ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎՈԼՈԴԻՅԱՆ ԱԲՐՍՀԱԿՄՅԱՆ—Նվիրալ քահանագործության 40-ամյակ, Դ—Ե—Զ 42:

Տ. ՍՊՈՆՖԱՆԻ քահանա Տիմիլյան, Դ—Ե—Զ 47:

Տ. Տիրայր քահանա Գրիգորյան, Դ—Ե—Զ 51:

Տ. ՄՆԱԿՊ քահանա Արամյան, Դ—Ե—Զ 53:

Տ. Վազգեն արեդա Միրզախանյան, Է—Ը 27:

Տ. Մովսես արեդա Մովսիսյան, Է—Ը 29:


ԺԳ. ՄՍՀԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Հանգիստ տիար Գառնիկ Մկրտչի Քենյայանի, Ա—Բ—Գ 142:

Հանգիստ գերաշնորհ Տ. Սինեն արքեպիսկոպոս Մանուկյանի, Է—Ը 18:

«Էջմիածին» ամսագրի յուրաքանչյուր համարի վերջում տրվում են բովանդակության հա-
մառուս քարգմանությունները ուսերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով:





ЭЧМИАДЗИН
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
(НОЯБРЬ—ДЕКАБРЬ 1991 г.)

1. Слово благословения и пожелания Католикоса всех армян Вазгена I в парламенте Республики Армения, адресованное новоизбранному президенту Республики Армения Левону Тер-Петросяну, 11 ноября 1991 г. (стр. 3—4).
2. Во светлость Первопрестольной Церкви (редакционная)—(стр. 5—7).
3. Устав Армянской Апостольской Церкви, действующий на территориях Республики Армения и внутреннего Спюрка (стр. 8—25).
4. Хиротония во архимандрита в первопрестольном Эчмиадзине, 18 декабря 1991 г. (стр. 26—27).
5. Церковная хроника первопрестольного Эчмиадзина за ноябрь—декабрь месяцы (стр. 28—30).
6. Вести из Гугаркской епархии (стр. 31).
7. Интервью с представительницей «Объединение Небожных Дам» госпожой Зварт Пояджян (стр. 32—33).
8. Епископ Зарэ Азнавурян—Ложные свидетельства Свидетелей Иеговы (оппонирование)—(стр. 34—47).
9. Иеромонах Наташ Оганесян—Вопрос ориентации христиан касательно философии в христианской литературе II—III вв. (исследование)—(стр. 48—55).
10. Аршалуйс Казинян—Достоверное и вероятное о жизни Григора Нарекаци (исследование)—(стр. 56—71).
11. Балабек Мелян—Найдено... спустя 70 лет (статья)—(стр. 72—74).
12. Ованес Такукиян—Отзвуки культового значения железа в раннехристианском периоде армян (исследование)—(стр. 75—84).
13. Список отпечатанных тем в журнале «Эчмиадзин» в течение 1991 года (стр. 85—89).



„ETCHMIADZIN“

OFFICIAL MONTHLY OF HOLY ETCHMIADZIN
(NOVEMBER—DECEMBER 1991)

1. Address of blessing and good wish of His Holiness Vasken I, Catholicos of All Armenians, in the parliament of the Republic of Armenia, addressed to the newly elected president of the Republic of Armenia Mr. Levon Ter-Petrossian, 11-th November 1991 (pp. 3—4).
2. «For the splendor of the Mother Church» (editorial)—(pp. 5—7).
3. Constitution which works in the Armenian Apostolic Holy Church of the Republic of Armenia and the interior diaspora (pp. 8—25).
4. Delivery in the Mother See of four degrees of special doctrinal authority, 18-th December 1991 (pp. 26—27).
5. Divine ilturgy services and sermons delivered in the Holy Cathedral and description of church festivities in the Holy See during the months of November—December 1991 (pp. 28—30).
6. News from the diocese of Googark (pp. 31).
7. Interview with Mrs. Zevart Boyadjian, the representative of the «Religious ladies' assembly» of Toronto (pp. 32—33).
8. **Bishop Zareh Aznavorian**—«The lying testimony of the Jehovah's witnesses» (controversy)—(pp. 34—47).
9. **Reverend Nathan Hovhannessian**—«The question of the christian's position in regard of the philosophy in the christian literature of the II—III centuries» (study)—(pp. 48—55).
10. **Arshalooy Ghazinian**—«The certain and the probable about the life of Grigor Naregatzy» (study)—(pp. 56—71).
11. **Balabeg Melian**—«It has been found... after 70 years» (article)—(pp. 72—74).
12. **Hovhannes Takoogian**—«The echoes of the meaning of iron's worship in the period of the early armenian christianity» (study)—(pp. 75—84).
13. List of materials printed in the «Etchmiadzin» monthly during the year 1991 (pp. 85—89).



„ETCHMIADZINE“
ORGANE OFFICIEL DU SAINT—SIEGE D'ETCHMIADZINE
(NOVEMBRE—DECEMBRE 1991)

1. Bénédiction et souhaits de Sa Sainteté Vasken Ier adressés à M. Lévon Ter-Pétrossian au Parlament de la République d'Arménie à l'occasion de son élection au poste de président (11 novembre 1991)—(pp. 3—4).
2. **Editorial:** «Pour la prospérité de notre mère Eglise» (pp. 5—7).
3. Règlement de l'Eglise apostolique arménienne fonctionnant en Arménie et dans les pays de la CEI (pp. 8—25).
4. Collation des quatre degrés de docteur majeur en théologie au Saint-Siège d'Etchmiadzine (18 décebre 1991)—(pp. 26—27).
5. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours des mois novembre—décembre 1991 (pp. 28—30).
6. Nouvelles du diocèse de Gougark (p. 31).
7. Interview accordée à Mme Zevarte Boyadjian, représentant de l'«Union des Dames Pieuses» à Toronto (pp. 32—33).
8. **Évêque Zareh Aznavorian**—«Les faux témoignages des Témoins de Jéhovah» (controverse)—(pp. 34—47).
9. **Père Nathan Hovhannessian**—«Prise de position des chrétiens vis-à-vis de la philosophie dans la littérature chrétienne des IIe—IIIe siècles» (étude)—(pp. 48—55).
10. **Archalouïs Ghazinian**—«Le vrai et le probable sur la vie de Grégoire de Narek» (étude)—(pp. 56—71).
11. **Balabek Mélian**—«Il a été trouvé... après 70 ans» (article)—(pp. 72—74).
12. **Hovhannès Takoukian**—«Les échos de la signification cultuelle du fer en Arménie pendant les premiers siècles du christianisme» (étude)—(pp. 75—84).
13. Table des matières publiées dans la revue «Etchmiadzine» au cours de l'année 1991 (pp. 85—89).



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

S. S. Վագեն Ա. Կարողիկոսի խօսքը Հայաստանի նորընտիր նախագահին	3
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—ի պայծառություն Մայր Եկեղեցու	5
Կանոնադրություն Հայաստանի Հանրապետության և ներքին Սիյունքի տարածքի վորոշությանց Առաջնական Սուբդիկատ Մորք Եկեղեցու	8
Մասնավոր վարդապետական իշխանության չորս աստիճանների տվյալները Մայր Եկեղեցու	26
Աթոռում	28
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բևմ. Խորեգ	31
Լորեկ Գուգարքի թեմից Հարցազրոյց «Թօրոնթոյի «Կրօնաւէր Տիկնանց Համախրում» Անդկապացուցի	32
տիկնին Զուարք Պոյանանի մեջ	34
ԶԱՐԵՎ ԵՊՈ. ԱԶՆԱԿՈՐԵԱՆ—Եմովայի Վկաներու սուս վկալութիւնները	48
ԶԱՐԵՎ ԱԲԵՂԱ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ—Փիլիստիայուրյան նկատմամբ քրիստոնական ԱԲԵՂԱ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ—Փիլիստիայուրյան մեջ Աերի դիրքորոշման հարցը Բ—Գ դարերի քրիստոնեական գրականության մեջ ԱՐԾԱԿՈՒՅՑ ՂԱԶԻՆՅԱՆ—Հավաստին և հավանականը Գրիգոր Նարեկացու կանքի մասին	56
ԲԱԱԱԲԵԿ ՄԵԼՅԱՆ—Գտնվել է... 70 տարի անց	72
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԹԱՔՈՒԿՅԱՆ—Երկարի պաշտամունքային նշանակության արձագանքները հայ վաղ քրիստոնեության շրջանու	75
Ցանկ «Եղմիածին» ամսագրու 1991 թվականի ընթացքու տպագրված հոդվածների	85
«Եղմիածին» օֆիցիալինայի յարագալ Էջմիածնի Կատոլիկոսաւ	90
«Etchmiadzin» official monthly of Holy Etchmiadzin	91
«Եղմիածին» organe officiel du Saint-Siège d'Etchmiadzine	92

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԷՉՄԻԱԾԻՆ
«ԷՇՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Республика Армения, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie.

Հանձնված է արտադրության 20.01.1992 թ.: Ստորագրված է տպագրության 6.04.1992 թ.:
Տպագրական 5,87 մամով, թուղթ՝ 60×84¹/₈, պատվեր 3:

Մայր Ալոն Սուրբ Էջմիածնի տպարան